

# ԻՄԱՅԻՐ ԵՎ ԳՈՐԾԻՐ



Երևան 2007

2007

## ԻՄԱՑԻՐ ԵՎ ԳՈՐԾԻՐ

հեղինակ՝ Սերգեյ Պողոսյան

Հրատարակվել է  
“Միլենիում” Կրթական Հետազոտական  
Ասոցիացիայի “Իմացիր և Գործիր” ծրագրի  
շրջանակներում ԵԱՀԿ –ի աջակցությամբ  
Ծրագրի ղեկավար Դ. Մանուկյան  
Ծրագրի համակարգող՝ Ա. Բարեղամյան  
Ձևավորող՝ Կ. Խզմալյան

Երևան 2007



Գիրքը տպագրվել է Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության աջակցությամբ:

Գրքում արտահայտված կարծիքները և տեսակետները պատկանում են հեղինակին և կարող են չհամընկնել ԵԱՀԿ տեսակետներին:

## ՆԱԽԱԲԱՆ

Սույն գիրքը հրատարակվել է «Միլենիում» Կրթական Հետազոտական Սոցիալաբանության «Իմացիր և Գործիր - II» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Եվրոպայում Անվտանգության և Համագործակցության Կազմակերպության /ԵԱՀԿ/ «Կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացին հասարակության ներգրավման նպատակով հասարակական ընդունա-րանների ցանցի ստեղծման» ծրագրի հովանու ներքո:

Երկար տարիներ Հայաստանի համայնքներում աշխատելու ընթացքում մեր կազմակերպությունը բազմիցս բախվել է տեղական ինքնակառավարման մարմինների, պետական և ոչ պետական հանրային նշանակության կազմակերպությունների, պաշտոնյաների և համայնքի անդամների միջև առկա անջրպետին, որը բնակչության անտեղյակության, օրենքների, գործող այլ իրավական ակտերի չիմացության կամ թերի կիրառման արդյունք է:

Ելնելով վերը նշվածից՝ «Միլենիում» կողմից մշակվեց փորձնական ծրագիր, որն ուղղված է կոռուպցիայի դեմ պայքարին՝ հասարակության տեղեկացվածության մակարդակի և համայնքի անդամների և տեղական ինքնակառավարման մարմինների միջև փոխհարաբերությունների արդյունավետության բարձրացման միջոցով: Ելնելով 2006թ գործունեության արդյունքում ձեռք բերված փորձից՝ 2007թ «Միլենիումը» շարունակում է աշխատանքը Գեղարքունիքի մարզում, ընդլայնելով գործունեության բնագավառները և հետաքրքրության շրջանակները:

«Իմացիր և Գործիր» տեղեկատվական ձեռնարկը հանդիսանում է 2006 թ «Միլենիում» Կրթական Հետազոտական Սոցիալաբանության կողմից հրատարակված «Տեղական Ինքնակառավարման Մարմինների Իրավունքները և Պարտականությունները» ձեռնարկի լրամշակված և նորացված վերահրատարակությունը: Այս ձեռնարկը պարունակում է քաղաքացիների պաշտոնյաների հետ առօրյա շփման ընթացքում ծագող հարցերի համառոտ պատասխաններ:

Հուսով ենք, որ այն կնպաստի ուժեղ և տեղեկացված հասարակություն ձևավորելու գործընթացին:

*Դինա Սանուկյան*  
*«Միլենիում» Կրթական Հետազոտական Սոցիալաբանության*

## **ԳՈՒՅՔԱՀԱՐԿ**

### **Ինչ է գույքահարկը**

Գույքահարկը սեփականության իրավունքով Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում ստեսծված կազմակերպությունների ու դրանց կողմից Հայաստանի Հանրապետությունից դուրս ստեղծված կազմակերպություններին, ՀՀ քաղաքացիներին, օտարերկրյա քաղաքացիներին, քաղաքացիություն չունեցող անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող (անշարժ գույք և փոխադրամիջոցներ), գույքի համար օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

### **Ինչպես է որոշվում գույքահարկի չափը**

Շինությունների հարկման չափը որոշելու համար հիմք է ընդունվում դրանց կադաստրային արժեքը /տես հավելվածը/: Շինությունների գնահատումը /վերագնահատումը/ կատարվում է երեք տարին մեկ անգամ անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից, որը և հիմք է ընդունվում տվյալ տարվան հաջորդող երեք տարիների հարկման բազայի համար, իսկ փոխադրամիջոցների հարկման բազա է համարվում փոխադրամիջոցի քաշող շարժիչի հզորությունը /ձիաուժ, կիլովատ/: Մեկից ավել շարժիչների առկայության դեպքում գույքահարկով հարկման բազա է համարվում բոլոր քաշող շարժիչների գումարային հզորությունը (տես հավելվածը): Ֆիզիկական անձանց հաշվետու ժամանակաշրջան է համարվում օրացուցային տարին:

### **Ինչպես և ում է վճարվում գույքահարկը**

Տեղական ինքնակառավարման մարմինները հարկային մարմիններից և անշարժ գույքի կադաստր վարող մարմիններից

ստացված տեղեկությունների հիման վրա հողի հարկ վճարողներին մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 1-ը, իսկ շենքերի, շինությունների սեփականատերերին՝ օրենքով սահմանված գնահատման /վերագնահատման/ տարվա դեկտեմբերի 1-ը, ներկայացնում են գույքահարկի վճարման ծանուցագրերը, որոնց համաձայն էլ հարկատուները կատարում են վճարումները: Եթե հարկատուն /սեփականատերը/ համաձայն չէ ծանուցագրում նշված գումարի հետ, ապա հաշվարկի ճշտման նպատակով կարող է դիմել հարկերի համար տեղեկություններ տվող հաշվառող և գույքագրող լիազոր մարմիններին (հարկային տեսչություն, անշարժ գույքի կադաստրի ստորաբաժանում): Գույքահարկը վճարվում է տվյալ համայնքի բյուջեն, իսկ համայնքի տարածքից դուրս գտնվող շինությունների համար՝ պետ. բյուջե: Փոխադրամիջոցների գույքահարկը կազմակերպությունները վճարում են իրենց հաշվառման վայրի համայնքի բյուջե, իսկ փոխադրամիջոցների սեփականատեր ֆիզիկական անձինք՝ իրենց հաշվառման (գրանցման), իսկ դրա բացակայության դեպքում, իր հիմնական բնակության վայրի համայնքի բյուջե, եթե հիմնական բնակության վայրը ՀՀ տարածքից դուրս է, ապա փոխադրամիջոցի գտնվելու հիմնական վայրի համայնքի բյուջե:

Համայնքի ղեկավարը կազմակերպում է գույքահարկերի վճարումների ընդունումը համայնքապետարանի աշխատողների (վճարում ընդունողների) միջոցով: Համայնքի բյուջե կատարված վճարումների մուտքագրումը կատարվում է երկու եղանակով՝

1. վճարումների կանխիկ ընդունման միջոցով (միայն ֆիզիկական անձանցից)
2. բանկային կամ փոստային համակարգերի միջոցով

Գույքահարկի կանխիկ վճարումների ժամանակ վճարում ընդունողը (պաշտոնատար անձը) պարտավոր է գրիչով և ընթեռնելի ձեռագրով լրացնել անդորրագիրը երկու օրինակով վճարողին հանձնել անդորրագրի առաջին օրինակը՝ իր մոտ

պահելով երկրորդ օրինակը՝ որպես վճարումը հավաստող ապացույց: Ֆիզիկական անձի կողմից բանկային կամ փոստային համակարգի միջոցով համապատասխան համայնքի բյուջե գույքահարկի վճարման դեպքում, որպես վճարումը հավաստող փաստաթուղթ է հանդիսանում տվյալ բանկի կամ փոստային ծառայության կողմից տրված անդորրագիրը:

Ֆիզիկական անձանց պատկանող հարկվող օբյեկտի կամ նրա մի մասի օտարման դեպքում նոր սեփականատիրոջն են անցնում չմարված հարկային պարտավորություններն ամբողջությամբ, իսկ նրա մահվան դեպքում՝ նոր սեփականատերը (ժառանգը) պարտավոր է մարել ժառանգատուի մահվան օրվանից հետո առաջացած գույքահարկի գծով առաջացած պարտավորությունները մինչև սեփականության (ժառանգության) ձևակերպման ամսը:

### **Ինչպե՞ս են սահմանվում գույքահարկի արտոնությունները**

Գույքահարկի արտոնությունները (գույքահարկից լրիվ կամ մասնակի ազատում) սահմանելու իրավունքը պատկանում է համայնքի ավագանուն: Առանձին հարկատուների համար գույքային արտոնությունները համայնքի ավագանին կարող է սահմանել միայն համայնքի բյուջեի հաստատումից հետո: Արտոնությունը սահմանվում է՝

1. համայնքի ղեկավարի կամ համայնքի ավագանու նախաձեռնությամբ
2. հարկատուի դիմումի հիման վրա

Առաջին դեպքում նախաձեռնողը համայնքի ավագանու քննարկման է ներկայացնում իր առաջարկությունը և այն հիմնավորող հանգամանքները, արտոնության գումարի մեծությունը, իսկ երկրորդ դեպքում՝ հարկատուն համայնքի ղեկավարին է ներկայացնում գույքահարկի գծով արտոնություն ստանալու վերաբերյալ դիմում, որտեղ նշում է հարկային արտոնության տեսակը, արտոնության գումարը, հիմնավորում

Համայնքի ղեկավարը հարկային արտոնության տրամադրմանը համաձայնելու դեպքում մեկամսյա ժամկետում ճշտում է հարկատուի դիմումում կատարված հիմնավորումների արժանահավաստությունը, հաշվարկում հարկային գումարի արտոնության մեծությունը, որից հետո իր կարծիքը և դիմումատու հարկատուի ներկայացրած փաստաթղթերը ներկայացնում է ավագանու քննարկմանը, իսկ հարկային արտոնության տրամադրմանը չհամաձայնելու դեպքում՝ փաստաթղթերը վերադարձնում է՝ գրավոր նշելով չհամաձայնելու պատճառները: Եթե հարկատուն մեկ ամսվա ընթացքում համայնքի ղեկավարից չի ստանում գրավոր որևէ պատասխան կամ ստանում է նրա գրավոր մերժումը, ապա 20-օրյա ժամկետում համայնքի ղեկավարին ուղղված իր դիմումի և փաստաթղթերի կրկնօրինակները, իսկ մերժման պատասխանի առկայության դեպքում՝ նաև մերժման վերաբերյալ իր առարկությունները, դիմումով ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը: Ավագանին սահմանված կարգով հարցը քննում է և կայացնում որոշում՝ արտոնություն տրամադրելու կամ այն մերժելու մասին:

### **Ինչպե՞ս խոտանել փոխադրամիջոցը**

Ֆիզիկական անձանց գույքահարկի պարտկանությունները դադարում են հարկման ենթակա գույքի նկատմամբ սեփականության իրավունքի դադարման կամ մահվան դեպքերում: Փոխադրամիջոցների գույքահարկի վճարման պարտավորությունները դադարում են նաև դրանց խոտանման դեպքերում:

Ֆիզիկական անձանց պատկանող, հարկման օբյեկտ համարվող տրանսպորտային միջոցի խոտանումը շահագործման համար ոչ պիտանի տրանսպորտային միջոցը ՀՀ ոստիկանության պետական ավտոտեսչության գրանցման քննական ստորաբաժանումի հաշվառումից հանելն է: Փոխադրամիջոցը խոտանելու համար սեփականատերը կամ



նրա կողմից լիազորված անձը ոստիկանության պետական տեսչության ստորաբաժանումներին է ներկայացնում՝

- ա) դիմում տրանսպորտային միջոցը խոտանելու մասին
- բ) տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (լիազորված անձի) անձնագիրը
- գ) տրանսպորտային միջոցի գրանցման վկայագիրը՝ տեխնիկական անձնագիրը:
- դ) պետհամարանիշները
- ե) հաշվառումից հանելու համար պետտուրքի գանձման անդորրագիրը:

Ձույզ համարանշների կորստի դեպքում տրանսպորտային միջոցը խոտանելու մասին դիմումին կցվում է նաև դրա կորստյան փաստը հավաստող տեղեկանք, որն ըստ քաղաքացու դիմումի տրվում է ՀՀ ոստիկանության համապատասխան բաժնի կողմից: Փոխադրամիջոցի մեկ համարանիշի կամ գրանցման վկայագրի կորստյան դեպքում դրա մասին նշում է կատարվում տրանսպորտային միջոցը խոտանելու մասին դիմումում: Այդ դեպքում մեկ համարանիշի կամ գրանցման վկայագրի բացակայությունը չի կարող հիմք հանդիսանալ խոտանումը մերժելու համար: Խոտանման համար նախատեսված տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի գնումը չի կատարվում: ՀՀ Ոստիկանության պետական տեսչության գրանցման քննական ստորաբաժանումները տրանսպորտային միջոցի խոտանումը կատարում են դրա մասին դիմումը ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում և կատարում են համապատասխան հաշվառում: Խոտանված տրանսպորտի սեփականատիրոջ ցանկության դեպքում Ոստիկանության պետական տեսչությունը նրան է հատկացնում խոտանված տրանսպորտային միջոցի բաղադրիչ մասերի՝ թափքի ամրաշրջանակի, շարժիչի պատկանելության վերաբերյալ փաստաթուղթ, որը հիմք է հետագայում տնօրինելու համար:

Օրենք N ՀՕ-491-Ն  
ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ  
(1-ԻՆ ՄԱՍ)

Ընդունվել է 26.12.2002  
Վավերացվել է 30.12.2002  
Ուժի մեջ է մտել 18.01.2003

## ՀՈՂՎԱՍԾ 6. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

Շինությունների համար գույքահարկը հաշվարկվում է հետևյալ տարեկան դրույքաչափերով՝

1. հասարակական նշանակության շինությունների /սոցիալական սպասարկման, վարչական, հասարակական կազմակերպությունների տեղակայման շինություններ/, արտադրական նշանակության շինություններ, նոր կառուցված, ձեռք բերած և անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնի կողմից հաշվառված ու գնահատված շինությունները, որոնք դեռևս չեն ստացել իրավունքների պետական գրանցում, ինչպես նաև ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների համար՝ հարկման բազայի 0.3 տոկոսը,
2. բնակելի նշանակության շինությունները, բազմաբնակարան բնակելի շենքը, բազմաբնակարան շենքի ոչ բնակելի տարածքը, անավարտ /կիսակառույց/ շինությունները/ հարկվող օբյեկտ համարվող շինությունների համար՝

Հարկման բազա	Հարկի դրույքաչափը
Մինչև 3 մլն դրամը ներառյալ	Հարկման բազայի 0 տոկոսը
3 մլն դրամից մինչև 10 մլն դրամը ներառյալ	100 դրամ՝ գումարած հարկման բազայի 3 մլն դրամը գերազանցող գումարի 0.1 տոկոսը
10 մլն դրամից մինչև 20 մլն դրամը ներառյալ	7100 դրամ՝ գումարած հարկման բազայի 10 մլն

20 մլն դրամից մինչև 30 մլն դրամը ներառյալ	դրամը գերազանցող մասի 0.2 տոկոսը 27100 դրամ՝ գումարած հարկման բազայի 20 մլն դրամը գերազանցող մասի 0.4 տոկոսը
30 մլն դրամից մինչև 40 մլն դրամը ներառյալ	67100 դրամ՝ գումարած հարկման բազայի 30 մլն դրամը գերազանցող մասի 0.6 տոկոսը
40 մլն դրամից ավելի	127100 դրամ՝ գումարած հարկման բազայի 40 մլն դրամը գերազանցող մասի 1.0 տոկոսը

1. ավտոտնակ համարվող շինությունների համար՝ հարկման բազայի 0.2 տոկոսը:

**ՀՈՂՎԱԾ 7. ՓՈԽԱՂՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ**

1. Ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների համար գույքահարկը հաշվարկվում է հետևյալ տարեկան դրույքաչափերով՝
  1. մինչև 10 նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենաների համար, եթե հարկման բազան՝
    - 1-ից 120 ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 200 դրամ,
    - 121-ից 250 ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 300 դրամ, ինչպես նաև 150 ձիաուժի գերազանցող յուրաքանչյուր մեկ ձիաուժը համար 1 լրացուցիչ 1000 դրամ,
    - 251 և ավելի ձիաուժ է, ապա յուրաքանչյուր

- ձիաուժի դիմաց՝ 500 դրամ, ինչպես նաև 150 ձիաուժը գերազանցող յուրաքանչյուր մեկ ձիաուժի համար 1 լրացուցիչ՝ 1000 դրամ,
2. 10 և ավելի նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենաների և բեռնատար ավտոմեքենաների համար, եթե հարկման բազան՝
    - 1-ից 200 ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 100 դրամ,
    - 201 և ավելի ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 200 դրամ:
  2. Մոտոցիկլետների համար գույքահարկի տարեկան գումարը հաշվարկվում է հարկման բազայի յուրաքանչյուր ձիաուժի դիմաց 40 դրամ դրույքաչափով:
  3. Ջրային փոխադրամիջոցների համար գույքահարկի տարեկան դրույքաչափը հաշվարկվում է հարկման բազայի յուրաքանչյուր ձիաուժի դիմաց 150 դրամ դրույքաչափով:
  4. Մինչև երեք տարվա վաղեմության ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների համար գույքահարկը հաշվարկվում է 100 տոկոսով:  
 Երեք տարուց ավելի վաղեմության ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների համար գույքահարկի հումարը երրորդ տարվան հաջորդող յուրաքանչյուր տարվա համար պակասեցվում է հարկի գումարի 10 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան հարկի գումարի 50 տոկոսը: Ընդ որում, վաղեմության ժամկետը որոշելու համար հիմք է ընդունվում ավտոմոբիլային տրանսպորտի միջոցի թողարկման տարեթիվը:
  6. Բեռնատար ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների վաղեմության ժամկետի 20-րդ տարին լրանալուց հետո տվյալ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցի համար գույքահարկ չի

հաշվարկվում և չի վճարվում:

6. Սույն հոդվածում նշված փոխադրամիջոցների հարկման բազան կհլրվատերով արտահայտված լինելու դեպքում գույքահարկի տարեկան գումարը որոշվում է՝ համապատասխան դրույքաչափի նկատմամբ կիրառելով 1.36 գործակից:

## ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ և ՎՃԱՐՆԵՐ

### Ինչ է տեղական տեղական տուրքը և ով է այն սահմանում

Տեղական տուրքը տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքով սահմանված լիազորությունների իրականացման դիմաց սահմանված կարգով և չափով համայնքի բյուջե գանձվող պարտադիր գանձույթ է : Տեղական տուրքերի չափերը սահմանվում են նախքան համայնքի տարեկան բյուջեի հաստատումը: Համայնքի ղեկավարը ավագանուն է ներկայացնում տեղական տուրքերի գանձման չափի, ժամանակի, պարբերականության մասին որոշման նախագիծը, որն հաստատվում է ավագանու կողմից: Տեղական տուրքերի դրույքաչափերը սահմանվում են ղեկավարվելով օրենքով սահմանված “նվազագույն և առավելագույն չափերով”, (տես՝ դրույքաչափերը, հավելված): Համայնքի տարածքում գործող տուրքերի չափերը միասնական են բոլոր վճարողների համար և սահմանվում են ողջ բյուջետային տարվա համար, չեն կարող տարվա ընթացքում փոփոխվել, ոչ համայնքի ղեկավարի և ոչ էլ ավագանու նախաձեռնությամբ:

Համայնքի տարածքում ոգելից խմիչքների, ծխախոտի արտադրանքի, բացօթյա վաճառքների, տոնավաճառների կազմակերպման, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվությունները շահագրգիռ անձանց դիմումների հիման վրա տալիս է համայնքի ղեկավարը: Նա համապատասխան թույլտվություն է տալիս նաև խաղատների, բաղնիքների, սաունաների, զվարճանքի, շահումով խաղեր կազմակերպող օբյեկտներին, ժամը 24-00 – ից հետո աշխատելու համար:

Տեղական տուրքեր են սահմանվում նաև համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու, մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու (բացի երթուղային տաքսուց) նպատակով:

### Ինչ է տեղական վճարը

Տեղական վճարը տեղական ինքնակառավարման մարմինների

օրենքով սահմանված լիազորությունների իրականացման պայմանավորված գործողությունների համար օրենքով սահմանված կարգով և չափով համայնքի բյուջե գանձվող պարտադիր գանձույթ է: Տեղական վճարը կատարվում է շահագրգիռ անձանց դիմումի հիման վրա ինքնակառավարման մարմինների կողմից նրանց մատուցած ծառայությունների դիմաց: Տեղական վճարները համայնքներում կարող են սահմանվել համայնքի տարածքում շինարարական աշխատանքների հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու, տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողեր հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալություն տրամադրելու ժամանակ չափազրական և նմանատիպ այլ ծառայությունների դիմաց փոխհատուցումների համար, ինչպես նաև իրենց կողմից կազմակերպված մրցույթների և աճուրդների կազմակերպման մասնակիցներից գանձվող վճարներ , դրանց մասնակցության համար:

Տեղական վճարների դրույքաչափերը սահմանվում են տվյալ գործողությունը (ծառայությունը) իրականացնելու համար անհրաժեշտ նվազագույն ծախսերի չափով, որոնք սահմանվում են համայնքի ղեկավարի ներկայացմամբ համայնքի ավագանու կողմից հաստատվելուց հետո: Մահմանված չափից ավել վճարված տեղական տուրքերը և վճարները վերադարձվում են համայնքի ղեկավարին շահագրգիռ անձանց տրված դիմումների հիման վրա, ինչպես նաև այն դեպքերում, երբ համապատասխան գործունեություն ծավալելու մասին դիմումը մերժվել է կամ հետ է վերադարձվել դիմողին:

Համայնքի ավագանին, ղեկավարի նարկայացմամբ իրավունք ունի որոշակի անձանց ազատել տեղական տուրքերի և վճարների կատարումից և նրանց փոխարեն դրանք կատարել համայնքի բյուջեից: Նմանատիպ արտոնություններից օգտվելու համար շահագրգիռ անձը դիմում է համայնքի ղեկավարին:

ՀՀ Ազգային Ժողով, Օրենք N ՀՕ-185  
ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ  
ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ընդունվել 26.12.1997  
Վավերացվել է 09.01.1998  
Ուժի մեջ է մտել 11.01.1998

## **ՀՈՂՎԱԾ 10. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԴՐՈՒՑՔԱՉԱՓԵՐԸ**

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ հիմնական օբյեկտների համար՝

- ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ մինչև 15000 դրամ.
- բ) սույն կետի “ա” ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝
- բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 30000 դրամ,
- բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 50000 դրամ,
- բգ) 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 70000 դրամ.



ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

- գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 3000 դրամ
- դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 5000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

- ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ մինչև 3000 դրամ.
- բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն

կետի “ա” ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է մինչև 5000 դրամ:

4. Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

ա) հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 0-ից 12.500 դրամ.

բ) ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 0-ից 17.500 դրամ:

5. Համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

- ա) գազի և վառելիքաքսայուղային նյութերի համար՝ ընթացիկ տարվա համար՝ 50.000-350.000 դրամ,
- բ) գյուղատնտեսական մթերքների համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 0-250 դրամ,
- գ) այլ ապրանքների (այդ թվում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի) վաճառքի համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 0-25000 դրամ: 5.1 սույն օրենքի 7-րդ հոդվածի «ժ» ենթակետով նախատեսված թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար 50.000 դրամ:

6. Համայնքի տարածքում խաղատները, հանրային սննդի օբյեկտները, բաղնիքները (սաունաները), զվարճանքի օբյեկտները՝ ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

- ա) խաղատների համար՝ 500 000 – 1 000 000 դրամ
- բ) շահումներով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 – 500 000 դրամ,
- գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 – 500 000 դրամ,
- դ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 – 100 000 դրամ:

7. Համաքաղաքային կանոններին համապատասխան՝ Երևան քաղաքի և քաղաքային համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության

համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 0 – 5000 դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

- ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000–2000 դրամ,
- բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 – 3500 դրամ,
- գ) այլ արտաքին գովազդի համար՝ 500 – 1500 դրամ,
- դ) մինչև 2006 թվականի հոկտեմբերի 1-ը՝ ծխախոտի արտաքին գովազդի համար՝ 3000 – 5000 դրամ,
- ե) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

9. Համայնքի տարածքում փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0 – 10 000 դրամ:

Համայնքի տարածքում (բացառությամբ թաղային համայնքների) մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0 – 10000 դրամ:

կետերի) սահմանված դրույքաչափերի վերին սահմանները քաղաքային համայնքներում կարող են լինել 1.5, իսկ թաղային համայնքներում՝ 1.75 անգամ ավելի:

- 11.1 Սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ, լեռնային և բարձրլեռնային համայնքներում հաշվարկվում են 0.3, գյուղական այլ համայնքներում՝ 0.5, քաղաքային այլ համայնքներում՝ 1.0, իսկ թաղային համայնքներում՝ 5.0 գործակիցների կիրառմամբ:

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑ

### Ինչ է ինքնակամ կառույցը

1. Ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը:
2. Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի նկատմամբ ճանաչվում է պետության կամ համայնքի սեփականությունը, անկախ նրանից, թե ով է այն կառուցել:

(ՀՀ քաղ. օր. 188հ.)

### Ինչպես օրինականացնել ինքնակամ կառույցը

Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատվել է ՀՀ կառավարության 18.05. 2006 թվականի N912- ն որոշումով: Կարող են ճանաչվել համայնքներում՝ համայնքի ղեկավարների, իսկ վարչական տարածքներից դուրս գտնվող ինքնակամ կառույցները՝ մարզպետների որոշումներով: Օրինականացման ենթակա չեն այն Ինքնակամ կառույցները՝

1. Որոնց պահպանելը խախտում է այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը, կամ վտանգ է ներկայացնում քաղաքացիների կյանքին և առողջությանը Եթե դրանք ենթակա են քանդման
2. Որոնք կառուցված են ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ
3. հողվածով սահմանված հողամասերի վրա (հողամասեր ,որոնց օրենքով արգելված է սեփականության իրավունքով փոխանցելը) ինչպես նաև ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվ տանգույթյան գոտիներում կամ կառուցապատված են

քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Ինքնական կառույցները բաժանվում են երկու խմբի՝

1. Քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերում գտնվող ինքնական կառույցներ
2. Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնական կառույցներ: Ինքնական կառույցների օրինականացման վճարների նկատմամբ, ըստ գույքի գտնվելու վայրի /տարածագնահատման գոտի/ կիրառվում է ՀՀ կառավարության 17.04.03 թ. N470 –Ն որոշումով հաստատված գործակիցները:

*ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ*

*ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ,  
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ, ԱՅԳԵՏՆԱԿՆԵՐԻ  
(ԱՄԱՌԱՆՈՅՆԵՐԻ) ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՑ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,  
ԱՌԱՆՁԻՆ ԿԱՆԳՆԱԾ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՈՒ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ  
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ  
ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ  
ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ  
(ՏԱՐԱԾԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՏԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ)*

Գոտին	1	2	3	4	5	6	7	8
Գործակիցը	1.0	0.80	0.64	0.51	0.41	0.32	0.26	0.21
Գոտին	9	10	11	12	13	14	15	16
Գործակիցը	0.17	0.13	0.11	0.086	0.069	0.055	0.044	0.035

**Քաղաք Երևան**

- I 1,0 Առաջին գոտու տարածքը սահմանագծվում է հետևյալ փողոցներով՝ Մաշտոցի պողոտայի հետ Սարյան փողոցի հատումից, Սարյան, Մոսկովյան փողոցներով մինչև Բաղրամյան պողոտայի հետ հատումը, Բաղրամյան պողոտայով մինչև Իսահակյան պողոցի հետ հատումը, Իսահակյան և Ալեք Մանուկյան փողոցներով մինչև Վարդանանց փողոցի հետ հատումը, այնուհետև Վարդանանց փողոցով մինչև Խանջյան փողոց, Խանջյան փողոցով մինչև Բուզանդի փողոցի հետ հատումը, Բուզանդի փողոցով մինչև Հանրապետության փողոցի հետ հատումը, այնուհետև Հանրապետության փողոցով մինչև Խորենացու փողոցի հետ հատումը, այնուհետև Խորենացու փողոցով մինչև Մաշտոցի պողոտայի և Սարյան փողոցի հետ հատումը:
  
- II 0,80 Երկրորդ գոտու ներքին սահմանները համընկնում են առաջին գոտու արտաքին սահմանագծերի հետ, իսկ արտաքին սահմաններն անցնում են՝ սկսած Սարյան փողոցի հետ Բուզանդի (Կ.Դեմիրճյան) փողոցի հատումից, Բուզանդի, Ֆրիկի, Դ.Դեմիրճյան փողոցներով, մինչև Մարշալ Բաղրամյան պողոտայի հետ հատումը, այնուհետև, Մարշալ Բաղրամյան պողոտան, Մարշալ Բաղրամյան առաջին անցուղիով մինչև Անտառային փողոց, այնուհետև Անտառային փողոցով, հատելով Թումանյան փողոցը, մինչև Մաշտոցի պողոտայի հետ հատումը, այնուհետև Ճարտարագիտական



համալսարանի հյուսիսային սահմանագծով մինչև Տերյան փողոց, Տերյան փողոցով մինչև Աբովյանի պուրակ (Աբովյան պուրակն ամբողջությամբ), Աբովյանի պուրակից Աբովյան փողոցով մինչև Կորյունի փողոց, Կորյունի, Չարենցի փողոցներով մինչև Այգեստանի 8-րդ փողոց, Այգեստանի 8-րդ փողոցով, այնուհետև Հայ-ֆրանսիական համալսարանի հյուսիսային եզրագծով մինչև Վարդանանց փողոցի հետ հատումը, Վարդանանց փողոցով մինչև Ալեք Մանուկյան փողոցի հետ հատումը, այնուհետև Ալեք Մանուկյան և Երվանդ Քոչարի փողոցներով մինչև Տիգրան Մեծի պողոտայի հետ հատումը, այնուհետև Տիգրան Մեծի պողոտայով մինչև Խորենացու փողոց, Խորենացու փողոցով մինչև Ագաթանգեղոսի փողոցի հետ հատումը, այնուհետև Ագաթանգեղոսի և Գրիգոր Լուսավորիչի փողոցներով մինչև Իսակովի փողոցի հետ հատումը, այնուհետև Իսակովի փողոցով մինչև Հաղթանակի կամրջի և Մաշտոցի պողոտայի հետ հատումը, այնուհետև Մաշտոցի պողոտայով մինչև Սարյան փողոցի հետ հատումը:

- III 0,64 Երրորդ գոտու ներքին սահմանները համընկնում են առաջին և երկրորդ գոտիների արտաքին սահմանագծերի հետ, իսկ արտաքին սահմաններն անցնում են՝ սկսած Աբովյան պուրակից, Մյասնիկյան պողոտայով մինչև Երևան-Սևան ե/գ-ի

հետ հատումը, այնուհետև ե/գ-ով մինչև Չարենցի 2-րդ նրբանցքի հետ հատումը, Չարենցի 2-րդ նրբանցքով մինչև Չարենցի փողոցի հետ հատումը, այնուհետև Չարենցի և Նար-Դոսի փողոցներով ու Տիգրան Մեծի պողոտայով մինչև Քրիստափորի փողոց, Քրիստափորի փողոցով, հատվելով Արշակունյաց պողոտային, Կոմիտասի զբոսայգու հյուսիսային սահմանագծով մինչև Հրազդան գետը, Հրազդան գետով մինչև Հակոբյան փողոցի վերջնամասը, Հակոբյան փողոցով մինչև Բարեկամության հրապարակ, Բարեկամության հրապարակին ամբողջությամբ, այնուհետև Մարշալ Բաղրամյան պողոտայով մինչև Մարշալ Բաղրամյան 1-ին նրբանցք, այդ նրբանցքով մինչև Կենտրոն և Արաբկիր թաղամասերի սահմանագծի հետ հատումը, այնուհետև այդ սահմանագծով մինչև Երևան-Սևան ե/գ-ի հետ հատումը, այնուհետև Երևան-Սևան ե/գ-ով մինչև Սարալանջի խճուղի, Սարալանջի խճուղով մինչև Աբովյան պուրակ: Ընդգրկում է Կիևյան և Հաղթանակի կամուրջները:

IV 0,51 Չորրորդ գոտու ներքին սահմանները համընկնում են երրորդ գոտու արտաքին սահմանագծերի հետ, իսկ արտաքին սահմաններն անցնում են՝

ա) Հաղթանակի կամրջի հետ Ծովակալ Իսակովի պողոտայի հատումից, Ծովակալ Իսակովի պողոտայով մինչև Կենտրոն և Մալաթիա-Մեքաստիա թաղամասերի

հատումը, այնուհետև Վ.Փափազյան փողոցով մինչև Կոմիտասի պողոտայի հետ հատումը, այնուհետև Կոմիտասի պողոտայով մինչև Ն.Տիգրանյան փողոցի հետ հատումը, այնուհետև Կոմիտասի պողոտայով Ն.Տիգրանյան փողոցի հետ հատումը, այնուհետև Ն.Տիգրանյան փողոցով մինչև Զարյան փողոցի հետ հատումը, այնուհետև Զարյան փողոցով մինչև Ազատության պողոտայի հետ հատումը, այնուհետև Երեվան-Սևան երկաթգծով մինչև Կ.ՈՒԼՆԵՂՈՒ փողոցի հետ հատումը, այնուհետև Կ.ՈՒԼՆԵՂՈՒ փողոցով մինչև Դ.անհաղթի փողոցի հետ հատումը, Գոգոլի փողոցի հետ հատումը, Գոգոլի փողոցով մինչև Շովրոյան փողոցի հետ հատումը, այնուհետև, Շովրոյան փողոցի ուղղությամբ հատելով Երևան-Սևան երկաթգիծը, մինչև Քանաքեռ-Զեյթուն, կենտրոն և նոր Նորք թաղամասերի վարչական սահմանների հետ հատումը, այնուհետև այդ սահմանագծով մինչև Սյասնիկյան պողոտայի հետ հատումը, այնուհետև Սյասնիկյան պողոտայով մինչև Նոր Նորք, Նոր-Մարաշ և Կենտրոն թաղամասերի սահմանագծի հետ հատումը, Նոր Նորք, Նորք-Մարաշ թաղամասերի սահմանագծով մինչև Նորքի 12-րդ փողոցի հետ հատումը, Նորքի 12-րդ փողոցով մինչև Գևորգ Հովսեփյան փողոցի հետ հատումը, Գևորգ Հովսեփյան փողոցով մինչև Նորքի այգիներ փողոցի հետ հատումը, այնուհետև Նորքի այգիներ փողոցի ուղղությամբ մինչև Երևան-Սևան ե/գ-ի հետ հատումը.

բ) “Զվարթնոց” օդանավակայանի և նրան կից տնտեսությունների “Տերմինալ” սահմանագծերում ընդգրկված տարածքները;

V 0,41

Հինգերորդ գոտու ներքին սահմանները մասամբ համընկնում են երրորդ և չորրորդ գոտիների արտաքին սահմանագծերի հետ, իսկ արտաքին սահմաններն անցնում են՝

ա) սկսած Դավիթաշենի կամրջից, Հրազդան գետով հոսանքին հակառակ ուղղությամբ մինչև Փափազյան 2-րդ նրբանցքին հարող տարածքում գտնվող Հրազդան գետի պատվարը, այնուհետև պատվարից մինչև Փափազյան 2-րդ նրբանցք, Փափազյան 2-րդ նրբանցքով մինչև Փափազյան 1-ին նրբանցք, այնուհետև Փափազյան 1-ին նրբանցքով մինչև Ռիգայի փողոցի հետ հատումը, այնուհետև Հովսեփէմինի, Արղության, Ադոնցի, Ավետիս Ահարոնյան փողոցներով մինչև Ռուբինյանց փողոցի հետ հատումը, Ռուբինյանց փողոցով մինչև Դ.Անհաղթի փողոցի հետ հատումը.

բ) սկսած Նորք-Մարաշ և Նոր Նորք թաղամասերի սահմանագծի հետ Նորքի 12-րդ փողոցի հատումից, Նորք-Մարաշ և Նոր Նորք թաղամասերի սահմանագծով մինչև Դավիթ Բեկի փողոցի հետ հատումը, Դավիթ Բեկի փողոցով մինչև Սարի թաղի 19-րդ փողոցի հետ հատումը, Սարի թաղի 19-րդ, 13-րդ, 8-րդ փողոցներով, Գլինկայի փողոցով մինչև Մովսես Խորենացու փողոցի հետ հատումը, Մովսես Խորենացու փողոցով մինչև Սասունցի Դավթի փողոցի հետ հատումը, Սասունցի Դավթի փողոցով, Արցախի պողոտայով մինչև Գարեգին Նժդեհի փողոցի հետ հատումը, Գարեգին Նժդեհի փողոցով մինչև Արշակունյաց պողոտայի հետ հատումը, Գարեգին Նժդեհի փողոցով մինչև Արշակունյաց պողոտայի

հետ հատուման խաչմերուկն ամբողջությամբ, այնուհետև Հրագրան գետով մինչև Կողբբի 1-ին փողոցի հետ հատումը, այնուհետև Կողբբի 1-ին փողոցի ուղղությամբ հատելով Հրագրան գետը մինչև Էջմիածնի հին խճուղու և Ծովակալ Իսակովի պողոտայի հետ հատումը, այնուհետև Ծովակալ Իսակովի պողոտայով մինչև Կենտրոն և Մալաթիա-Սեբաստիա թաղամասերի սահմանագծի հետ հատումը:

VI 0,32

Վեցերորդ գոտու ներքին սահմանները մասամբ համընկնում են չորրորդ և հինգերորդ գոտիների արտաքին սահմանագծերի հետ, իսկ արտաքին սահմաններն անցնում են՝

ա) Արշակունյաց պողոտայով՝ սկսած Գարեգին Նժդեհի փողոցի հետ հատումից մինչև Աշխատանքի հրապարակ, Աշխատանքի հրապարակն ամբողջությամբ, Աշխատանքի հրապարակից Բագրատունյաց պողոտայով մինչև Գ.Նժդեհի հրապարակ, Գ.Նժդեհի հրապարակն ամբողջությամբ, Գ.Նժդեհի հրապարակից Բագրատունյաց պողոտայով, Սեբաստիայի, Լենինականի փողոցներով մինչև Առաքելյան փողոցի հետ հատումը, Առաքելյան փողոցով մինչև Շինարարների փողոցի հետ հատումը, Շինարարների փողոցով մինչև Աբելյան փողոցի հետ հատումը, Աբելյան փողոցով մինչև Հալաբյան փողոցի հետ հատումը.

բ) սկսած Դավթաշենի կամրջից, Երևան-Եղվարդ խճուղու հարավ-արևելյան եզրագծով մինչև Դավթաշենի ջրանցքի հետ հատումը, այնուհետև Դավթաշենի ջրանցքով մինչև Հրագրան գետը, այնուհետև Հրագրան գետով

հոսանքին հակառակ ուղղությամբ մինչև Քանաքեռի ՀԷԿ-ի ջրաթափը, ջրաթափով մինչև սնուցող ջրանցքը, սնուցող ջրանցքով մինչև լամպերի գործարանի ջրամբարը սնուցող ջրանցքը, այնուհետև ջրանցքով մինչև Թբիլիսյան խճուղու սկզբնամաս, այնուհետև Պարույր Սևակի փողոցով մինչև Ռուբինյանց փողոցի հետ հատումը, Ռուբինյանց փողոցով մինչև Աճառյան պողոտա, այնուհետև Աճառյան պողոտայով, Մարշալ Խուդյակով փողոցով մինչև Ավանի 14-րդ փողոցի հետ հատումը, Ավանի 14-րդ փողոցով մինչև Երիտասարդության փողոցի հետ հատումը, Երիտասարդության փողոցով մինչև Մոլդովական փողոցի հետ հատումը, Մոլդովական փողոցով մինչև Նոր Նորքի թաղամասի թաղապետարանի շենքի մոտ Ստեփանյան փողոցի հետ հատումը, Ստեփանյան փողոցով մինչև Գայի պողոտայի հետ հատումը, Գայի պողոտայով մինչև Քոչարյան փողոցի հետ հատումը, Քոչարյան փողոցով մինչև Գյուրջյան փողոցի հետ հատումը, Գյուրջյան, Շոպրոնի փողոցներով մինչև Դյորի հրապարակ ( Դյորի հրապարակն ամբողջությամբ), այնուհետև Դավիթ Բեկի փողոցով՝ սկսած Դյորի հրապարակից, մինչև Հովսեփյան փողոցի հետ հատումը.

զ) Դավիթ Բեկի և Մարի թաղի 19-րդ փողոցների հատումից, Դավիթ Բեկի, Նոր Արեշի 4-րդ փողոցներով մինչև Էրեբունու փողոց, Էրեբունու փողոցով՝ սկսած Էրեբունի հրապարակից մինչև Արցախի պողոտայի հետ հատումը, Արցախի պողոտայով մինչև Գարեգին Նժդեհի փողոցի հետ հատումը:

VII 0,26

Յոթերորդ գոտու ներքին սահմանները համընկնում են չորրորդ, հինգերորդ և վեցերորդ գոտիների արտաքին սահմանագծերի հետ, իսկ արտաքին սահմանները անցնում են՝

ա) սկսած Էրեբունի հրապարակից, Էրեբունի հրապարակն ամբողջությամբ, այնուհետև Այվագովսկու փողոցով մինչև Արցախի պողոտայի հետ հատումը, Արցախի պողոտայով մինչև Թամանցիների փողոցի հետ հատումը, Թամանցիների փողոցով մինչև Արշակունյաց պողոտայի հետ հատումը, Արշակունյաց պողոտայով մինչև Շիրակի փողոցի հետ հատումը, Շիրակի փողոցով մինչև Շիրակի փակուղի, Շիրակի փակուղով <Կարմիր բլուր> գերեզմանատան հարավ-արևմտյան եզրագծով մինչև Մալաթիա-Սեբաստիա և Շենգավիթ թաղամասերի սահմանագծի հետ հատումը, այնուհետև այդ սահմանագծով Ծովակալ Իսակովի պողոտայի հետ հատումը, այնուհետև Ա.Բաբաջանյան և Գուսան Շերամի փողոցներով մինչև Տիչինայի փողոցի հետ հատումը, այնուհետև Մալաթիա-Սեբաստիա թաղամասի հյուսիսային սահմանագծով մինչև Սեբաստիայի փողոցի հետ հատումը.

բ) Լենինականի փողոցի հատվածը՝ սկսած Առաքելյան փողոցի հետ հատումից, Շիրակի փողոցով, Աշտարակի խճուղիով մինչև Երևան քաղաքի սահմանագծի հետ հատումը, այնուհետև Երևան քաղաքի հյուսիսային սահմանագծով մինչև Աճառյան պողոտայի և Թբիլիսյան խճուղու հատումը, այնուհետև Ավան և Նոր Նորք համայնքների և Երևան

քաղաքի արևելյան սահմանագծով մինչև Էրեբունի թաղամասի և Նոր Նորք թաղամասերի սահմանագծի հետ հատումը, այնուհետև Էրեբունի և Նոր Նորք թաղամասերի սահմանագծով մինչև Դավիթ Բեկի փողոցի հետ հատումը.

գ) «Էրեբունի» օդանավակայանի և նրան կից տնտեսությունների սահմանագծերում ընդգրկված տարածքները:

VIII 0,21

Ութերորդ գոտու ներքին սահմանները մասամբ համընկնում են վեցերորդ և յոթերորդ գոտիների արտաքին սահմանագծերի հետ, իսկ արտաքին սահմանները անցնում են՝ Երևան քաղաքի սահմանագծի, Էրեբունի և Նոր Նորք թաղամասերի սահմանագծերի հատումից Երևան քաղաքի սահմանագծով մինչև Էրեբունի և Նուբարաշեն թաղամասերի սահմանագծի հետ Երևան քաղաքի սահմանագծի հատումը, այնուհետև Էրեբունի և Նուբարաշեն թաղամասերի սահմանագծով մինչև Շենգավիթ և Նուբարաշեն թաղամասերի սահմանագծերի հետ հատումը, այնուհետև Շենգավիթ և Նուբարաշեն թաղամասերի սահմանագծով մինչև Երևան քաղաքի սահմանագծի հետ հատումը, Երևան քաղաքի սահմանագծով մինչև Աշտարակի խճուղու հետ հատումը:

IX 0,17

Իններորդ գոտին ընդգրկում է՝

ա) Նուբարաշեն համայնքի վարչական սահմանագծում ընդգրկված տարածքները.

բ) այգեգործական տնտեսությունների սահմանագծերում ընդգրկված տարածքները:



**Գոտայքի Մարզ**

- VII 0,26 Ք.Աբովյան յոթերորդ գոտու տարածքը սահմանագծվում է հետևյալ փողոցներով՝ սկսած Սևանի փողոցի հետ Բարեկամության փողոցի հատումից, Բարեկամության փողոցով մինչև Պիոներական փողոցի հետ հատումը, Պիոներական փողոցով մինչև Իլիչի փողոցի հետ հատումը, այնուհետև Իլիչի, Հաղթանակի 40-ամյակի փողոցներով մինչև Սևանի փողոցի հետ հատումը,
- VIII 0,21 Ք. Ծաղկաձոր, Ջովունի, Առինջ, Պոռշյան, Չորաղբյուր, Վերին Պտղնի, Ն.Պտղնի, Քասախ, Ջրվեժ, Ռադիոկայանին կից գյուղ;
- Ք.Աբովյան, ութերորդ ներքին սահմանները համընկնում են յոթերորդ գոտու արտաքին սահմանների հետ, իսկ արտաքին սահմանները անցնում են քաղաքի վարչական սահմանագծով, Ք.Հրազդան՝ Կենտրոն, Բահավան-5, Մաքրավանի նորակառույց և Երիտասարդական ընդգրկված տարածքները, այնուհետև՝ սկսած Բաֆֆու և Շահումյան փողոցների հատումից, Շահումյան փողոցով մինչև Նարեկացու փողոցի հետ հատումը, Նարեկացու փողոցով մինչև Երևան խճուղու հետ հատումը, Երևանյան խճուղիով մինչև Բաֆֆու փողոցի հետ հատումը, Բաֆֆու փեղոցով մինչև Շահումյան փողոցի հետ հատումով սահմանագծված տարածքը, Ք.Չարենցավան, ք.Նոր Հաճն, ք.Եղվարդ, Արգնի, ք.Բյուրեղավան, Արզական, Ալափարզ, Կարենիս, Նոր Երզնկա, Նոր Գեղի, Մայակով-սկի, Բջնի, Արգել, Քանաքեռավան, Բալսահովիտ:

- IX 0,17 Ք.Հրազդան, իններորդ գոտու տարածքը սահմանագծվում է՝  
Միկրոշրջան թաղամասի Հայ ֆիդայիների փողոցի և Ջորավար Անդրանիկի պողոտայի հատումից, Ջորավար Անդրանիկի պողոտայով մինչև երրորդ փողոց, երրորդ փողոցով մինչև երկաթգծի հետ հատումը, երկաթգծով մինչև Հայ ֆիդայիների փողոցի հետ հատումը, Հայ ֆիդայիների փողոցով մինչև Ջորավար Անդրանիկի պողոտայի հետ հատումը, այնուհետև՝ հին Հրազդանի Շահումյան և Խանջյան փողոցների հատումից, Խանջյան փողոցով մինչև կիսակառույց կամուրջը, այնուհետև կամրջի տակով, գետի հունով մինչև Շահումյան փողոցի վրա գտնվող կամուրջը, այնուհետև Շահումյան փողոցով մինչև Խանջյան փողոցի հետ հատումը:
- X 0,13 Ք.Հրազդան՝ Վանատուր, Կոճոռ, Մաքրավան, Ջրառատ, միկրոշրջան և Աղբյուրակ թաղամասերում ընդգրկված տարածքները, այնուհետև՝ Ջորավար Անդրանիկի պողոտայի և Հայ ֆիդայիների փողոցի հատումից, Հայ ֆիդայիների փողոցով մինչև Գործարանային փողոցի հետ հատումը, Գործարանային փողոցով մինչև երրորդ փողոցի հետ հատումը, երրորդ փողոցով մինչև Ջ.Անդրանիկի պողոտայի հետ հատումը, Ջ.Անդրանիկի պողոտայով մինչև Հայ ֆիդայիների փողոցի հետ հատման սահմանագծով տարածքը, այնուհետև՝ հին Հրազդանի Շահումյան փողոցի և հին Երևանյան խճուղու հատումից, հին Երևանյան խճուղով մինչև Երևան-Սևան

ճանապարհի հետ հատումը, Երևան-Սևան ճանապարհով մինչև Երիտասարդական թաղամասի սահմանագիծը, Երիտասարդական թաղամասի սահմանագծով մինչև Երևանյան խճուղու հետ հատման սահմանագծով տարածքը, Նոր Արտամետ, Գետամեջ, Սրգաշեն, Կաթնաղբյուր, Կոտայք, Արամուս, Ակունք, Նոր գյուղ, Քաղսի, Ողջաբերդ:

- XI 0,11 Ք.Հրազդան՝ Վերին Աղբյուրակ, Կաքավաձոր և Ջրառատի նորակառույց թաղամասերում ընդգրկված տարածքները, Գեղաղիք, Գառնի, Գողթ, Սելակ, Աղավնաձոր, Մարմարիկ, Մեղրաձոր, Թեղենիք, Գեղաշեն, Ջառ, Կամարիս, Նուռնուս, Քարաշամբ:
- XII 0,086 Գեղարդ, Ֆանտան, Ջովք, Ջրառատ, Հացավան:
- XIII 0,069 Ջրաբեր, Կապուտան, Հանքավան:
- XIV 0,055 Հատիս, Սևաբերդ, Ջոավան, Լեռնանիստ, Արտավազ, Արագյուղ, Բուժական, Սարալանջ, Ջովաշեն:

**Վայոց Ձորի Մարզ**

- X 0,13 Ք.Ջերմուկ՝ աջափնյա թաղամասերում ընդգրկված տարածքները, ք.Եղեգնաձոր:
- XI 0,11 Ք.Ջերմուկ՝ ձախափնյա թաղամասերում ընդգրկված տարածքները, ք.Վայք:
- XII 0,086 Մալիշկա:

- XIII 0,069 Գլածոր, Արենի, Արփի, Աղավնածոր, Ագարակածոր, Գետափ:
- XIV 0,055 Ելփին, Արտաբունք, Չիվա, Ռինդ, Վերնաշեն, Շատին, Ագատեկ, Փոռ, Արտավան, Զառիթափ, Գոմք, Գնդեվազ, Հերիեր, Կարմրաշեն, Հերմոն, Ջեղեա:
- XV 0,044 Քարագլուխ, Աղնջածոր, Թառաթումք, Հորս, Սալլի, Եղեգիս, Վարդահովիտ, Գնիշիկ, Մարտիրոս, Գողթանիկ, Սարավան:
- XVI 0,035 Արին, Խաչիկ, Բարձրունի, Սերես, Խնձորուտ, Հորբատեղ, Նոր Ազնաբերդ:

**Գեղարքունիքի Մարզ**

- X 0.13 Ք.Գավառ ( բացառությամբ Հացառատ և Արծվաքար թաղամասերի ), ք.Սևան:
- XI 0.11 Ք.Գավառ՝ Հացառատ և Արծվաքար թաղամասերում ընդգրկված տարածքները, Սարուխա, Կարմիր գյուղ:
- XII 0.086 Նորատուս, Գանձակ:
- XIII 0.069 Ք.Մարտունի, Լճափ, Ներքին Գետաշեն, Հայրավանք, Բերդկունք, Լճաշեն, Երանոս, Լանջաղբյուր,Լիճք, Չորագյուղ, Վարդածոր, Վաղաշեն, Վարսեր, Չկալովկա, Ծակքար, Ծովագարդ:
- XIV 0.055 գ.Վարդենիս, ք.Ճամբարակ, Գեղարքունիք,

Զուլաքար, Վարդենիկ, Աստղաձոր, Ծաղկաշեն, Ծովակ, Զովաբեր, Գեղամավան, Ծովագյուղ, Թագագյուղ (Ծովասար), Ծաղկունք, Վերին Գետաշեն, Դդմաշեն, Կարճաղբյուր, Գեղհովիտ, Արծվանիստ, Ծովինար:

XV 0.044 Ծափաթաղ, Նորակերտ, Դարանակ, Ճամբարակ, Արեգունի, Փոքր Մասրիկ, Մաքենիս, Մեմյոնովկա, Լճավան, Խաչաղբյուր, Մաղինա, Ակունք, Տորֆավան, Վաննան, Լուսակունք, Այգուտ, Ջիլ, Շորժա, Արտանիշ, Թթուջուր, Դրախտիկ, Մարտունի, Մեծ Մասրիկ:

XVI 0.035 Արծվաշեն, Վահան, Անտառամեջ, Բարեպատ, Ախպրաձոր, Կութ, Ջաղացաձոր, Շատավան, Գեղամասար, Ավազան, Գետիկ, Գեղամաբակ, Կալավան, Կախակն, Տրետուկ, Լեռնակերտ, Աղբերք, Շատջրեք, Արփունք, Կուտական, Ներքին Շորժա, Այրք, Ագատ, Զորավանք, Սոթք, Նորաբակ, Վերին Շորժա, Գեղաքար, Դպրաբակ:

### Արարատի Մարզ

VI 0.32 Արգավանդ:

VII 0.26 Ք.Արտաշատ՝ յոթերորդ գոտու տարածքը սահմանագծվում է հետևյալ փողոցներով՝ Օգոստոսի 23-ի, Ա.Խաչարյան, Ս.Հակոբյան, Մյասնիկյան, Մխչյան, Աթաբեկյան, Զ.Անդրանիկ, Լուսինյան, Մանուշյան, Գայի, Հ.Թովմասյան, Արարատ, Գոլեցյան, Շահումյան, Խարազյան, Մարքսի, Արագու, Արարատյան,

Ներսիսյան, Մամիկոնյան, Թումանյան, Շիրվանզադե, Պոռոջյան, Կիրովի, Կամոյի, Դուրյանի, Երևանյան, Թորոմոնյան և Նար-Դոսի փողոցներով:

- VIII 0.21 Ք.Արտաշատ՝ ութերորդ գոտու սահմանները համընկնում են յոթերորդ գոտու արտաքին սահմանագծին, իսկ արտաքին սահմանագիծը համապատասխանում է քաղաքի վարչական սահմանագծին (ներառյալ Իսակովի թաղամասը), ք. Մասիս:
- IX 0.17 Գեղանիստ, Նորաբաց, Դարակերտ:
- X 0.13 ք.Արարատ, ք.Վեդի, Խաչիառ, Գետափնյա, Ղուկասյան, Նոր կյանք, Այնթափ, Մխչյան:
- XI 0.11 Արբաթ, Ագատաշեն, Վերին Արտաշատ, Մասիս, Նոր Խարբերդ, Շահումյան, Ոստան, Դիմիտրով, Արարատ, Ոսկետափ, Այգավան, Ավշար, Այգեպատ, Քաղցրաշեն, Նորաշեն, Դաշթավան, Այգեստան, Նոր Կյուրին, Այգեգարդ, Արալեզ, Մարմարաշեն, Վանաշեն, Սիսավան:
- XII 0.086 Նիզամի, Լուսառատ, Եղեգնավան, Փոքր Վեդի, Վերին Դվին, Հայանիստ, Դարբնիկ, Մայաթ-Նովա, Մրգավետ, Բերքանուշ, Բերդիկ, Կանչուտ, Դվին, Հնարերդ, Նշավան, Բյուրավան, Մրգանուշ, Դեղձուտ, Աբովյան, Արևշատ, Գետազատ, Զորակ, Դիտակ, Զրաշեն, Զրահովիտ, Հովտաշատ:

XIII	0.069	Բարձրաշեն, Լանջազատ, Նոյակերտ, Սուրենավան, Սիփանիկ, Սիս, Ռանչպար, Արևարույր, Նորմարգ, Հովտաշեն, Վարդաշեն, Նարեկ, Տափերական, Վեդու գինու գործարանին կից գյուղ:
XIV	0.055	Արաքսավան, Դաշտաքար, Ուրցաձոր, Արմաշ, Նոր ուղի, Գոռավան:
XV	0.044	Երասխ, Պարույր Սևակ, Տիգրանաշեն, Զանգակատուն, Ուրալանջ, Լուսաշող, Վարդաշատ, Լանջանիստ, Շաղափ:

**Արագածոտնի Մարզ**

VI	0.32	Ք.Աշտարակ՝ Քասախ գետի աջափնյա թաղամասերում ընդգրկված տարածքները:
VII	0.26	Ք.Աշտարակ՝ Քասախ գետի ձախափնյա թաղամասերում ընդգրկված տարածքները, Կարբի, Օհանավան, Փարպի, Ղազարավան, Բազմաղբյուր, Սաղմոսավան, Ուշի, Օշական:
VIII	0.21	Բյուրական, Ոսկեվազ, Արտաշավան, Ագարակ (Աշտարակի շրջան):
IX	0.17	Ոսկեհատ, Ուջան, Անտառուտ:
X	0.13	Կոշ, Սասունիկ, Օրգով:
XI	0.11	Ք.Ապարան, Արուճ, Աղձք, 3-րդ սովխոզ:
XII	0.086	Ք.Թալին, Արագած (Թալինի շրջան), Արագած

(Ապարանի շրջան), Շամիրամ:

- XIII 0.069 Ծաղկաշեն, Մուլքի, Շենավան, Վարդենիս, Քուչակ, Դպրեվանք, Տեղեր, Երնջատափ, Ափնագյուղ, Հարթավան:
- XIV 0.055 Ներքին Բազմաբերդ, Արտենի, Ավան, Նոր Եղեսիա, ՆորԱմանոս, Եղիպատրուշ, Արա, Թթուջուր, Ձորագլուխ, Ջրամբար, Նիգավան, Նորաշեն (Արագածի շրջան), Նորաշեն (Ապարանի շրջան), Չքնաղ, Վարդենուտ, Ծաղկահովիտ, Բերքառատ, Գեղաձոր, Արագածոտն:
- XV 0.044 Միրաք, Շենկանի, Ռիա թագա, Մելիքգյուղ, Վարդաբլուր, Ծիլքար, սիփան, Լեռնապար, Դերեկ, Ներքին Մասունաշեն, Աջնակ, Կաղնաղբյուր, դավդաշեն, Արեգ, Ակունք, Մաստարա, Ծաղկասար, դաշտադեմ, Ագարակ (Թալինի շրջան), Լեռնարոտ, Լուսագյուղ, սարալանջ, Հնաբերդ, Ամրե թագա, Ալագիագ, Ջամշլու, Գեղարոտ, Սանգիառ, Վերին Մասունիկ:
- XVI 0.035 Հացաշեն, Բարոժ, Ղաբաղթափա, Ցամաքասար, Շղարշիկ, Վերին Մասունաշեն, Վերին Բազմաբերդ, Գեղադիր, Գյալթո, սուսեր, Նոր Արթիկ, Հակկո, Գետափ, Թլիկ, Դիան, Եղնիկ, Իրինդ, Կաքավաձոր, Կարմրաշեն, Ջարինջա, Ոսկեթաս, Ջովասար, Գառնահովիտ, Պարտիզակ, Սորիկ, Օրթաճյա, Ավթոնա, Ավշեն, Բայսգ, Լուսակն:



**Լոռու Մարզ**

- |      |       |   |
|------|-------|---|
| VII  | 0.26  | Ք.Վանաձոր՝ Ցակուտ, Ջուխտ աղբյուր, Կենտրոն, Վանաձոր թաղամասերում ընդգրկված տարածքները:   |
| VIII | 0.21  | Ք.Վանաձոր՝ Քվշին, Դիմաց, Խանդակ, Թագավորոնիստ թաղամասերում ընդգրկված տարածքները:  |
| IX   | 0.17  | Ք.Վանաձոր՝ Բագում, Տարոն-1, Տարոն-2, Տարոն-3, Տարոն-4, Խնձորուտ, Տավրոս, Ուսանողական և Առաբնյա թաղամասերում ընդգրկված տարածքները:   |
| X    | 0.13  | Գուգարք, Դարպաս, Շահումյան:   |
| XI   | 0.11  | Ք. Ալավերդի՝ Կենտրոն, Փիրուզյան, Էնգելսի, Բաղրամյան թաղամասերում ընդգրկված տարածքները:  |
| XII  | 0.086 | Ք.Սպիտակ, Ք.Ստեփանավան, (բացառությամբ Արմանիս թաղամասի), Ք.Ալավերդի՝ Սարահարթ թաղամասում, Սանահին կայարանում ընդգրկված տարածքները:  |
| XIII | 0.069 | Ք.Ստեփանավան՝ Արմանիս թաղամասում ընդգրկված տարածքները, Ք.Ալավերդի՝ Սանահին և Ակներ թաղամասերում ընդգրկված տարածքները, Օձուն, Աքորի: |
| XIV  | 0.055 | Ք.Տաշիր, ք.Ախթալա, Մեծ Այրում, Շնոդ, Ճոճկան, Ծաթեր, Կարմիր Աղեկ, Բագում, Արջուտ, Նորաշեն, Միխայլովկա, Պետրեվկա,                     |

Նոր Խաչակապ, Փամբակ, Լերմոնտովո, Ֆիոլետտովո, Մարգահովիտ, Շիրակամուտ, Լեոնանցք, Ջրաշեն, Արևաշող, Մեծ Պառնի, Թեղուտ, Հաղպատ, Շամլուղ, Հագվի, Արդվի, Այգեհատ, Սղարթ, Արևածագ, Դսեղ, Կուրթան, Վարդարլուր, Հոբարձի, Գյուլագարկ, Գարգառ, Լոռի բերդ:

XV 0.044 Նեղոց, Չորագետ, Չորագյուղ, Յաղղան, Լեոնապատ, Ազնվածոր, Կողեզ, Պուշկինո, Լեջան, Բովածոր, Ուրուտ, Մարատովկա, Նովոսելցովո, Ղուրսալ, Կաթնառատ, Բլագոդարնոյե, Դաշտաղեմ, Պաղարբյուր, Մեծավան, Մարչապետ, Լուսարբյուր, Լեոնավան, Գոգարան, Խնկոյան, Շենավան, Հարթագյուղ, Կաթնաջուր, Ծաղկաբեր, Գեղասար, Սարալանջ, Չկալով, Մարահարթ, Սարամեջ, Քարինջ, Մարց, Քարածոր, Ագարակ, Ջիլիգա, Ամրակից, Մեղովկա, Ծաղկաշատ, կաճաճկուտ, Պրիվոլնոյե:

XVI 0.035 Ք.Թումանյան, Հալավար, Քարաբերդ, Վահագնածոր, Վահագնի, Եղեգնուտ, Դեբեդ, Անտառամուտ, Հովնանածոր, Սվեռլով, Ուրասար, Կաթնաբյուր, Մեղվահովիտ, Չյունաշող, Շամուտ, Ահնիձոր, Աթան, Լորուտ, Լեոնահովիտ, Արծնի, Ապավեն, Չորամուտ, Գագանաբուծական պետ. Տնտեսությանը կից գյուղ, Քարկովի:

**Սյունիքի Մարզ**

X 0,13 Բ.Կապան տասներորդ գոտու տարածքը սահմանագծվում է հետևյալ փողոցներով՝ Ռաֆայել Մինասյան փողոցի հետ Հունան Ավետիսյան փողոցի հատումից, Հունան Ավետիսյան փողոցով ( Ողջի գետի ձախ ափով ) մինչև , Հունան Ավետիսյան և Թումանյան փողոցները միացնող կամուրջը, այնուհետև Թումանյան փողոցով մինչև Գարեգին Նժդեհի փողոց, Գարեգին Նժդեհի փողոցով Կենտրոնական հիվանդանոցի կամրջով մինչև Մարքսի փողոց, Մարքսի փողոցով մինչև Էնգելսի փողոց, այնուհետև Էնգելսի փողոցով մինչև Մարքսի փողոցի հետ հատումը, այնուհետև Մարքսի փողոցով մինչև Երկաթուղայինների փողոց, Երկաթուղայինների փողոցով մինչև N7 միջնակարգ դպրոցի հյուսիս-արևելյան սահմանագիծը, այնուհետև այդ սահմանագծով, ներառելով Շահումյան N5 բնակելի շենքը, հատելով Շահումյան փողոցը, այնուհետև պահածոների գործարանի հարավ-արևելյան սահմանագծով, հատելով Ողջի գետը՝ այդ մասում, մինչև Դավիթ Բեկի փողոցի հետ հատումը, այնուհետև՝ Դավիթ Բեկի փողոցով, ներառելով փողոցին հարող փոփոխական հարկայնության բնակելի կառուցապատումները, մինչև ՝ Ռաֆայել Մինասյան փողոցի հետ հատումը, այնուհետև Ռաֆայել Մինասյան փողոցով, ներառելով փողոցին հարող բնակելի կառուցապատումները մինչև N1 դպրոցի հարավային սահմանագիծը:

- XXI 0,11 Ք.Կապան՝ տասնմեկերորդ գոտու ներքին սահմանագիծը համընկնում է տասներորդ գոտու արտաքին սահմանագծին, իսկ արտաքին սահմանագիծն անցնում է XII գոտու ներքին սահմանագծով, ք.Գորիս, Խնձորեսկ, Վերիշեն, Աշոտավան (այգեգործական տնտեսության տարածք), Վահանավանք (այգեգործական տնտեսության տարածք):
- XII 0,086 Ք.Կապան՝ Շինարարների, Հալիձոր, Բաղաբերդ և Չորք թաղամասերում ընդգրկված տարածքները, Շղարշիկ, Վաչագան, Բաղաբուրջ, Կավարտ, Բարաբաթում և Բեխբան ավաններում ընդգրկված տարածքները, այդ մասերում գոտու արտաքին սահմանագիծը համընկնում է քաղաքի արտաքին վարչական սահմանագծին, ք.Մեղրի, ք.Սիսիան՝ XII-րդ գոտու տարածքը սահմանագծվում է հետևյալ փողոցներով՝ սկսած Տեր-Ղազարյան փողոցի հետ Սիսիան-Գորիս մայրուղու հատումից, Արցախի փողոցով մինչև Տերյան փողոցի հետ հատումը, այնուհետև շարունակում է դեպի հյուսիս-արևելք՝ ուղիղ գծով ( մոտ 1 կմ ) մինչև Գորկու և Սայաթ-Նովայի փողոցների հատումը, այնուհետև Սայաթ-Նովայի, Մայիսյան և Ջ.Անդրանիկի փողոցներով մինչև Որոտան գետի ձախ ափի հետ հատումը, Հարթաշեն, Բռնակոթ, Կոռնիձոր, Սյունիք:
- XIII 0,069 Ք.Սիսիան՝ XII-րդ գոտու ներքին սահմանագիծը համընկնում է XII-րդ գոտու արտաքին սահմանագծին, իսկ արտաքին սահմանագիծը համապատասխանում է

քաղաքի վարչական տարածքի սահմանագծին, ք.Քաջարան, ք.Ագարակ, Խալաջ, Շինուհայր, Տեղ, ՈՒԴԾ, Խոտ, Շաքի, Անգեղակոթ, Արծվանիկ, Դավիթ Բեկ:

- XIV 0,055 Գեղանուշ, Ներքին Խոտանան, Վերին Խոտանան, Վաղատուր, Քարաշեն, Քարահունջ, Որոտան (Գորիսի շրջան), Հարժիս, Հալիձոր, Տաթև, Աջոտավան, Հացավան, Ախլաթյան, Վաղատին, Որոտան (Միսիանի շրջան), Դարբաս, Կարճևան,:
- XV 0,044 Սառնակունք, Սպանդարյան, Գորայք, Ծղուկ, Տոլորս, Բալաք, Շաղատ, Սալվարդ, Մուծք, Բնունիս, Աղիտու, Նորավան, Գետաթաղ, Լոր, Կաղնուտ, Ձորաստան, Բռուն, Ներքին Խնձորեսկ, Նորաշենիկ, Շրվենանց, Սևաքար, Եղվարդ:
- XVI 0,035 Ք.Դաստակերտ, Առաջաձոր, Ճակատեն, Քյուրուտ, Փիրլու, Ղարատղա, Վերին Գետաթաղ, Ագարակ, Թանահատ, Արևիս, Սոֆլու, Թասիկ, Տորունիք, Ղզլջուղ, Լձեն, Բարձրավան, Շուռնուխ, Աղվանի, Քաջունի, Անտառատ, Դովրուս, Եղեգ, Օխտար, Վերին Գյոդակլու, Վանեք, Տանձատափ, Լեհվազ, Վարդանիձոր, Խղրանց, ՈՒԺանիս, Շիկահող, Ներքին Հանդ, Սրաշեն, Ծավ, Գեղի, Լեռնաձոր, Փայահան, Քաջարան, Տաշտուն, Լիճք, Վահրավար, Գուղեմնիս, Կուրիս, Ալդարա, Չափնի, Տանձավեր, Արավուս, Շենաթաղ, Նյուվաղի, Շվանիձոր, Խոզնավար, Խնածախ, Սվարանց:

**Արմավիրի Մարզ**

- |      |       |   |
|------|-------|---|
| VI   | 0.32  | Ք.Վաղարշապատ (բացառությամբ Արագած և Զվարթնոց թաղամասերում ընդգրկված տարածքների):  |
| VII  | 0.26  | Ք.Վաղարշապատ Արագած և Զվարթնոց թաղամասերում ընդգրկված տարածքները, Փարաքար:  |
| VIII | 0.21  | Ք.Արմավիր, Նորապատ, Արտիմետ, Պտղունք, Մուսալեռ:   |
| IX   | 0.17  | Ք.Մեծամոր, Արևշատ, Մերձավան, Նորակերտ, Գայ, Ակնաշեն, Ոսկեհատ, Գրիբոյեդով, Ծաղկունք, Մայիսյան, Նորավան:  |
| X    | 0.13  | Այգեկ, Բաղրամյան (Էջմիածնի շրջան), Հովտամեջ, Ծիածան, Բանբակաշատ, Արևիկ, Հայկավան, Հայթաղ, Հոկտեմբեր, Արշալույս, Մրգաշատ, Արմավիր, Լուսազյուղ:   |
| XI   | 0.11  | Արտաշար, Եղեգնուտ, Երասխահուն, Զարթոնք, Սովետական, Ջրառատի թոչնաֆաբրիկա, Արաքս (Էջմիածնի շրջան), Վարդանաշեն Մարգարա, Ջրառատ:  |
| XII  | 0.086 | Արագած, Ծաղկալանջ, Տարոնիկ, Առատաշեն, Ապագա, Հայկաշեն, Մեծամոր, Այգեշատ (Արմավիրի շրջան), Արագափ, Զրաշեն, Տանձուտ, Լուկաշին, Լենուղի, Աղավնատուն, Ակնալիճ, Ամբերդ, Դաշտ, Դողս, Խորունք, |

Արագած, Ծաղկալանջ, Տարոնիկ, Առատաշեն, Ապագա, Հայկաշեն, Մեծամոր, Այգեշատ (Արմավիրի շրջան), Արագափ, Ջրաշեն, Տանձուտ, Լուկաշին, Լենուղի, Աղավնատուն, Ակնալիճ, Ամբերդ, Դաշտ, Դողս, Խորունք, Նոր Արմավիր, Սրգաստան, Շահումյան, Շահումյանի թռչնաֆաբրիկա, Սամաղար, Այգեշատ (Էջմիածնի շրջան), Արգավանդ, Նալբանդյան:

- XIII 0.069 Բաղրամյան (Բաղրամյանի շրջան), Արաքս (Արմավիրի շրջան), Սյասնիկյան, Ֆերիկ, Լեռնամերձ, Հուշակերտ, Շենավան, Խանջյան, Տալվորիկ, Գետաշեն, Նոր Արտագես, Փշատավան, Բերքաշատ, Ջանֆիղա, Նոր Կեսարիա:
- XIV 0.055 Հասիկ, Ջերժինսկի, Արևադաշտ, Ամասիա, Դալարիկ, Քարակերտ, Շենիկ, Վնանդ:
- XV 0.044 Կողբավան, Բագարան, Երվանդաշատ, Արտամետ, Լեռնագոգ, Արգինա:

**Տավուշի Մարզ**

- IX 0,17 Ք. Իջևան, իններորդ գոտու սահմաններն անցնում են հետևյալ փողոցներով՝ սկսած Երևանյան խճուղու հետ Սահմանադրության հրապարակը միացնող կամրջից, այդ կամրջով մինչև Սահմանադրության հրապարակի հետ հատումը, Սահմանադրության հրապարակն ամբողջությամբ, այնուհետև Անկախության փողոցով մինչև Վասիլյան փողոցի հետ հատումը, Անկախության և Վասիլյան

փողոցների խաչմերուկն ամբողջությամբ, այնուհետև Վասիլյան փողոցի ուղղությամբ Անկախության փողոցով մինչև Երևանյան խճուղու հետ հատումը, այնուհետև Երևանյան խճուղիով մինչև Երևանյան խճուղին Սահմանադրության հրապարակին միացնող կամուրջը, Ք. Դիլիջան, իններորդ գետու սահմաններն անցնում են հետևյալ փողոցներով՝ Գետափնյա փողոցի կառուցապատված հատվածը՝ սկսած տուրիստական բազայից մինչև 50 - ամյակի հուշարձանը, լճի տարածքը և զբոսայգին ամբողջությամբ, Մ. Գորկու փողոցի հատվածը՝ սկսած հյուրանոցային համալիրից մինչև զինվորական զորամաս, ներառյալ քաղաքային ավտոկայանի հարակից տարածքը. Կալինինի փողոցի և դրան հարակից կառուցապատված տարածքը, Մյասնիկյան փողոցի հատվածը՝ սկսած քաղաքային շուկայից մինչև N 1 միջնակարգ դպրոցը:

- X 0,13 Ք. Իջևան, տասներորդ գոտու ներքին սահմանները համընկնումն են իններորդ գոտու արտաքին սահմանագծերին, իսկ արտաքին սահմաններն անցնում են քաղաքի վարչական սահմանագծով, Ք. Դիլիջան, տասներորդ գոտու ներքին սահմանագծերը համընկնում են իններորդ գոտու արտաքին սահմանագծերի հետ, իսկ արտաքին սահմաններն անցնում են քաղաքի վարչական սահմանագծով:
- XI 0,11 Ք. Նոյեմբերյան, Ք. Բերդ:
- XII 0,086 Հաղարծին, Գետահովիտ, Բագրատաշեն:



XIII	0,069	Ազատամուտ, Այրում:
XIV	0,055	Սևքար, Աչաջուր, Կողբ, Արծվաբերդ, Բերդավան, Թեղուտ, Գանձաքար:
XV	0,044	Խաշթառակ, Հովք, Գոշ, Խաչարձան, Աղավնավանք, Լուսահովիտ, Ենոքավան, Լուսաձոր, Ակնաղբյուր, Դիտավան, Աճարկուտ, Իծաքար, Վերին Կարմիր աղբյուր, Վարագավան, նորաշեն, Չինչին, Թովուզ, Նավուր, Ծաղկավան (նախկին Իջևանի շրջան), Ծաղկավան (նախկին Տավուշի շրջան), Պտղավան, Հաղթանակ, Լճկաձոր, Արճիս, Սարիգյուղ, Ջուջևան, Դեբեդավան, Դեղձավան, Չորթան, Վերին Քյուրփլու:
XVI	0,035	Չինարի, Մոսեսգեղ, Ներքին Կարմիր աղբյուր, Այգեպար, Պառավաքար, Բերքաբեր, Կիրանց, Բարեկամավան, Ոսկեպար, Այգեձոր, Կոթի, Վազաշեն, Ոսկեվան, Բաղանիս, Այգեհովիտ, Դովեղ:

### Շիրակի Մարզ

VIII	0,21	Ք. Գյումրի, ութերորդ զոտու սահմաններն անցնում են հետևյալ փողոցներով՝ սկսած ավտոկայանի հրապարակից, ավտոկայանի հրապարակն ամբողջությամբ, Գյումրի գետակով մինչև Տերյան փողոցի հետ հատումը, Տերյան փողոցով մինչև Նալբանդյան փողոցի հետ հատումը, Նալբանդյան փողոցով մինչև Օզանյան փողոցի հետ հատումը, Օզանյան փողոցով մինչև Շիրակեցու փողոցի հետ հատումը, Շիրակեցու փողոցով մինչև Ալեք
------	------	--

Մանուկյան փողոցի հետ հատումը, Ալեք Մանուկյան փողոցով մինչև Անկախության հրապարակ, Անկախության հրապարակի հյուսիսային կողմով մինչև Խրիմյան Հայրիկի փողոց, Խրիմյան Հայրիկի փողոցով մինչև Կույբիշևի փողոցի հետ հատումը, Կույբիշևի փողոցով մինչև Տիգրան Մեծի փողոցի հետ հատումը, Տիգրան Մեծի փողոցով մինչև Ղանդիլյանի անվան (կայարանամերձ) հրապարակ՝ հրապարակն ամբողջությամբ, Ղանդիլյանի անվան հրապարակի և Գորկու Փողոցի հատումից՝ Գորկու փողոցով մինչև Մուսայեյան փողոցի հետ հատումը, Մուսայեյան փողոցով մինչև տերյան փողոցի հետ հատումը, Տերյան փողոցով մինչև Տիգրանյան փողոցի հետ հատումը, Տիգրանյան փողոցով մինչև ավտոկայանի հրապարակ:

- IX 0,17 Ք. Գյումրի, Իններորդ գոտու սահմանները համընկնում են ութերորդ գոտու արտաքին սահմանագծերի հետ, իսկ արտաքին սահմաններն անցնում են՝ սկսած քաղաքի հարավային սահմանագծի և Երևանյան խճուղու հատումից, Երևանյան խճուղով մինչև Ալավերդյան փողոցի հետ հատումը, Ալավերդյան փողոցով մինչև Լագոյի փողոցի հետ հատումը, Լագոյի փողոցով մինչև Գ. Նժդեհի հրապարակի հետ հատումը, Գ. Նժդեհի հրապարակից Ախուրյան խճուղով մինչև Գյումրի - Արթիկ երկաթգծի հետ հատումը, Գյումրի - Արթիկ երկաթգծով մինչև երկաթուղային կայարանի ստորգետնյա անցումի արևելյան հատվածի հետ հատումը, այնուհետև՝

անցումով մինչև Ղանդիլյանի անվան (կայարանամերձ) հրապարակ՝ Ղանդիլյանի հրապարակից և Ղանդիլյան (Մևան) փողոցի հատման կետից Ղանդիլյան փողոցով մինչև Խրիմյան Հայրիկի (Թբիլիսյան խճուղի) փողոցի հետ հատում Խրիմյան Հայրիկի փողոցով մինչև Բարոնյան փողոցի հետ հատումը, Բարոնյան փողոցով մինչև Խանջյան փողոցի հետ հատումը, Խանջյան փողոցով մինչև Կոշտոյան փողոցի հետ հատումը, Կոշտոյան փողոցով մինչև Թետչերի (Շինարարների) փողոցի հետ հատումը, Թետչերի փողոցով մինչև Վ. Սարգսյան (Լենինգրադյան) փողոցի հետ հատումը, Վ. Սարգսյան փողոցով մինչև Տիմիրյազևի փողոցի հետ հատումը, Տիմիրյազևի փողոցով մինչև Մնջոյան փողոցի հետ հատումը, Մնջոյան փողոցով մինչև Շիրակացու փողոցի հետ հատումը, Շիրակացու փողոցով մինչև Դուդուկոյի փողոցի հետ հատումը, Դուդուկոյի փողոցով մինչև Բուլվարային փողոցի հետ հատումը, Բուլվարային փողոցով մինչև գործարանային փողոցի հետ հատումը, այնուհետև՝ դեպի հարավ-արևելք “Կարմիր բերդ” գործարանի հյուսիսային պարսպով մինչև Չերքեզի ձորի հետ հատումը, (սկզբնամաս), Չերքեզի ձորով մինչև Օզանյան փողոցի հետ հատումը, Օզանյան փողոցով մինչև Պլեխանովի փողոցի հետ հատումը, Պլեխանով փողոցով սահմանապահ գործարանի հյուսիսային պարսպով մինչև Գյումրի գետակի հետ հատումը, Գյումրի գետակով մինչև Վաքսամոտորային ձեռնարկության տարածքի հյուսիսային կողմի հետ հատումը,

տաքսոմոտորային ձեռնարկության հյուսիսային կողմով մինչև Լալայան փողոցի հետ հատումը, Լալայան փողոցով դեպի արևելք՝ մինչև տեղաբախշված գորամասի հյուսիսային պարսպի հետ հատումը, գորամասի հյուսիսային պարսպով մինչև “Գյումրի հաց” ՓԲԸ հյուսիսային պարսպով մինչև Գյումրի - Երևան երկաթգծի հետ հատումը, Գյումրի - Երևան երկաթգծով մինչև քաղաքի հարավային սահմանի հետ հատումը (Երևանյան խճուղու սկզբնամաս):

- X 0,13 ք. Գյումրի, տասներորդ գոտու ներքին սահմանները համընկնում են իններորդ գոտու արտաքին սահմանագծի հետ, իսկ արտաքին սկզբնամասից դեպի արևմուտք, քաղաքի հարավային սահմանագծով մինչև “Հայնավթամթերք” ՓԲԸ արևմտյան պարսպով մինչև N 2 գերեզմանատան արևելյան պարսպի հետ հատումը, N 2 գերեզմանատան արևելյան պարսպով մինչև Տեր - Գաբրիելյան փողոցի հետ հատումը, Տեր - Գաբրիելյան փողոցով մինչև Ղարսի խճուղու հետ հատումը, Ղարսի Խճուղիով մինչև քաղաքի արևելյան կողմով անցնող օղակային ավտոճանապարհի հետ հատումը, օղակային ավտոճանապարհով դեպի հյուսիս մինչև Բուլվարային փողոցի հետ հատումը, Բուլվարային փողոցով մինչև Դուդուկոյի փողոցի հետ հատումը, Դուդուկոյի փողոցով մինչև Շիրակացու փողոցի հետ հատումը, Շիրակացու փողոցով մինչև N 8 զինվորական թաղամասի հարավային պարսպի հետ հատումը, N 8 զինվորական թաղամասի

հարավային պարսպով մինչև N 8 թաղամասի արևմտյան սահմանի հետ հատումը, N8 թաղամասի արևմտյան սահմանով մինչև Մարմարաշենի Խճուղու հետ հատումը, Մարմարաշեն Խճուղով մինչև Ավստրիական թաղամաս տանող ճանապարհի հետ հատումը, Ավստրիական թաղամաս տանող ճանապարհով՝ մինչև Ավստրիական թաղամասի արևելյան սահմանի հետ հատումը, Ավստրիական թաղամասի արևելյան սահմանով մինչև Անի թաղամասի արևմտյան սահմանի հետ հատումը, Անի թաղամասի արևմտյան սահմանով մինչև Մինաս Ավետիսյան փողոցի հետ հատումը, Մինաս Ավետիսյան փողոցով մինչև Մ. Խորենացու

փողոցի հետ հատումը, Մ. Խորենացու փողոցով մինչև Սախարովի հրապարակ, Սախարով հրապարակն ամբողջությամբ, այնուհետև՝ Վ. Սարգսյան փողոցով մինչև Սավոյան փողոցի հետ հատումը, Սավոյան փողոցով մինչև Դանիելյան փողոցի հետ հատումը, Դանիելյան փողոցով մինչև Թետչերի (Շինարարների) փողոցի հետ հատումը, Թետչերի փողոցով դեպի արևելք՝ հատելով Գյումրի գետակը, մինչև զորամասի պարսպի հետ հատումը, զորամասի արևմտյան պարսպով մինչև Խրիմյան Հայրիկի (Թբիլիսյան) փողոցի հետ հատումը, Խրիմյան Հայրիկի փողոցով մինչև Գյումրի-Թբիլիսի երկաթգծի հետ հատումը, Գյումրի-Թբիլիսի երկաթգծով մինչև երկաթուղային կայարանի ստորգետնյա անցումի արևելյան կողմի հետ հատումը:

XI 0,11

Ք. Գյումրի, տասնմեկերորդ գոտու արտաքին սահմաններն անցնում, են քաղաքի արտաքին սահմանագծով՝ բացառությամբ ԼենՀԷԿ ավանի և այն սահմանագծերի, որտեղ քաղաքի արտաքին սահմանագիծն համընկնում է իններորդ կամ տասներորդ գոտիների արտաքին սահմանների հետ: Գոտու ներքին սահմանները Երկաթուղային կայարանի անցումի արևելյան կողմից մինչև քաղաքի հարավային սահմանագիծը (Երևանյան խճուղու սկզբնամաս) և Բուլվարային փողոցի. Գործարանային փողոցի հետ հատման տեղամասից մինչև Շիրակացու և Մնջոյան փողոցների հատման տեղամասը համընկնում են I X գոտու արտաքին սահմանների հետ: Մնացած հատվածներում ներքին սահմանները համընկնում են X գոտու արտաքին սահմանների հետ:

Ք. Արթիկ, տասնմեկերորդ գոտու սահմաններն անցնում են հետևյալ փողոցներով՝ սկսած Գ. Նարեկացու և Բաղրամյան փողոցների հատումից, Գ. Նարեկացու փողոցով մինչև Կոմիտասի փողոցի հետ հատումը, Կոմիտասի փողոցով մինչև Գ. Լուսավորիչի փողոցի հետ հատումը, Գ. Լուսավորիչի փողոցով մինչև Տոնականյան փողոցի հետ հատումը, Տոնականյան փողոցով մինչև Պռոշյան փողոցի հետ հատումը, Պռոշյան փողոցով մինչև Տուֆագործների փողոցի հետ հատումը, Տուֆագործների փողոցով և 7 –րդ դպրոցի շրջակայքով մինչև բաբաջանյան նրբանցքի և Անկախության փողոցի հետ հատումը, Բաբաջանյան նրբանցքով մինչև Տուֆագործների փողոցի հոտ հատումը, Տուֆագործների փողոցով Արթիկ տուֆի

կառավարողներով մինչև Շահումյան փողոցի հետ հատումը, Շահումյան փողոցն ամբողջությամբ մինչև գլխավոր հատակագծով նախատեսված փողոցի հետ հատումը, վերը նշված փողոցով մինչև Աբովյան փողոցի հետ հատումը, Աբովյան փողոցով մինչև Թումանյան փողոցի հետ հատումը, Թումանյան փողոցով մինչև Սասունցի Դավթի փողոցի հետ հատումը, Սասունցի Դավթի փողոցով մինչև Շինարարների փողոցի հետ հատումը, երկաթգծով մինչև Բաղրամյան և Գ.Նարեկացու փողոցների հատումը:

- XII 0,086 Ք. Արթիկ, տասներկուերորդ գոտու ներքին սահմանները համընկնում են տասնմեկերորդ գոտու արտաքին սահմանագծի հետ, իսկ արտաքին սահմաններն անցնում են քաղաքի արտաքին սահմանագծով:  
Ք. Մարալիկ, Ագատան, Ախուրյան:
- XIII 0,069 Նոր Կյանք, Բենիամին, Ղարիբջանյան, Շիրակ, Հացիկ, Մայիսյան:
- XIV 0,055 Ք. Գյումրի՝ ԼենՀԵԿ- ի ավան: Ջաջուռ, Կամո, Ջաջուռ կայարանին կից գյուղ, Լեռնուտ, Կարմրաքար, Քեթի, Ջրաձոր, Թորոսագյուղ, Կապս, Վահրամաբերդ, Արեգնադեմ, Գետաշեն, Գյուլլիբուլախ, Մեղրաշատ, Ողջի, Մարմարաշեն, Առփի, Ոսկեհասկ, Ախուրիկ, Շիրակավան, Իսահակյան, Լուսաղբյուր, Գուսանագյուղ, Երագգավորս, Բայանդուր, Արևիկ, Կառնուտ, Մուսայելյան (Ախուրյանի շրջան), Ջրառատ, Այգեբաց, Մեղրաշեն, Փանիկ, Գետափ,

Անուշավան, Հառիճ, Նահապետավան, Մեծ Մանթաշ, Արևշատ, Փոքր Մանթաշ, Սպանդարյան, գեղանիստ, Վարդաքար, Հովտաշեն, Հոռոմ, Հայրենյանց, Հայկասար, Տուֆաշեն, Ձորակապ, Ձիթհանքով, Լանջիկ, Սառնաղբյուր:

XV 0,044 Ամասիա, Աշոցք, Մեծ Սեպասար, Փոքր Սեպասար, Ղազանջի, Կրասար, Կարմրավան, Հարթաշեն, Մուսայելյան (Աշոցքի շրջան), Վարդաղբյուր, Սալուտ, Լեռնագյուղ, Հովունի, Բանդիվան, Յողամարգ, Հողմիկ, Գոգահովիտ, Արփենի, Հովիտ, Բաշագյուղ, ՓոքրՍարիար, Կաքավասար, Սարապատ, Հայկավան, Ձորաշեն, ՄեծՍարիար, Կրաշեն, Գետք, Սարատակ, Սարալանջ, Պեմզաշեն, Լեռնակերտ, Քարաբերդ, Սարակապ, Աղին, Ջրափի, Հայկաձոր, Բագրավան, Անիպեմզա, Փոքրաշեն, Զույգաղբյուր, Լուսակերտ, Անի Կայարան:

XVI 0,035 Սարագյուղ, Բավրա, Սիգավետ, Աղվորիկ, Թավշուտ, Զարիշատ, Բերդաշեն, Ալվար, Արդենիս, Հովտուն, Ձորակերտ, Ծաղկուտ, Գառնառիճ, Շաղիկ:



## **Ինչպես է օրինականացվում քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերում առկա ինքնակամ կառույցները**

Այս խմբին պատկանող ինքնակամ կառույցներն օրինականացման նպատակով կառույցի զբաղեցրած հողամասի սեփականատերը պետք է դիմի գույքի գտնվելու վայրի համայնքի ղեկավարին /Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետին/ իսկ համայնքի վարչական սահմաններից դուրս համապատասխան մարզպետին: Դիմումի հետ միասին պետք է ներկայացնի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման վկայականը՝ ինքնակամ կառույցների համապատասխան նշումներով, իսկ հողամասի ընդհանուր համատեղ բաժնային սեփականության դեպքում՝ նաև սեփականատերերի գրավոր համաձայնությունը: Համայնքի ղեկավարը /Երևանում՝ քաղաքապետը/ իսկ համայնքի վարչական տարածքից դուրս՝ համապատասխան մարզպետը, դիմումը ստանալուց հետո երեսուր օրյա ժամկետում ընդունում է դրանց օրինականացման կամ մերժման մասին որոշումը: Եթե ինքնակամ կառույցի զբաղեցրած հողամասին դեռևս տրամադրված չէ հասցե, ապա օրինականացման մասին որոշումով տրամադրվում է նաև հասցե:

Այս խմբում ընդգրկված ինքնակամ կառույցների օրինական ճանաչվելու դեպքում հողամասի սեփականատերը համապատասխան բյուջե(SԻՄ կամ պետ. բյուջե) պետք է մուծի հետևյալ դրույքաչափերով վճարներ՝

- ա) ինքնակամ կառուցված բնակելի տների և այգետնակների յուրաքանչյուր մեկ քառ. մետրի համար՝ բազային տուրքի 10-ապատիկի չափով:
- բ) բնակելի տներին և այգետնակներին կից ինքնակամ կառուցված տնտեսական և օժանդակ կառույցների յուրաքանչյուր մեկ քառ մետրի համար՝ քաղաքային համայնքներում՝ բազային տուրքի 10-ապատիկի, գյուղական համայնքներում՝ 6-ապատիկի չափով:

Հիշյալ հողամասերում հասարակական և արտադրական նշանակության ինքնակամ կառույցների օրինական ճանաչման գործընթացն, անկախ կառույցների ավարտվածության աստիճանից (այդ թվում կիսակառույց), նույնն է ինչը բնակելի տներին, այգետնակների և դրանց կից տնտեսական և օժանդակ կառույցների համար, միայն այն տարբերությամբ, որ համայնքի ղեկավարը (Երևան քաղաքում՝ մարզպետը), իսկ համայնքի սահմաններից դուրս՝ համապատասխան մարզպետը օրինականացման կամ մերժման մասին որոշումն ընդունում է հողի սեփականատիրոջ դիմումն ստանալուց հետո՝ ինքնակամ կառուցված՝ մինչև 200(երկու հարյուր)Ք.Մ. հասարակական կամ արտադրական նշանակության կառույցների համար՝ 30, իսկ 200(երկու հարյուր)Ք.Մ-ից ավելի ղեկավարում 60-օրյա ժամկետում: Նման ինքնակամ կառույցներն օրինական ճանաչվելու ղեկավարում հողամասի սեփականատերը համապատասխան(ՏԻՄ կամ պետ. բյուջե) բյուջե պետք է մուծի վճարներ՝

- ա) հասարակական նշանակության կառույցների յուրաքանչյուր մեկ քառ. մետրի համար՝ բազային տուրքի 20-ապատիկ չափով.
- բ) արտադրական նշանակության կառույցների յուրաքանչյուր մեկ քառ. մետրի համար՝ բազային տուրքի 15-ապատիկ չափով.

հիշյալ վճարները պահպանվում են նաև հասարակական կամ արտադրական և այլ նշանակության հողամասերում (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության) ինքնակամ կառուցված բնակելի, հասարակական, արտադրական կառույցների(անկախ դրանց ավարտվածության աստիճանից) օրինական ճանաչվելու ղեկավարում:

Գյուղատնտեսական նշանակության հողամասերի վրա ինքնակամ կառուցված բնակելի հասարակական կամ արտադրական նշանակության կառույցները (անկախ դրանց ավարտվածության աստիճանից) կարող են ճանաչվել օրինական, եթե դրանք բավարարում են նաև ՀՀ կառավարու-

թյան 11.05.02թ. N498 որոշմամբ սահմանված պայմաններին:

Գյուղատնտեսական նշանակության հողերի հնարավորինս պահպանման նպատակով ՀՀ կառավարության 11.05.2002 թվականի N 498 որոշումով թույլատրվում է բոլոր համայնքների վարչական սահմաններում ընդգրկված գյուղ.նշանակության հողամասերի վրա կառուցել կենցաղային, տնտեսական նշանակության շենքեր և շինություններ՝ մինչև 30քմ կառուցապատման ընդհանուր մակերեսով:

Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների օրինականացման առաջին քայլը դրանց նկատմամբ պետության կամ համապատասխան համայնքի սեփականության իրավունքի ճանաչումն է, որից հետո՝ այդ իրավունքի գրանցումը: Այս գործընթացներից հետո տվյալ կառույցն իրականացրած անձին առաջարկություն է արվում գնելու այդ կառույցը և վճարել հողի կադաստրային արժեքը: Ուղղակի վաճառքի այս դեպքում վաճառքը կատարվում է հետևյալ գներով՝

- ա) բնակելի տների, այգետների յուրաքանչյուր մեկ քառ. մետրի համար՝ բազային տուրքի 30-ապատիկի չափով.
- բ) հասարակական նշանակության կառույցների յուրաքանչյուր մեկ քառ. մետրի համար բազային տուրքի 90-ապատիկի չափով.
- գ) տնտեսական և օժանդակ շինությունների, ինչպես նաև արտադրական նշանակության կառույցների յուրաքանչյուր մեկ քառ. մետրի համար՝ բազային տուրքի 20-ապատիկի չափով.
- դ) ավտոտնակների յուրաքանչյուր մեկ քառ. մետրի համար՝ բազային տուրքի 10-ապատիկի չափով.
- ե) սույն կետով նախատեսված կառույցների գնման դեպքում համապատասխան հողամասի կադաստրային արժեքի չափով:

Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող

հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների օրինականացման առաջին քայլը այդ կառույցների նկատմամբ պետության կամ համապատասխան համայնքի սեփականության իրավունքի ճանաչումն է և այդ իրավունքի գրանցումը լիազոր մարմնում, որից հետո սեփականատերը նախ՝ հողամասը կադաստրային արժեքով, իսկ կառույցը՝ սահմանված գնով ձեռք բերելու գրավոր առաջարկություն է անում կառույցն իրականացրած անձին, ապա՝ վարձակալության, եթե այս առաջարկությունները մերժվում(մնում են անպատասխան) են՝ կառույցն օտարվում կամ օգտագործման է տրամադրվում աճուրդի կամ մրցույթի ձևով:

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### Ինչպես կատարել օրինական շինարարություն

Շինարարությունը (կառուցապատումը) սկսելու հիմնական պայմանն այն կատարելու թույլտվություն ստանալն է: Շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողին (շինարարության սեփականատիրոջը) սահմանված կարգով տրված հողամասում և (կամ) արդեն կառուցված շենքում, շինությունում որոշակի շինարարական աշխատանքներ կատարելու իրավունք: Շինարարություն կատարողը թույլտվություն ստանալու համար տեղական ինքնակառավարման մարմնին (համայնքի ղեկավարին ) ներկայացնում է Հայտ (ձև 1) , իսկ եթե շինարարությունը կատարվում է համայնքի սահմաններից դուրս, հայտը տրվում է Մարզպետին (ձև 1), որտեղ նշվում է շինարարության կատարման ցուցանիշները (պայմանները): հայտին կցվում է`

1. Կառուցապատողի հողամասի հատակագիծը` նախագծվող ( վերակառուցվող, ուժեղացվող, փոփոխվող և այլն) օբյեկտի առաջարկվող տեղանշմամբ և (նոր օբյեկտի կամ գոյություն ունեցող նպատակային օգտագործման փոփոխության դեպքում) հատակագիծը
2. Անշարժ գույքի նկատմամբ (հողամասի, շինության) կառուցապատողի (հայտատուի) իրավունքը հաստատող փաստաթղթի կրկնօրինակը (պատճեն) :

Համայնքի ղեկավարի (մարզպետի) անունով ներկայացվող հայտը և փաստաթղթերը ներկայացնելու ժամանակ գյուղապետարանի (մարզպետի) հաշվառման մատյանում պատասխանատու անձը նշում է կատարում (գրանցում է ) դրանց ընդունման օրվա, հայտին կից փաստաթղթերի մասին: Հաշվառման մատյանում հայտի ընդունման մասին նշումներ կատարելուց հետո, առավելագույնը 20 օրվա ընթացքում համայնքապետը (մարզպետը) պարտավոր է`

1. հայտը և նրան կից փաստաթղթերի հիման վրա կառուցապատողին (սեփականատիրոջը)

տալիս է ճարտարապետահատակագծային առաջադրանքը (այսուհետ առաջադրանք) (ձև 5):

2. տրված հայտը մերժել

Համայնքապետի (մարզպետի) կողմից հայտը կարող է մերժվել միայն հետևյալ դեպքում՝

1. Հայտը տվողը հայտում ամրագրել է այնպիսի ցուցանիշներ(պայմաններ), որոնք հակասում են տվյալ տարածքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին (դրանց առկայության դեպքում), ինչպես նաև քաղաքաշինական, բնապահպանական, սանիտարահիգիենիկ, հակահրդեհային և այլ նորմատիվ փաստաթղթերի պահանջներին:
2. Ներկայացված փաստաթղթերը պարունակում են սխալ կամ իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ:

Կառուցապատողը հայտի գրավոր և հիմնավորված (պատճառների և նորմատիվ ակտերին հակասելու մասին հատուկ նշումով) մերժում ստանալուց հետո կարող է համապատասխան փոփոխություններ կատարել մերժված հայտում ու ներկայացվող փաստաթղթերում և կրկին այն ներկայացնել: Այս դեպքերում համայնքի ղեկավարը (մարզպետը ) պարտավոր է կրկնակի հայտը ներկայացման օրվանից 10 – ր օրվա ընթացքում քննարկել և տալ առաջադրանք: Հայտի մերժման հետ համաձայն չլինելու դեպքում կառուցապատողը այն կարող է բողոքարկել դատական կարգով: Նոր կառուցվող շենքերի շինությունների համար շինարարության թույլտվությունը ուժի մեջ է երկու տարի, եթե տվյալ օբյեկտի շինարարության համար սահմանված նորմերով նախատեսված չեն այլ ժամկետներ:

**Ինչ է իրենից ներկայացնում համայնքի ղեկավարի (մարզպետի) կողմից տրված առաջադրանքը**

Համայնքի ղեկավարի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքը հիմք է շինության նախագծային

փաստաթղթերի մշակման համար և պարտադիր են քաղաքաշինական գործունեության բոլոր մասնակիցների համար: Այն դեպքերում, երբ կառուցապատվող հողամասի ուսումնասիրություններն անհնար են առանց քանդման աշխատանքների իրականացման, ապա սեփականատիրոջը (լիազորվածներին) տրված առաջադրանքի հետ միասին տրվում է քանդման թույլտվություն, որը պետք է իրականացվի տրված առաջադրանքով սահմանված հաջորդականությամբ և կարգով (տես քանդման թույլտվություն): Առանց այս առաջադրանքի ցանկացած շինարարություն անօրինական է, այն կարող է սահմանված կարգով կասեցվել ցանկացած պահի և միաժամանակ պատասխատվության ենթարկվելու հարց առաջացնել և կառուցապատողի, և կառուցողի համար:

### **Ինչ անել առաջադրանքն ստանալուց հետո**

Համայնքի ղեկավարի կողմից տրված առաջադրանքն ստանալուց հետո կառուցապատողը (սեփականատերը) ձեռնամուխ է լինում կառուցապատման նախագծի մշակման աշխատանքներին: Կառուցապատման նախագծի մշակման համար կառուցապատողը պայմանագրային հիմունքներով այդ աշխատանքները պետք է պատվիրի համապատասխան լիցենզիա ունեցող նախագծային աշխատանքներ իրականացնող կառուցապատողին և հանձնի անհրաժեշտ ելակետային նյութերը՝

1. համայնքի ղեկավարի (մարզպետի) կողմից տրված առաջադրանքը
2. կազմված նախագծային առաջադրանքը (նախագծային հիմքը) (ձև1; ձև 2)
3. ինժեներական կառուցվածքներին, արտաքին ցանցերին, ակունքներին միանալու կամ ինքնուրույն գործելու տեխնիկական պայմանները
4. տեղանքի (տարածքի) տեղագրագեոդեզական

հանույթը, ինժեներաերկրաբանական լանդշաֆտային հետազոտությունների նյութերը (ինժեներաերկրաբանական հետազոտման)

5. նախագծվող տարածքի սանիտարահիգիենիկ պայմանները, էկոլոգիական առկա իրավիճակի վերերեքյալ նյութերը
6. բնակավայրերի պատմամշակութային հիմնավորման նախագծերը
7. պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության գոտիների նախագծերը

Նախագծման համար անհրաժեշտ ելակետային վերոգրյալ նյութերը և արտաքին ինժեներական ցանցերին միանալու տեխնիկական պայմանների (տեխնիկա-տնտեսական պայմաններ) վերաբերյալ փաստաթղթերը, պատվիրատուի (սեփականատիրոջ) և նախագծային աշխատանքներ իրականացնող կապալառու կազմակերպության միջև կնքված պայմանագրի հիման վրա, կարող է հավաքել կապալառուն: Համայնքի ղեկավարն համաձայնեցնում է նաև ճարտարապետաշինարարական նախագծերը:

Կապալառուի հետ կնքվող պայմանագրում կարող է նախատեսվել նաև, որ վերջինս հետամուտ լինի նաև նախագծային փաստաթղթերի փոձաքննությանը (եթե դա պահանջվում է): այն դեպքում, երբ շենքերի, շինությունների նախագծային փոձաքննությունը ըստ գործող նորմերի պարտադիր չէ (օրինակ մինչև երկու վերգետնյա և մեկ ստորգետնյա հարկ ունեցող անհատական բնակելի տներ, դրանց օժանդակ նշանակության կառույցներ), ապա դրանք կարող են փոխարինվել ՀՀ օրենսդրությանը և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին նախագծ համապատասխանության մասին նախագիծը թողարկող աշխատանքների պատասխանատուի գրավոր երաշխավորագրով: Հիշյալ երաշխավորագիրը տրվում է, եթե պատվիրատուի և կապալառուի միջև կնքված պայմանագրում (տես կետ 3 ) այն նախատեսված է:



Փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերի կրկնակի (բազմակի) կիրառման դեպքում, փորձաքննության են ենթակա միայն օբյեկտի զրոյական նիշից ներքև տեղակայված կառուցվածքների նախագծային փաստաթղթերը (տեղակայման նախագծեր), որոնք նույնպես կարող են փոխարինվել երաշխավորագրով:

Եթե ճարտարապետաշինարարական փաստաթղթերի փորձաքննություն կատարելուց հետո երեք տարվա ընթացքում օբյեկտի շինարարություն չի սկսվել, ապա տվյալ եզրակացությունը համարվում է ուժը կորցրած: Փորձաքննության եզրակացության հետ համաձայն չլինելու դեպքում վեճը կարող է լուծվել դատական կարգով:

### **Ավարտված շինարարական օբյեկտի նկատմամբ ծագած իրավունքը և այն գրանցելը**

Կապալառուն պատվիրատուին տեղեկացնում է շինարարությունն ավարտելու մասին: Կատարված աշխատանքները, ավարտված շինարարական օբյեկտի համապատասխանությունը հաստատված նախագծին և նորմատիվա - տեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին, ամրագրվում է պատվիրատուի (սեփականատիրոջ) և կապալառուի երկկողմանի պայմանագրով կամ օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտով, եթե օբյեկտն ընդունվում է առանց հանձնաժողովի, երկկողմանի ակտով, կառուցապատողը (պատվիրատուն) օբյեկտի կառուցումն ավարտելու մասին եզրակացություն ստանալու նպատակով դիմում է տարածքային բաժին և շահագրգիռ այլ մարմիններին՝ ներկայացնելով կատարողական փաստաթղթերը, իսկ կատարողական փաստաթղթերի կամ դրանց մի մասի բացակայության դեպքում, կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին վերականգնել դրանք՝ անհրաժեշտ տեխնիկական հետազոտությունների կամ փորձարկումների կատարման միջոցով: Շինարարության

ավարտի մասին կառուցապատողի դիմումն ստանալուց հետո տարածքային բաժինը և այլ շահագրգիռ կազմակերպություններ 5 օրվա ընթացքում պարտավոր են տալ եզրակացություն: Արդեն կառուցված օբյեկտի վերաբերյալ եզրակացություններն ստանալուց հետո համայնքի ղեկավարը տալիս է շինարարության ավարտական ակտ (ձև 3):

Ավարտված շինարարությունը փաստագրելու նպատակով կառուցապատողը (սեփականատերը) դիմում է համայնքի ղեկավարին՝ շահագործման ակտի ձևակերպման համար: Դիմումին կցվում են՝

1. ընդունող հանձնաժողովի ակտը կամ երկկողմանի ակտը
2. երկկողմանի ակտի դեպքում՝ տարածքային բաժնի, շահագրգիռ պետական մարմինների և շահագրգռվող կազմակերպությունների դրական եզրակացությունները
3. կատարողական փաստաթղթերի ցանկը
4. ակտի ձևակերպման համար տեղական վճարի մուծումը հավաստող անդորրագիրը

Համայնքապետը (մարզպետը) ներկայացրած փաստաթղթի հիման վրա, դիմումը ստանալու օրվանից 5 – օրյա ժամկետում ձևակերպում և կառուցապատողին (սեփականատիրոջը) է հանձնում շահագործման ակտը (ձև 4): Այն կազմվում է չորս օրինակից՝ մեկը մնում է համայնքապետարանում, մեկական օրինակ տրվում է կառուցապատողին, կապալառուին և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի գրանցման տարածքային մարմնին: Համայնքի ղեկավարը 3-օրյա ժամկետում այդ մասին ծանուցում է մարզպետին և տեսչության տարածքային բաժնին՝ կցելով շահագործման ակտի պատճեն: Շահագործման ակտը հիմք է հանդիսանում կառուցված օբյեկտի նկատմամբ գույքային իրավունքները ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի տարածքային բաժնի (կադաստր) գրանցելու և համապատասխան վկայական ստանալու համար:

**Ցանկ.  
Պետական գրանցման և տեղեկատվության տրամադրման  
վճարներ**

Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, պետական, համայնքային, ոչ պետական հիմնարկների եւ կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա քաղաքացիների եւ քաղաքացիություն չունեցող անձանց, իրավաբանական անձանց սեփականություն հանդիսացող կամ օգտագործման իրավունքով տրամադրված, գրավադրված, սերվիտուտով ծանրաբեռնված անշարժ գույքի հաշվառում, գնահատում:

**ՉՍՓԱԳՐՈՒՄ**

- |    |  |           |
|----|--|-----------|
| ա) | Շենքերի եւ շինությունների չափագրում 1 քմ.  | 20 դրամ   |
| բ) | Հողամասերի (բացառությամբ գյուղ. նշանակության, հատուկ պահպանվող տարածքների հողերի, անտառային հողերի) չափագրում՝ յուրաքանչյուր 100 քմ.   | 300 դրամ  |
| գ) | Հողամասերի (բացառությամբ գյուղ. նշանակության, հատուկ պահպանվող տարածքների հողերի, անտառային հողերի) 10 հեկտարից ավելի հողերի չափագրում հանութագրման եղանակով՝ յուրաքանչյուր 10000 քմ | 4000 դրամ |
| դ) | Գյուղատնտեսական նշանակության, հատուկ պահպանվող տարածքների, անտառային հողերի չափագրում՝ յուրաքանչյուր 1000 քմ   | 100 դրամ  |
| ե) | Գյուղատնտեսական նշանակության, հատուկ պահպանվող տարածքների, անտառային հողերի 10 հեկտարից ավելի հողերի չափագրում հանութագրման եղանակով՝ յուրաքանչյուր 10000 քմ.                        | 2000 դրամ |

**ՏԵՂԱԶՆՆՈՒԹՅՈՒՆ**

Բնակելի, հասարակական եւ արտադրական նշանակության շենքերի ու շինությունների համար՝

ա)	200-ից մինչեւ 500 քմ. մակերեսով	2500 դրամ
բ)	500-ից մինչեւ 1000քմ. մակերեսով	5000 դրամ
գ)	1000-ից մինչեւ 5000 քմ. մակերեսով	15000 դրամ
դ)	5000-ից մինչեւ 10000 քմ. մակերեսով	30000 դրամ
ե)	10000 քմ-ից ավել մակերեսով	60000 դրամ

**ԿԱՄԵՐԱԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**

- ա) Անշարժ գույքի սահմանված մասշտաբով (A3, 1000 դրամ A4 ֆորմատի) հատակագծի կազմում (բացառությամբ գյուղ. նշանակության, հատուկ պահպանվող տարածքների հողերի, անտառային հողերի) 1 թերթ.
- բ) A3, A4 ֆորմատի յուրաքանչյուր լրացուցիչ ներդիրի (հատակագիծ) համար 600 դրամ
- գ) Գյուղատնտեսական նշանակության հողերի, հատուկ պահպանվող տարածքների հողերի, անտառային հողերի սահմանված մասշտաբով (A3, A4 ֆորմատի) հատակագծի կազմում 1 թերթը. 500 դրամ

**ԳՆԱՀԱՏՈՒՄ**

- ա) Շենքերի եւ շինությունների յուրաքանչյուր միավորի գնահատում 350 դրամ
- բ) Հողամասերի յուրաքանչյուր միավորի գնահատում (ցանկը փոփ. 10.09.04 թիվ 215-Ն հրաման)

**ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ (1-16 ՀՈՐԿԱԾՆԵՐ)**

10.անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար՝

- ա) անշարժ գույքի պետական գրանցում կատարելու (բացառությամբ սեփական շնորհվող պետական, հանրային և համայնքային բնակարանային ֆոնդի բնակարանների) բազային տուրքի չափով
- բ) Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին տնամերձ, այգեգործական (ամառանոցային) և բնակելի տան շինարարության և դրա սպասարկման համար հատկացված և որպես սեփականություն նրանց անցած հողերի և ամրակայված գույքի պետական գրանցում կատարելու (բացառությամբ սահմանամերձ, լեռնային և ծայրամասային բնակավայրերի) բազային տուրքի հնգապատիկի չափով
- գ) Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ, լեռնային և ծայրամասային բազային տուրքի 30 տոկոսի չափով

<p>բնակավայրերում տնամերձ, այգեգործական (ամառանոցային) և բնակելի տան շինարարության և դրա սպասարկման համար հատկացված և որպես սեփականություն նրանց անցած հողերի և ամրակայված գույքի պետական գրանցում կատարելու</p>	<p>բազային տուր-քի 30 տոկոսի չափով</p>
<p>դ) հասարակական և արտադրական նշանակության անշարժ գույքի օտարման (վաճառք, փոխանակություն, նվիրատվություն) պայմանագրերի պետական գրանցում կատարելու համար՝</p>	<p>բազային տուր-քի քսանապատիկի չափով</p>
<p>դա) “փոքր” օբյեկտների, բացառությամբ “դբ” կետով նշված անշարժ գույքի (համաձայն “Պետական գույքի մասնավորեցման(սեփականաշնորհման) մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 2 հոդվածի)</p>	<p>բազային տուր-քի քսանապատիկի չափով</p>
<p>դբ) գյուղատնտեսական նշանակության անշարժ գույքի և մինչև 30 քառակուսի մետր կրպակների, տաղավարների, ավտոտնակների և այլ անշարժ գույքի</p>	<p>բազային տուր-քի տասնապատիկի չափով</p>
<p>դգ) հասարակական և արտադրական նշանակության այլ անշարժ գույքի</p>	<p>բազային տուր-քի քառասնապատիկի չափով</p>
<p>ե) անհատական բնակելի տների, այգետնակների պետական գրանցում կատարելու</p>	<p>բազային տուրքի չափով</p>
<p>զ) անշարժ գույքի առանձին միավորների (ավտոտնակ, հացատուն, գոմ և այլն կառույցներ) պետական գրանցում կատարելու</p>	<p>բազային տուրքի չափով</p>

- |  |   |
|--|---|
| <p>է) բնակելի նշանակության անշարժ գույքի՝ հողի (բացառությամբ՝ գյուղատնտեսական նշանակության սեփականաշնորհված հողերի) և ամրակայված գույքի օտարման (ձեռքբերման) պայմանագրի պետական գրանցում կատարելու</p>   | <p>բազային տուրքի քսանապատիկի չափով</p> |
| <p>ը) գյուղատնտեսական նշանակության սեփականաշնորհված հողամասերի յուրաքանչյուր միավորի օտարման (ձեռքբերման) պայմանագրի պետական գրանցում կատարելու համար</p>  | <p>բազային տուրքի չափով</p>             |
| <p>ը1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ, լեռնային, ծայրամասային բնակավայրերում գյուղատնտեսական նշանակության սեփականաշնորհված հողամասերի յուրաքանչյուր միավորի (բացառությամբ տնամերձ հողամասերի) օտարման (ձեռքբերման) պայմանագրի պետական գրանցում կատարելու համար</p> | <p>բազային տուրքի 30 տոկոսի չափով</p>   |
| <p>թ) կտակի կամ ժառանգման միջոցով ձեռք բերված անշարժ գույքի պետական գրանցում կատարելու</p>   | <p>բազային տուրքի չափով</p>             |
| <p>ժ) պետական և համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության և ենթավարձակալության պայմանագրի գրանցում կատարելու</p>  | <p>բազային տուրքի չափով</p>             |

<p>ժա) պետական և համայնքային սեփականություն համարվող հողերի օտարման, վարձակալության և ենթավարձակալության պայմանագրի պետական գրանցում կատարելու</p>	<p>բազային տուրքի չափով</p>
<p>ժբ) շենքերի և շինությունների վարձակալության և ենթավարձակալության պայմանագրի պետական գրանցում կատարելու</p>	<p>բազային տուրքի չափով</p>
<p>ժգ) Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին՝ սեփականություն համարվող անշարժ գույքի վարձակալության պայմանագրի պետական գրանցում կատարելու</p>	<p>բազային տուրքի չափով</p>
<p>ժգ1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին՝ գյուղատնտեսական նշանակության սեփանաշնորհված հողամասերի յուրաքանչյուր միավորի վարձակալության պայմանագրի պետական գրանցում կատարելու համար</p>	<p>բազային տուրքի չափով</p>
<p>ժդ) անշարժ գույքի օգտագործման իրավունքի պայմանագրերի պետական գրանցում կատարելու</p>	<p>բազային տուրքի չափով</p>
<p>ժե) անշարժ գույքի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության սեփականաշնորհված հողերի) և բնակելի նշանակության անշարժ գույքի գրավի (հիփոթեքի) պայմանագրերի գրանցում կատարելու և նշված գույքի հիփոթեքի առարկայի օտարման վրա սահմանափակում (արգելակում) կիրառելու համար</p>	<p>բազային տուրքի չափով</p>



<p>Ժե1) գյուղատնտեսական նշանակության սեփականաշնորհված հողամասերի յուրաքանչյուր միավորի, ինչպես նաև բնակելի նշանակության անշարժ գույքի գրավի (հիփոթեքի) պայմանագրի պետական գրանցում կատարելու և նշված հողամասերի գրավի (հիփոթեքի) առարկայի օտարման վրա սահմանափակում (արգելակում) կիրառելու համար</p>	<p>բազային տուրքի չափով</p>
<p>Ժե2) շարժական գույքի (բացառությամբ գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների) գրավի կամ լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի գրանցում կատարելու համար</p>	<p>բազային տուրքի կրկնապատիկի չափով</p>
<p>Ժե3) գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների գրավի կամ լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի գրանցում կատարելու համար</p>	<p>բազային տուրքի չափով</p>
<p>Ժզ) անշարժ գույքի փոխանակման պայմանագրերի պետական գրանցում կատարելու</p>	<p>բազային տուրքի չափով</p>
<p>Ժե) հողը մշտական օգտագործման հանձնելու որոշումների պետական գրանցում կատարելու</p>	<p>բազային տուրքի չափով</p>
<p>Ժը) հողամասերի սահմանները փոփոխելու, միավորելու և բաժանելու մասին պայմանագրերի պետական գրանցում կատարելու համար</p>	<p>բազային տուրքի չափով</p>
<p>Ժթ) անշարժ գույքի նկատմամբ իրավունքի սահմանափակման, այդ թվում՝ սերվիտուտի պայմանագրի պետական գրանցում կատարելու համար</p>	<p>բազային տուրքի չափով</p>

ի) անշարժ գույքի արտոնված օգտագործման իրավունքի արտոնագրի պետական գրանցում կատարելու համար	բազային տուրքի չափով
իա) անշարժ գույքի նկատմամբ ժամկետային, հայեցողական, անժամկետ, ցմահ իրավագործության պետական գրանցում կատարելու համար	բազային տուրքի հնգապատիկի չափով
իբ) անշարժ գույքի սեփականության իրավունքի առանձին իրավագործությունների պետական գրանցում կատարելու համար	բազային տուրքի չափով
իբ1) անշարժ գույքի նկատմամբ այլ իրավունքների պետական գրանցման համար	բազային տուրքի չափով
իգ) անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի դադարման մասին որոշումների, վճիռների և դատավճիռների պետական գրանցում կատարելու համար	բազային տուրքի հնգապատիկի չափով
իդ) հողի մշտական օգտագործման և հողի ու շենքերի, շինությունների վարձակալության իրավունքի դադարման մասին որոշումների, վճիռների և դատավճիռների պետական գրանցում կատարելու համար	բազային տուրքի հնգապատիկի չափով
իե) անշարժ գույքից կամ նրա մի մասին սեփականատիրոջ, օգտագործողի հրաժարվելու մասին որոշումների պետական գրանցում կատարելու համար	բազային տուրքի հնգապատիկի չափով

Ծանոթություն՝ բազային տուրքը 1000 դրամ է

**Անշարժ գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում**

1	Անշարժ գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկատվության տրամադրում՝ բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի	7000 դրամ
2	Գյուղատնտեսական նշանակության հողերի յուրաքանչյուր միավորի նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկատվության տրամադրում :	500 դրամ
	Գյուղատնտեսական նշանակության հողերի յուրաքանչյուր միավորի նկատմամբ գրանցված առանձին իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում:	200 դրամ
3	Սերվիտուտի վերաբերյալ տրվող տեղեկանք	500 դրամ
4	Գրավի հիփոթեքի առկայության վերաբերյալ տրվող տեղեկանք	500 դրամ
5	Անշարժ գույքի չափերի վերաբերյալ տրվող տեղեկանք	500 դրամ
6	Կադաստրային արժեքի վերաբերյալ տրվող տեղեկանք	500 դրամ
7	Ընդհանուր սեփականության դեպքում, սեփականատերերի թվի, բաժնեմասերի	500 դրամ

8	Անավարտ (կիսակառույց) շինությունների և մեյլիորատիվ նախապատրաստվող հողերի, համապատասխանաբար, ըստ ավարտվածության չափանիշների վերաբերյալ տրվող տեղեկանք	500 դրամ
8.1	Շարժական գույքի գրանցված իրավունքների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման	500 դրամ
9	Անշարժ գույքի կադաստր վարող մարմինների կողմից տրվող փաստաթղթերի քսերոպատճենի յուրաքանչյուր էջի համար	50 դրամ
10	Կադաստրային քարտեզներում արտահայտված տեղեկատվության տրամադրում Բազային շերտերում (1) արտահայտված տեղեկատվություն /1 հա/.	6000 դրամ
	ա/ Երևան քաղաք,	
	բ/ Քաղաքային համայնքների /Երևան քաղաքի տարածքից բացի/ կառուցապատված հատվածներ,	3000 դրամ
	գ/ Գյուղական համայնքների կառուցապատված հատվածներ,	1500 դրամ
	դ/ Քաղաքային /Երևան քաղաքի տարածքից բացի/ և գյուղական համայնքների չկառուցապատված հատվածներ և այլ տարածքներ	500 դրամ

11	Թեմատիկ շերտերում արտահայտված տեղեկատվություն (1 շերտ) ա) յուրաքանչյուր համայնք	500 դրամ
12	Կադաստրային քարտեզների պատճենների ստացում (տպագրություն): Յուրաքանչյուր օրինակի արժեքը, գունավոր ա) A01 (1.2 x 0.9 մ) ֆորմատ բ) A1 ֆորմատ գ) A2 ֆորմատ դ) A3 ֆորմատ ե) A4 ֆորմատ:	500 դրամ 2500 դրամ 1250 դրամ 625 դրամ 300 դրամ
13	Կադաստրային քարտեզների պատճենավորում էլեկտրոնային կրիչների վրա Յուրաքանչյուր պատճենը՝ ա) ճկուն սկավառակի վրա, բ) կոմպակտ սկավառակի վրա	500 դրամ 1000 դրամ
14	Կադաստրային քարտեզների քսերոպատճենների յուրաքանչյուր թերթի համար ա) A01 (1.2 x 0.9 մ) ֆորմատ բ) A1 ֆորմատ գ) A2 ֆորմատ դ) A3 ֆորմատ ե) A4 ֆորմատ:	600 դրամ 300 դրամ 150 դրամ 75 դրամ 30 դրամ
15	1:10000-10:1000 մասշտաբների տեղագրական քարտեզների յուրաքանչյուր անվանակարգային (նումենկլատուրային) թերթը (գունավոր)	6000 դրամ

16	1:500-1:10000 մասշտաբների տեղագրական հատակագծերի յուրաքանչյուր անվանակարգային (նումենկլատուրային) թերթը (սև-սպիտակ)	2000 դրամ
17	1:10000-1:1000000 մասշտաբների տեղագրական քարտեզների և 1:500-1:10000 մասշտաբների տեղագրական հատակագծերի անվանակարգային (նումենկլատուրային) թերթի յուրաքանչյուր քսերոպատճենի համար	1000 դրամ
18	Յուրաքանչյուր գեոդեզիական կետի կոորդինատը (աբսցիս, օրդինատ, բարձրություն)	1000 դրամ
19	Անշարժ գույքի միավորի (հողամաս, շենք, շինություն) յուրաքանչյուր շրջադարձային կետի կամ անկյան կոորդինատը (աբսցիս, օրդինատ)	100 դրամ
20	1:500-1:1000000 մասշտաբի տեղագրական հատակագծերի և քարտեզների յուրաքանչյուր անվանակարգային (նումենկլատուրային) թերթը ա) ռաստերային ֆորմատով բ) վեկտորային ֆորմատով	4000 դրամ 80000 դրամ
21	Օդալուսանկար ցանկացած մասշտաբի /18 x 18 կամ 23 x 23 սմ/, ռաստերային ֆորմատով	1500 դրամ
22	Տիեզերական նկար 1մ և ավելի պակաս թույլատրելիություն ունեցող, ռաստերային ֆորմատով, 1կմ <sup>2</sup>	12000 դրամ

23 Տիեզերական նկար 1մ ն ավելի 3000 դրամ  
 թույլատրելիություն ունեցող, ռաստերային  
 ֆորմատով, 1կմ2  
 (ցանկը փոփ 13.05.05 թիվ 131 Ն հրաման)

1. Կադաստրային քարտեզներում բազային է հանդիսանում անշարժ գույքը պատկերող շերտը, որը բաղկացած է երկու ենթաշերտերից (հողամասեր, շենքեր, շինություններ):
2. Կադաստրային քարտեզներում թեմատիկ են հանդիսանում անշարժ գույքի որակական բնութագրությունները պատկերող շերտերը: Թեմատիկ շերտերն են՝ հողերի նպատակային նշանակության, շենքերի և շինությունների նպատակային նշանակության, անշարժ գույքի սեփականության սուբյեկտների, կոմունիկացիաների և այլն: Յուրաքնչյուր թեմատիկ շերտ բաղկացած է երկու և ավելի ենթաշերտերից:
3. Մեկ գույնով տպագրության դեպքում 12 ա/-ե/ կետերում բերված վճարների համար կիրառվում է 0.4 գործակից:

Անշարժ գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում բաժնի 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19 կետերով նախատեսված, ինչպես նաև բնակելի նշանակության անշարժ գույքի (անհատական բնակելի տուն, բնակարան, այգետնակ, ավտոտնակ, տնամերձ, բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված հողամասեր և այլն), գյուղատնտեսական նշանակության և պահուստային հողերի, մինչև 200 քմ հասարակական, արտադրական նշանակության անշարժ գույքի (“Փոքր” օբյեկտ), չկառուցապատված հողամասերի և դրանց նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկատվության տրամադրումն իրականացվում է դիմումը

ներկայացնելու օրվանը հաջորդող աշխատանքային օրը:

200 քմ-ից ավելի հասարակական արտադրական նշանակության անշարժ գույքի և դրանց նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկատվության տրամադրումն իրականացվում է պատվիրատուի կողմից դիմումը ներկայացնելու օրվանը հաջորդող 2-րդ աշխատանքային օրը: Պատվիրատուի պահանջով այն կարող է իրականացվել նաև դիմումը ներկայացնելու օրվանը հաջորդող աշխատանքային օրը՝ կիրառելով 2 գործակից /2 x 7000 դրամ/:

Անշարժ գույքի կադաստր վարող մարմինների կողմից տրվող փաստաթղթերի քսերոպատճենների տրամադրումն իրականացվում է պատվիրատուի կողմից դիմումի ներկայացման նույն օրը:

### **Անշարժ գույքի վերաբերյալ մասնագիտական եզրակացություն և հատակագծի տրամադրում:**

Անշարժ գույքի վերաբերյալ միավորման, բաժանման և այլ բնույթի մասնագիտական եզրակացությունը և հատակագիծը տրամադրվում է դիմումը ներկայացնելու օրվանը հաջորդող աշխատանքային օրը, որի համար գանձվում է 5000 դրամ: /3-րդ կետը փոփ. 06.09.02 թիվ 783-Ն հրաման/

### **Իրավունքների ծագման, փոփոխման, փոխանցման և դադարման պետական գրանցման համար գանձվող վճարներ**

Անշարժ գույքի՝ հողամասի /բացառությամբ գյուղատնտեսական նշանակության, հատուկ պահպանվող տարածքների հողերի, անտառային հողերի, ինչպես նաև համայնքների վարչական սահմաններում և դրանցից դուրս գտնվող պետական պահուստային ֆոնդի հողամասերի/ և դրանց վրա ամրակայված շենքերի և շինությունների նկատմամբ իրավունքների պետական



գրանցման համար՝

- ա/ օտարում/առքուվաճառք, նվիրատվություն, փոխանակում, օտարման այլ գործարքներ/,
- բ/ կտակ կամ ըստ օրենքի ժառանգություն, առանձին իրավունքների գրանցում,
- գ/ վարձակալություն,
- դ/ անհատույց օգտագործում,
- ե/ գրավ, հիփոթեք
- զ/ ֆինանսական վարձակալություն /լիզինգ/,
- է/ սերվիտուտներ,
- ը/ այլ գույքային իրավունքներ:

10.000 դրամ

1.1 Անշարժ գույքի՝ հողամասի /բացառությամբ գյուղատնտեսական նշանակության սեփականաշնորհված հողամասերի, ինչպես նաև համայնքների վարչական սահմաններում և դրանցից դուրս գտնվող պետական պահուստային ֆոնդի հողամասերի/ և դրանց վրա ամրակայված շենքերի և շինությունների համար սեփականատերերին և օգտագործողներին մինչև իրավունքների պետական գրանցման համակարգի ներդրումը /1998 թվականի մարտի 1-ը/ տրամադրված իրավունքը հաստատող փաստաթղթերի փոխարինման՝ իրավունքների պետական գրանցման համար

3000 դրամ:

1 Գյուղատնտեսական նշանակության հողամասերի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար՝

- ա/ օտարում/առքուվաճառք, նվիրատվություն, փոխանակում, օտարման այլ գործարքներ/,
- բ/ կտակ կամ ըստ օրենքի ժառանգություն, առանձին իրավունքների գրանցում,
- գ/ վարձակալություն,
- դ/ անհատույց օգտագործում,

- ե/ գրավ, հիփոթեք,
- զ/ ֆինանսական վարձակալություն /լիզինգ/,
- է/ սերվիտուտներ,
- ը/ այլ գույքային իրավունքներ:

500 դրամ

2. Անշարժ գույքի՝ հողամասի /բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի/ և դրանց վրա ամրակայված շենքերի և շինությունների նկատմամբ իրավունքների, սահմանափակումների պետական գրանցման համար:

1000 դրամ

3. Գյուղատնտեսական նշանակության հողամասերի նկատմամբ իրավունքների, սահմանափակումների պետական գրանցման համար:

500 դրամ

4. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականների կամ նախկինում գույքագրման մարմինների կողմից տրված սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերի կրկնօրինակը տալու համար՝

ա/ եփականության, /օգտագործման/ իրավունք գրանցման վկայական

բ/ վարձակալության իրավունքի գրանցման վկայական,

գ/ գրավի, հիփոթեքի գրանցման վկայական,

դ/ գույքային թերթ,

է/ սեփականության վկայագիր,

զ/ սեփականության վկայական,

է/ տեխնիկական անձնագիր:

5000 դրամ

5. Համայնքների վարչական սահմաններում և սահմաններից դուրս մարզերի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության

հատուկ պահպանվող տարածքների, հողերի, անտառային հողերի և պահուստային ֆոնդի հողամասերի՝ /պետական ֆենդի ամառային արոտներ/ անկախ մարզերից, վարձակալության պայմանագրերից ծագող իրավունքները՝ հիմք ընդունելով մարզպետների կողմից հաստատված տվյալ հողամասի հատակագիծը, իրավունքների պետական գրանցման համար:

2000 դրամ

6. “Հայաստանի Հանրապետության պետական, հանրային և համայնքային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին” և “Պետական բնակարանային ֆոնդի բնակարանների անհատույց մասնավորեցման մասին” Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված պետական սեփականություն համարվող բնակարանային ֆոնդի բնակարանների անհատույց մասնավորեցումից ծագող սեփականության իրավունքի պետական, տվյալ բնակարանի չափագրման, կամերալ և գնահատության աշխատանքների համար:

1000 դրամ

7. Միջազգային կազմակերպությունների վարկերի և դրամաշնորհների, պետական բյուջեի միջոցների հաշվին /այդ թվում նաև Շիրակի և Լոռու մարզերում/ կառուցված և քաղաքացիներին փոխանցված բազմաբնակարան շենքերի բնակարանների, անհատական բնակելի տների նկատմամբ իրավունքների պետական գրանցման, Շիրակի և Լոռու մարզերի համայնքներին հանձնված նախկին պետական բնակարանային ֆոնդի նկատմամբ համայնքի անվամբ իրավունքների պետական գրանցման, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների վարկերի

և դրամաշնորհների, պետական բյուջեի միջոցների հաշվին Շիրակի և Լոռու մարզերում կառուցված բնակելի ֆոնդի նկատմամբ համայնքի սափականության իրավունքի օտարման /նվիրատվություն, առքուվաճառք/, պայմանագրի կնքման արդյունքում քաղաքացիների սեփականության իրավունքի պետական գրանցման համար՝

1000 դրամ

8.1 Շարժական գույքի գրավի կամ լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի գրանցում կատարելու համար՝

1000 դրամ:

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ցանկում ընդգծված սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերում գտնվող անշարժ գույքի նկատմամբ “Պետական գրանցման և տեղեկատվության տրամադրման վճարների ցանկում” սահմանված վճարները գանձվում են դրանց 50%-ի չափով:

Պետական գրանցման աշխատանքները իրականացվում են 7-րդ աշխատանքային օրը:

Պատվիրատուի պահանջով անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցումը կարող է իրականացվել նաև դիմումը ներկայացնելու օրվանը հաջորդող 4-րդ աշխատանքային օրը, 2-րդ աշխատանքային օրը /բացառությամբ բնակելի նշանակության անշարժ գույքի /անհատական բնակելի տուն, բնակարան, այգետնակ, ավտոտնակ, տնամերձ, բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված հողամասեր և այլն/, գյուղատնտեսական նշանակության և պահուստային հողերի, մինչև 200 քմ հասարակական, արտադրական նշանակության անշարժ գույքի /”Փոքր” օբյեկտ, չկառուցապատված հողամասերի/, գրանցման նպատակով իրականացված չափագրական կամ տեղագնության, կամերալ աշխատանքների համար սահմանված վճարների նկատմամբ կիրառելով համապատասխանաբար 2 և 3 գործակիցներ:

Բնակելի նշանակության անշարժ գույքի /անհատական բնակելի տուն, բնակարան, այգետնակ, ավտոտնակ, տնամերձ, բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված հողամասեր և այլն/, գյուղատնտեսական նշանակության և պահուստային հողերի, մինչև 200 քմ հասարակական, արտադրական նշանակության անշարժ գույքի /"Փոքր" օբյեկտ, չկառուցապատված հողամասերի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը իրականացվում է դիմումը ներկայացնելու օրվանը հաջորդող 2-րդ աշխատանքային օրը՝ առանց արագացման գործակիցների կիրառման:

Կադաստրային քարտեզագրումն ավարտված համայնքներում իրավունքների առաջին պետական գրանցման աշխատանքները իրականացվում են պետական բյուջեի միջոցների հաշվին առաջին պետական գրանցման հավաստագրի հանձման օրվանից սկսած վեց ամսվա ընթացքում, որից հետո այն իրականացվում է վճարովի՝ սեփականատիրոջ, օգտագործողի միջոցների հաշվին:

### **Ինչպես քանդել**

Շինության քանդման համար անհրաժեշտ է քանդման թույլտվություն, որը տալիս է համայնքի ղեկավարը, իսկ համայնքի սահմաններից դուրս՝ մարզպետը: Այն ստանալու համար կառուցապատողը /սեփականատերը/ համայնքապետին / մարզպետին / ներկայացնում է դիմում ( ձևN 2): Քանդման թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է սեփականատիրոջ կամ սահմանված կարգով լիազորված անձի շենքերն ու շինությունները քանդելու իրավունքը: Համայնքի ղեկավարը քանդման թույլտվությունը տալուց հետո երեք օրվա ընթացքում թույլտվության պատճենները ներկայացնում է ՀՀ քաղաքաշինության նախարարության պետական տեսչությանը և հարկային ծառայության համապատասխան տեսչությանն ու մարզպետին:

ՀՀ կառավարություն, Որոշում N 91  
ՀՀ-ՈՒՄ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ  
ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընդունվել է 02.02.2002  
Վավերացվել է 02.02.2002  
Ուժի մեջ է մտել 2.02.2002

## Հայաստանի Հանրապետության մարզպետ համայնքի ղեկավար

ին

(իրավասու մարմինը, ղեկավարի անունը, ազգանունը)

### Կառուցապատող

(իրավաբանական անձի անվանումը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն,  
հեռախոսահամարը)

### ԴԻՄՈՒՄ

#### Խնդրում եմ տալ շինարարության թույլտվություն

(նոր կառուցում, վերակառուցում, կապիտալ նորոգում և այլն, օբյեկտի անվանումը, հակիրճ  
բնորոշումը, հզորությունը)

#### աշխատանքների կատարման համար

(մարզը, համայնքը, փողոցը, շենքը, հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը)

հողամասի վրա:

Հայտնում եմ՝

1. Օբյեկտի նախագծային փաստաթղթերը՝

ա) մշակվել են

(նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, օրենքով սահմանված դեպքերում՝  
լիցենզիայի N-ը)

կողմից.

բ) սահմանված կարգով համաձայնեցվել են իրավասու մարմնի և օրենքով սահմանված այլ շահագրգիռ մարմինների հետ.

(նշել մարմինների անվանումները և համաձայնեցման ժամկետները)

գ) ստացել են \_\_\_\_\_ 200 թ. N  
փորձաքննության դրական եզրակացությունը (կամ ՀՀ  
օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ նախագծային  
աշխատանքների կապալառուի գրավոր երաշխավորագիրը)

(նշել փորձաքննության մարմնի (մարմինների) անվանումը, լիցենզիայի N-ը կամ  
երաշխավորագիր ներկայացնող կապալառուի անվանումը)

կողմից:

2. Օբյեկտի հիմնական ցուցանիշներն են՝

3. Պարտավորվում եմ շինարարական աշխատանքներն  
իրականացնել նախագծային փաստաթղթերով նշված  
\_\_\_\_\_ընթացքում,

/նշել շինարարության տևողությունը/

գործող կարգին համապատասխան և սույն դիմումով  
նշված տեղեկությունների հետ կապված բոլոր  
փոփոխությունների մասին հայտնել համայնքապետին  
/քաղաքապետին/ և ՀՀ քաղաքաշինության նախարարություն  
քաղաքաշինական պետական տեսչությանը /նշել սույն կարգի  
28-րդ կետով սահմանված մարմինները/

Կառուցապատող \_\_\_\_\_  
/պաշտոնը, ստորագրությունը, անունը, ազգանունը/

Կ.Տ.

ՀՀ կառավարություն, Որոշում N 2408-Ն  
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ  
ՓԵՏՐՎԱՐԻ 2-Ի N 91 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընդունվել է 29.12.2005  
Վավերացվել է 27.02.2006  
Ուժի մեջ է մտել 16.03.2006

Հայաստանի Հանրապետության մարզպետ համայնքի  
ղեկավար

ին

(իրավասու մարմինը, ղեկավարի անունը, ազգանունը)

Սեփականատեր(օգտագործող)

(իրավաբանական անձի անվանումը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը,  
գտնվելու(բնակվելու) վայրը, հեռախոսահամարը)

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ տալ

(շենքերը, շինությունները)

քանդման թույլտվություն

(մարզը, համայնքը, փողոցը, շենքը, հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը)

հողամասի վրա

(նշվում է քանդման նպատակը)

նպատակով:

Հայտնում եմ՝

1.Անշարժ գույքը փոփոխության ենթարկելու իրավագործությունը գրանցված է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային մարմնի կողմից՝ N-----200 թ վկայականով:



2. Քանդվող օբյեկտների հիմնական ցուցանիշներն են՝

*(ընդհանուր, բնակելի, օգտակար մակերեսը, հարկայնությունը, շինանյութերը և այլն)*

3. Նախագծային փաստաթղթերը՝

ա) մշակվել են

*(նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, օրենքով սահմանված դեպքերում՝  
լիցենզիայի N-ը)*

կողմից.

բ) սահմանված կարգով համաձայնեցվել են իրավասու մարմնի, օրենքով սահմանված այլ շահագրգիռ մարմինների հետ

*(նշել մարմինների անվանումները և համաձայնեցման ժամկետները)*

ստացել են ՀՀ օրենսդրությամբ սահմանված փորձաքննության դրական եզրակացությունները

կողմից:

*(նշել փորձաքննության մարմնի (մարմինների) կամ երաշխավորագիր ներկայացնող կապալառուի անվանումը)*

4. Պարտավորվում եմ քանդման աշխատանքներն իրականացնել նախագծային փաստաթղթերում նշված

ընթացքում,

*(նշել քանդման աշխատանքների տևողությունը)*

գործող կարգին համապատասխան և սույն դիմումում նշված տեղեկությունների հետ կապված բոլոր փոփոխությունների մասին հայտնել

*(նշել սույն կարգի 28-րդ կետով սահմանված մարմինները)*

Սեփականատեր(օգտագործող)

---

(պաշտոնը, ստորագրությունը, անունը, ազգանունը)

Կ. Տ.

(հրավարանական անձի համար)

\_\_\_\_\_ 200 թ.

-----

ԶԻՆԱՆՇԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒՅՈՒՆ  
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ  
ԹԻՎ \_\_\_\_\_

Ձև 3

Կառուցապատող

(հրավաբանական անձի անվանումը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը)

Կողմից կառուցված

(օբյեկտի անվանումը)

որը գտնվում է

(օբյեկտի հասցեն)

որի

ա) նախագծային փաստաթղթերը մշակվել են թիվ \_\_\_\_\_ լիցենզիա ունեցող

կողմից  
(նախագծային կազմակերպության անվանումը, անհատ ձեռներեցի անունը, ազգանունը)

բ) շինարարությունն սկսվել է

(շինարարության թույլտվություն տվող մարմնի անվանումը)

կողմից

տրված ‘ \_\_\_\_\_ ’ 200 թ. թիվ \_\_\_\_\_ շինարարության  
թույլտվության համաձայն

գ) շինարարությունն իրականացվել է թիվ \_\_\_\_\_ լիցենզիա ունեցող

(շինարարությունն իրականացնողի անվանումը)

կապալառուի կողմից

դ) հեղինակային հսկողությունն իրականացվել է թիվ \_\_\_\_\_ լիցենզիա ունեցող \_\_\_\_\_ կողմից

(հեղինակային հսկողությունն իրականացնողի անունը, ազգանունը)

ե) տեխնիկական հսկողությունն իրականացվել է թիվ \_\_\_\_\_ լիցենզիա ունեցող \_\_\_\_\_ կողմից

(տեխնիկական հսկողությունն իրականացնողի անունը, ազգանունը)

զ) ներկայացված են ծածկված աշխատանքների \_\_\_\_\_ ակտ

(ակտերի թիվը)

է) ներկայացված են փորձարկումների \_\_\_\_\_ ակտ

(ակտերի թիվը)

ը) շինարարության վարման ընդհանուր մատյանը  
(\_\_\_\_\_ էջ)

թ) օբյեկտի հիմնական ցուցանիշներն են

---

---

---

---

Օբյեկտի շինարարությունն իրականացվել է նախագծային փաստաթղթերին համապատասխան և նորմատիվ պահանջներին բավարարող որակով:

Հաստատում եմ՝

Հեղինակային հսկողություն

\_\_\_\_\_  
(ստորագրությունը)

\_\_\_\_\_  
(անունը, ազգանունը)

Տեխնիկական հսկողություն

\_\_\_\_\_  
(ստորագրությունը)

\_\_\_\_\_  
(անունը, ազգանունը)

\_\_\_\_\_  
(օբյեկտի հասցեն և անվանումը)

Կառուցված է նախագծային առաջադրանքին համապատասխան և շինարարությունը համարվում է ավարտված:

Սույն ակտը կազմված է 4 օրինակից, որոնցից մեկական օրինակ տրամադրվում են՝

ա) \_\_\_\_\_

(կառուցապատողի անունը կամ անվանումը)

բ) \_\_\_\_\_

(գլխավոր կապալառուի անվանումը)

գ) \_\_\_\_\_

(ավարտական ակտը ձևակերպող մարմնի անվանումը)

դ) \_\_\_\_\_

(ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարչության տարածքային մարմինը)

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

---

\_\_\_\_\_  
(մարզպետ, քաղաքապետ, գյուղապետ)

\_\_\_\_\_  
(ստորագրությունը)

\_\_\_\_\_  
(անունը, ազգանունը)

‘ \_\_\_\_\_ ’ \_\_\_\_\_ 200 թ.

քաղ. (գյուղ) \_\_\_\_\_

ՀՀ կառավարություն, Որոշում N 626-Ն  
ԱՎԱՐՏՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓԱՍՏԱԳՐՄԱՆ  
ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընդունվել է 08.05.2003  
Վավերացվել է 07.06.2003  
Ուժի մեջ է մտել 05.07.2003

Ձև 4

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓԱՍՏԱԳՐՄԱՆ

N \_\_\_\_\_ 200 թ.

Կառուցապատող \_\_\_\_\_ կողմից կառուցված,  
(իրավաբանական անձի անվանումը,  
ֆիզիկական անձի անունը, ազգանունը)

որը գտնվում է

\_\_\_\_\_ (օբյեկտի անվանումը և տեղադրությունը)

համարվում է ավարտված և պատրաստ է շահագործման, որի

ա) նախագծային փաստաթղթերը մշակվել են

\_\_\_\_\_ (նախագծային կազմակերպության անվանումը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)

\_\_\_\_\_ կողմից.

բ) շինարարությունն սկսվել է

\_\_\_\_\_ (շինարարության թույլտվություն տվող մարմնի անվանումը)

\_\_\_\_\_ կողմից.

տրված \_\_\_\_\_ 200 թ. N \_\_\_\_\_ շինարարության թույլ-  
տվության համաձայն.

գ) շինարարությունն իրականացվել է

\_\_\_\_\_ (գլխավոր կապալառուի անվանումը)

\_\_\_\_\_ կողմից

դ) օբյեկտի հիմնական ցուցանիշներն են

ե) հատուկ պայմանները

ՀԻՄՔԵՐ`

ա) կառուցապատողի դիմումը \_\_\_\_\_ 200 թ.

բ) ընդունող հանձնաժողովի ակտը \_\_\_\_\_ 200 թ.  
կամ

երկկողմանի ակտը` քաղաքաշինական պետական տեսչության տարածքային բաժնի, շահագրգիռ պետական մարմինների և շահագործող կազմակերպությունների դրական եզրակացություններով.

գ) կատարողական փաստաթղթերի ցանկը \_\_\_\_\_ թերթ

Համայնքի ղեկավար ( ՀՀ մարզպետ, Երևանի քաղաքապետ)

\_\_\_\_\_  
(ստորագրությունը)

\_\_\_\_\_  
(անունը, ազգանունը)

\_\_\_\_\_ 200 թ.



ՀՀ կառավարություն, Որոշում N1473-Ն  
ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ  
ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընդունվել է 29.08.2002  
Վավերացվել է 25.09.2002 Ուժի  
մեջ է մտել 10.10.2002

Ձև N 5

Հայաստանի Հանրապետության մարզպետ,  
համայնքի ղեկավար

*(իրավասու մարմինը, ղեկավարի անունը, ազգանունը)*

Կառուցապատող

*(իրավաբանական անձի անվանումը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն,  
հեռախոսահամարը)*

ՀԱՅՏ

Խնդրում եմ տալ ճարտարապետահատակագծային  
առաջադրանք

*(կառուցում, վերակառուցում, կապիտալ նորոգում, գործառական նշանակության փոփոխում և  
այլն, օբյեկտի անվանումը, հակիրճ բնորոշումը, հզորությունը )*

նախագծման համար

*(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքը համարը,*

\_\_\_\_\_ հասցեում գտնվող հողամասում:

*հողամասի ծածկագիրը)*

ՀՀ կառավարություն, Որոշում N1473-Ն  
ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ  
ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընդունվել է 29.08.2002  
Վավերացվել է 25.09.2002 Ուժի  
մեջ է մտել 10.10.2002

Ձև N 5

Հայաստանի Հանրապետության մարզպետ,  
համայնքի ղեկավար

*(իրավասու մարմինը, ղեկավարի անունը, ազգանունը)*

Կառուցապատող

*(իրավաբանական անձի անվանումը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն,  
հեռախոսահամարը)*

ՀԱՅՏ

Խնդրում եմ տալ ճարտարապետահատակագծային  
առաջադրանք

*(կառուցում, վերակառուցում, կապիտալ նորոգում, գործառական նշանակության փոփոխում և  
այլն, օբյեկտի անվանումը, հակիրճ բնորոշումը, հզորությունը )*

Նախագծման համար

*(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքը համարը,*

\_\_\_\_\_ հասցեում գտնվող հողամասում:

*հողամասի ծածկագիրը)*

Նախատեսում եմ

(օրյեկտի նախատեսվող պարամետրերը և գործառական նշանակությունը՝ այդ թվում՝ փոփոխվող)

Կից ներկայացնում եմ՝

ա) կառուցապատվող հողամասի հատակագիծը՝ նախագծվող օրյեկտի առաջարկվող տեղանշմամբ, իսկ կառույցի գործառական նշանակության փոփոխության դեպքում՝ նաև վերջինիս հատակագիծը (հատակագծերը).

բ) անշարժ գույքի նկատմամբ սեփականության կամ օգտագործողի՝ անշարժ գույքը փոփոխելու ու իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը:

Կառուցապատող \_\_\_\_\_  
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

\_\_\_\_\_ 200 թ.

Կ. Տ

# ՀՈՂԱՄԱՍ

## Վարձակալություն

### Ինչ է վարձակալությունը

Վարձակալությունը գրավոր պայմանագրով, որոշակի վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և (կամ) օգտագործմանը գույք հանձնելն է:

Վարձակալությամբ կարող է հանձնվել ցանկացած գույք, որն օգտագործման ընթացքում չի կորցնում իր բնական հատկությունները և չի սպառվում: Վարձակալության պայմանագրում պարտադիր պետք է նշվեն այնպիսի տվյալներ, որոնք թույլ են տալիս որոշակիորեն և հստակ առանձնացնել այդ գույքը այլ նմանատիպ գույքերից: Այս պայմանի բացակայությունը հավասարազոր է պայմանագրի չկնքմանը: Գույքը վարձակալությամբ հանձնելու իրավունքը պատկանում է միայն տվյալ գույքի սեփականատիրոջը: Պայմանագրի ժամկետները սահմանվում են կողմերի համաձայնությամբ, կոնկրետ ժամկետի նշման բացակայության դեպքում պայմանագիրը համարվում է անորոշ ժամկետով կնքված: Անշարժ գույքի (հողամաս, շենք, շինություն) նկատմամբ կնքված վարձակալության պայմանագիրը պարտադիր կարգով ենթակա է նոտարական վավերացման, որից հետո՝ 30 օրվա ընթացքում այդ իրավունքը պետք է գրանցվի անշարժ գույքի կադաստրի տարածքային բաժանմունքներում:

### Հողի վարձակալություն

Հողամասի վարձակալության իրավունքը հողի սեփականատիրոջ և վարձակալի միջև վարձակալության պայմանագրի պայմաններով, վճարի դիմաց հողամասի ժամկետային օգտագործման իրավունքն է: Այս պայմանագրով վարձակալին սեփականատերը կարող է տրամադրել նաև հողամասի ենթավարձակալության և գրավ դնելու իրավունքները: Պետական և համայնքների սեփականություն հանդիսացող հողերի վարձակալության ժամկետը չի կարող 99

տարուց ավել լինել, իսկ գյուղատնտեսական նշանակության հողերինը՝ մինչև 25 տարի: Նշված հողամասերի վարձակալության իրավունքով տրվում է մրցույթով՝ հրապարակային սակարկությունների միջոցով (բացի կառավարության կողմից սահմանված դեպքերի):

## **Ինչպես են կազմակերպվում մրցույթները**

Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու համար համայնքի ղեկավարը կամ մարզպետը ստեղծում են մրցութային հանձնաժողովներ, որտեղ ընդգրկվում են համայնքի վարչակազմի համապատասխան մասնագետներ, ավագանու անդամներ, իսկ մարզային հանձնաժողովներում՝ մարզպետարանի մասնագետները և կառավարության լիազորված պետական մարմինների տարածքային ստորաբաժումների ներկայացուցիչները: Համայնքների մրցութային հանձնաժողովները գլխավորում են համայնքի ղեկավարները, իսկ մարզային հանձնաժողովները՝ մարզպետները կամ նրանց կողմից լիազորված՝ մարզպետարանի աշխատակազմի պաշտոնատար անձր: Մրցութային հանձնաժողովները սահմանում են մրցույթի պայմանները: Մրցույթն անցկացնելուց մեկ ամիս առաջ զանգվածային լրատվության միջոցներով (Հայաստանի Հանրապետություն՝ օրաթերթում՝ պարտադիր է) հանձնաժողովը տեղեկություն է հրապարակում մրցույթի առարկայի, ձևի, անցկացման տեղի, ամսվա, օրվա, ժամի, մրցույթի պայմանների ու պահանջների, անցկացման կարգի, մասնակցության ձևակերպման, հաղթած անձի որոշման և նախնական գնի մասին: Մրցույթներն անցկացվում են բաց և դրանց կարող է մասնակցել ցանկացած անձ: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացվի հայտ, մասնակցության համար վճարի անդորրագիր և անձնագիր: Մասնակիցը մրցույթի օրը վճարում է նաև

նախավճար, որը չպետք է գերազանցի մրցույթի առարկայի նախնական գնի 5%-ը: Այն վերադարձվում է մասնակցին, եթե նա չի հաղթում մրցույթում, իսկ հաղթելու դեպքում՝ հաշվարկվում է պարտավորությունների կատարման հաշվարկում: Մրցույթին մասնակցելու հայտերի ընդունումը դադարեցվում է այն անցկացնելուց 3 աշխատանքային օր առաջ: Մրցույթում հաղթող է համարվում հանձնաժողովի եզրակացությամբ լավագույն պայմաններ առաջարկած մասնակիցը, իսկ առաջադրված պայմանների հավասարության դեպքում նախապատվությունը տրվում է տվյալ համայնքի բնակչին կամ տվյալ համայնքում գրանցված իրավաբանական անձին:

Վարձակալությամբ տրամադրված գյուղատնտեսական նշանակության հողամասի նկատմամբ վարձակալն ունի պայմանագիրը նոր ժամկետով երկարաձգելու նախապատվության իրավունք, եթե նա հողամասն օգտագործել է արդյունավետ և պահպանել պայմանագրի պայմանները:

Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի համար վարձավճարի նվազագույն չափը սահմանվում է տվյալ հողամասի հողահարկի դրույքաչափից ոչ պակաս և գանձվում է պայմանագրով սահմանված կարգով: Մրցույթների անցկացման փաթեթում ներառվում են նաև վարձակալության պայմանագրի նախագիծը և մրցույթի կազմակերպչի կողմից հաստատված հողամասի հատակագիծը՝ որպես պայմանագրի հավելված, իսկ հողամասի կառուցապատման դեպքերում՝ նաև մրցույթի պայմաններով նախատեսված քաղաքաշինական նորմերի և սահմանափակումների, կառուցապատման պայմանների հիման վրա սահմանված կարգով կազմված ճարտարապետահատակագծային առաջադրանքը: Այս փաստաթղթերը մրցույթի արդյունքների ամփոփումից հետո 10-օրյա ժամկետում տրամադրվում են մրցույթի հաղթողին:

Համայնքի վարչական սահմաններից դուրս գտնվող հողամասերի վարձակալության մրցույթները կազմակերպում են մարզային հանձնաժողովները մարզպետի գլխավորությամբ:

Դրանք տրամադրվում են՝

- ա) Գյուղատնտեսական գործունեություն, այդ թվում՝ հեռագնա անասնապահություն իրականացնելու
- բ) Քաղաքաշինական գործունեություն իրականացնելու
- գ) ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ նպատակներով օգտագործելու համար:

Հողամասերը հեռագնա անասնապահության համար վարձակալության իրավունքով տրամադրելու մասին հայտում նշվում է հողամասի չափը, իսկ նրան կից ներկայացվում են՝

1. տեղեկանք անասնազլխաքանակի մասին՝ ըստ տեսակների և սեռահասակային խմբերի
2. 3 և ավել տարի ժամկետով վարձակալության դեպքում՝ հողերի բարելավման, կուլտուրտեխնիկական, բնապահպանական և պատմամշակույթային փոքոցառումների իրականացման բիզնես-ծրագիր՝ տարածքի օգտագործման տեխնիկա-տնտեսական հիմնավորումներով
3. ՀՀ Գյուղատնտեսության նախարարության կողմից տրված անասունների տեղափոխման երթուղու մասին փաստաթուղթը՝ համաձայնեցված ՀՀ բնապահպանության նախարարության հետ:

## **Ինչ է արվում մրցույթից հետո**

Մրցույթում հաղթած անձը և հանձնաժողովի անդամները, մրցույթի արդյունքների հրապարակումից անմիջապես հետո ստորագրում են մրցույթի արդյունքների մասին արձանագրություն, որի հիման վրա համայնքի ղեկավարի, մարզպետի կամ լիազորված անձի և հաղթողի միջև կնքվում է հողի վարձակալության և (կամ) կառուցապատման պայմանագիր (տես հավելված №1.2): Հողի վարձակալության և (կամ) կառուցապատման պայմանագիրը կնքվելուց հետո պետք է վավերացվի նոտարական կարգով (տես հավելված՝ նոտարական վճարների չափի մասին) և նոտարական

վավերացումից հետո, 30 օրվա ընթացքում պայմանագրից ծագած իրավունքը ենթակա է պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման կադաստրի տարածքային ստորաբաժանումներում, և վարձակալին տրվում է սահմանված ձևով հաստատված վկայագիր:

### **Որ հողերը չեն կարող վարձակալության տրամադրվել մրցույթով**

Հողամասերը վարձակալությամբ տրամադրվում են մրցույթով բացառությամբ՝

- ա) Սակավաբնակարան՝ պետական և հանրային սեփականաշնորհված բնակարանային ֆոնդի սեփականատերերին, եթե նրանք չեն ցանկացել ձեռք բերել սեփականության իրավունք
- բ) Առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացման ժամանակ քարտեզագրման արդյունքում անշարժ գույքի նկատմամբ իրավունքը հավաստող փաստաթղթերում սեփականատերերի կողմից նշված չափից 20%-ը գերազանցող և փաստացի չօգտագործվող հողամասերը
- գ) Այն հողամասերը, որոնք տիրապետվում են առանց իրավաբանական ձևակերպման և որոնցից օգտագործողները օգտվում են անընդմեջ ու բացահայտ ավելի քան 10 տարի
- դ) ՀՀ կառավարության որոշմամբ
- ե) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրավաբանական անձանց կամ քաղաքացիներին օգտագործման իրավունքով տրամադրված հողամասերը պետական հանդիսացող հողամասերի հետ փոխանակման անհրաժեշտություն առաջանալիս
- զ) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրված հողամասի մի մասն այլ հողօգտագործողի տրամադրելու դեպքում՝ նախկին



- հողօգտագործողի իրավունքները սահմանված կարգով դադարեցվելուց հետո
- է) Մրցույթը երկրորդ անգամ չկայանալիս
  - ը) Օգտագործման իրավունքով քաղաքացիներին և իրավաբանական անձանց տրամադրված բնակելի, հասարակական, արդյունաբերական, գյուղատնտեսական և այլ նշանակության հողամասերի ընդլայնման անհրաժեշտության դեպքում, եթե լրացուցիչ տրամադրվող հողամասը հնարավոր չէ որպես առանձին միավոր տրամադրել մրցութային կարգով
  - թ) Մինչև 20 քառակուսի մետր մակերես ունեցող տաղավարների, կրպակների, ավտոտնակների, առևտրի ու սպասարկման այլ օբյեկտների կառուցման համար
  - ժ) Պետական անտառային ֆոնդի հողերից՝ Հայանտառ՝ պետական ոչ առևտրային կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված հողամասերը վարձակալության հանձնելիս:

Նույն ձևով կարող է վարձակալության տրվել նաև տեղական ինքնակառավարման, իմչպես նաև տարածքային կառավարման մարմինների իրավասության տակ գտնվող, կամ նրանց սեփականությունը հանդիսացող շենքերն ու շինությունները կամ դրանց մի մասը:

ՀՀ կառավարություն, Որոշում N 286  
ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ  
ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՄԱՅՈՂ  
ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ  
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ  
ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
(2-ԴԴ ՄԱՍ)

Ընդունվել է 12.04.2001  
Վավերացվել է 12.04.2001  
Ուժի մեջ է մտել 08.05.2001

**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

\_\_\_\_\_ 200 թ.

\_\_\_\_\_ (այսուհետ՝ վարձատու), մի կողմից, և  
(անունը, ազգանունը)

\_\_\_\_\_ (վարձակալի անունը, ազգանունը, անվանումը)

(այսուհետ՝ վարձակալ), մյուս կողմից, 200 թ. \_\_\_\_\_ -ի  
N \_\_\_\_\_ որոշման և մրցույթի արդյունքների մասին N \_\_\_\_\_  
արձանագրության հիման վրա կնքեցին սույն պայմանագիրը  
հետևյալի մասին.

**I. Պայմանագրի առարկան**

1. Սույն պայմանագրին համապատասխան՝ վարձատուն  
մրցույթում հաղթող ճանաչված անձին՝ վարձակալին,  
համապատասխան վարձավճարի դիմաց, նրա  
տիրապետմանը և օգտագործմանն է տրամադրում  
\_\_\_\_\_ վայրում գտնվող \_\_\_\_\_ քառ.  
մետր մակերեսով հողամասը՝ համաձայն սույն պայմանագրի  
հավելվածը կազմող հողամասի հատակագծի, որը սույն  
պայմանագրի անբաժանելի մասն է:

2. Հողամասը տրամադրվում է \_\_\_\_\_  
(հողամասի տրամադրման նպատակը, պայմանները)

\_\_\_\_\_

(ներդրումները, դրանց ժամկետները, կառուցման ժամկետները և այլն)

\_\_\_\_\_

Հողամասի օգտագործման նկատմամբ  
սահմանափակումները \_\_\_\_\_

3. Հողամասի նկարագիրը \_\_\_\_\_

## II. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

4. Վարձակալն իրավունք ունի՝

4.1. տիրապետելու և օգտագործելու վարձակալած հողամասը՝ սույն պայմանագրին և հողի նպատակային և նշանակությանը համապատասխան,

4.2. վարձակալված հողամասը ենթարկելու բարելավումների և փոփոխությունների (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնելու կապիտալ շինարարություն)՝ դրա նպատակային օգտագործմանը համապատասխան, միայն վարձատուի համաձայնությամբ և նրա կողմից սահմանված պայմաններով ու ժամկետներում՝ վարձակալված հողամասը ենթավարձակալության հանձնելու երրորդ անձի,

4.3. հողամասի վարձակալության ժամկետի ավարտմանը կամ պայմանագրի վաղաժամկետ դադարեցմանը նախորդող 3 ամսվա ընթացքում միջոցներ ձեռնարկելու սույն պայմանագրի պայմաններին համապատասխան վարձակալված գույքը ժամանակին վարձատուին վերադարձնելու համար, հանելու վարձատուի գրավոր համաձայնությամբ իր կողմից հողի վրա կատարված բաժանելի բարելավումները, իսկ ամրակալված անշարժ գույքը կողմերի միջև որոշվող

պայմաններում օտարելու վարձատուին,

4.4. վարձատուից պահանջելու պատճառով ավանդների հատուցում՝ պայմանագրի միակողմանի վաղաժամկետ լուծման դեպքում,

4.5. վարձատուի համաձայնությամբ՝ նախապատվության իրավունքով շարունակելու սույն պայմանագիրը՝ դրա ժամկետի ավարտից հետո:

5. Վարձակալը պարտավոր է՝

5.1. Ժամանակին ու սույն պայմանագրով սահմանված կարգով մուծել վարձավճարը,

5.2. Ժամանակին և սահմանված կարգով ապահովել հողահատկացման մասին որոշմամբ և սույն պայմանագրով նախատեսված հողամասի օգտագործմանը ներկայացվող պահանջներն ու պահպանման միջոցառումները,

5.3. թույլ չտալ վարձակալված հողամասի այնպիսի փոփոխություն, որը կհանգեցնի հողի արժեքի նվազեցմանը կամ բնութագրերի վատթարացմանը,

5.4. վարձատուի համաձայնությամբ՝ փոփոխությունների ենթարկել վարձակալված հողամասը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանն ու սույն պայմանագրին համապատասխան,

5.5. մինչև պայմանագրով նախատեսված վարձակալության ժամկետը լրանալը կամ պայմանագրի վաղաժամկետ դադարեցումը, միջոցներ ձեռնարկել վարձատուի գրավոր համաձայնությամբ իր կողմից հողի վրա կատարված բաժանելի բարելավումները հանելու և ամրակայված անշարժ գույքը վարձատուին օտարելու, անբաժանելի բարելավումները և առանց վարձատուի գրավոր համաձայնության իր կողմից հողի վրա կատարված բարելավումներն ու ամրակայված գույքը (բաժանելի և անբաժանելի) վարձատուի պահանջով թողնելու կամ վերացնելու միջոցով հողամասը ժամանակին ազատելու համար,

5.6.վարձակալված հողամասի վրա գտնվող և վարձակալին սեփականության իրավունքով պատկանող ամրակալված գույքը երրորդ անձի մոտ գրավ դնելու կամ օտարելու դեպքում նախապես գրավոր տեղյակ պահել վարձատուին,

5.7.արգելվում է վարձակալության իր իրավունքն ինքնակամ կերպով լրիվ կամ մասնակիորեն երրորդ անձի փոխանցելը կամ զիջելը, հողը կամ դրա նկատմամբ գույքային իրավունքները գրավ դնելը, իրավաբանական անձի կանոնադրական կապիտալ ներդնելը կամ հողամասն օգտագործման իրավունքով (հատուցմամբ կամ անհատույց) երրորդ անձի տրամադրելը:

6. Վարձատուն իրավունք ունի՝

6.1.վարձակալից պահանջելու հողն օգտագործել սույն պայմանագրով սահմանված նպատակներով և պայմաններին համապատասխան, պահպանելու հողի օգտագործման նկատմամբ սահմանափակումները, իրականացնելու հողի բարելավման միջոցառումներ,

6.2.վարձակալի կամ նրա ներկայացուցչի հետ միասին մուտք գործելու վարձակալված հողամաս՝ օգտագործման պայմանները հսկելու նպատակով՝ խոչընդոտելով վարձակալի բնականոն գործունեությունը,

6.3.վարձակալված հողամասն օտարելու հոգուս երրորդ անձի, եթե այդ օտարումը չի խախտում վարձակալի նախապատվությամբ հողի ձեռքբերման իրավունքը և չի անդրադառնում վարձակալության պայմանագրի վրա,

6.4.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն պայմանագրով սահմանված դեպքում ու կարգով վաղաժամկետ լուծելու պայմանագիրը,

6.5.օգտվելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներից,

6.6.հողամասի վարձակալության ժամկետն ավարտվելուց, կամ պայմանագիրը վաղաժամկետ դադարեցվելուց

հետո իր հայեցողությամբ տնօրինելու իր պահանջով վարձակալի կողմից թողնված հողի բարելավումները և ամրակայված գույքը (բաժանելի և անբաժանելի):

7. Վարձատուն պարտավոր է՝

7.1. չմիջամտել վարձակալի տնտեսական գործունեությանը, եթե այն վնաս չի պատճառում շրջակա միջավայրին և չի խախտում այլ անձանց իրավունքներն ու 333

7.2. վարձակալին նախօրոք տեղեկացնել հողամասն այլ անձանց տնօրինությանը կամ սեփականությանը հանձնելու վերաբերյալ:

**III. Վարձավճար**

8. Հողամասի տարեկան վարձավճարը կազմում է հողամասի կադաստրային արժեքի \_\_\_\_\_ տոկոսը, որը \_\_\_\_\_ Հայաստանի Հանրապետության դրամ է:

9. Հողի կադաստրային արժեքի փոփոխման դեպքում վարձատուն պարտավոր է նոր կադաստրային արժեքի մասին նոխօրոք գրավոր տեղյակ պահել վարձակալին: Հողի կադաստրային արժեքի աճի դեպքում նոր կադաստրային արժեքի հիման վրա հաշվարկված վարձավճարի չափը ենթակա է կիրառման՝ ոչ շուտ, քան դրա մասին գրավոր տեղեկացվելուց 15 օր անց: Վարձավճարը չի փոփոխվում, եթե վարձակալը մինչև համապատասխան 15-օրյա ժամկետի ավարտը սույն պայմանագրի 21.2-րդ կետով նախատեսված կարգով վարձատուին ծանուցել է պայմանագրի վաղաժամկետ դադարեցման մասին:

10. Բացառությամբ սույն պայմանագրի 9-րդ կետով նախատեսված դեպքերի՝ վարձավճարի չափը կարող է փոփոխվել՝ միայն սույն պայմանագրի կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ:

Վարձավճարի փոփոխման վերաբերյալ փոխադարձ համաձայնության բացակայության դեպքում կողմերը կարող են դադարեցնել պայմանագիրը՝ սույն պայմանագրի 20.2-րդ կամ 21.2-րդ կետերով նախատեսված կարգով:

11. Վարձակալման ընթացիկ վճարումները վարձակալի կողմից մուծվում են հավասար չափերով՝ ըստ տարվա օրացուցային եռամսյակների, ոչ ուշ, քան մինչև համապատասխան եռամսյակի վերջին ամսվա 25-ը: Առաջին վարձակալական վճարումները կատարվում են որպես կանխավճար, ոչ ուշ, քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 10 օրվա ընթացքում: Վերջին վարձակալական վճարումը կատարվում է ոչ ուշ, քան մինչև պայմանագրի գործողության ժամկետի վերջին ամսվա 25-ը:
12. Սույն պայմանագրով վարձակալական վճարումները կատարվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում՝ \_\_\_\_\_ հաշվի համարին: Վարձատուն նշված հաշվի համարի կամ վճարումների կատարման կարգի փոփոխման մասին նախապես տեղյակ է պահում վարձակալին:
13. Ոչ լրիվ վճարային ժամանակաշրջանների համար վարձավճարը հաշվարկվում է՝ ելնելով տվյալ օրացուցային եռամսյակի օրերի փաստացի թվին համապատասխանող 333օրական վարձավճարի վերահաշվարկից:

#### **IV.Տույժերը և տուգանքները**

14. Վարձակալը վարձավճարների ամբողջությամբ կամ մասնակի ուշացման յուրաքանչյուր օրվա համար վճարում է տուգանք՝ վարձատուին չվճարված գումարի 0.05 տոկոսի չափով:

**V. Պայմանագրի ժամկետները**

15. Սույն պայմանագիրը կնքվում է \_\_\_\_\_ ժամկետով:
16. Սույն պայմանագիրը կնքման և նոտարական վավերացման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանում՝ իրավունքների պետական գրանցման համար:
17. Սույն պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված բոլոր վճարները, այդ թվում՝ պետական տուրքը, գանձվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ:
18. Պայմանագրի ժամկետը կարող է երկարաձգվել կողմերի համաձայնության դեպքում:
19. Սույն պայմանագրով սահմանված ժամկետի ավարտից հետո՝ վարձակալված հողամասի տիրապետումն ու օգտագործումը վարձակալի կողմից չդադարեցնելը պայմանագրի նորոգման կամ վարձակալության ժամկետի երկարաձգման համար հիմք չի հանդիսանում: Վարձակալի պարտականությունները պահպանվում են նրա կողմից վարձակալված հողամասի ժամկետանց տիրապետման և օգտագործման ամբողջ ընթացքում:

**VI. Պայմանագրի դադարումը**

20. Սույն պայմանագիրը դադարում է՝
  - 20.1. պայմանագրի ժամկետը լրանալու դեպքում,
  - 20.2. կողմերի փոխադարձ համաձայնությամբ,



20.3. պայմանագրով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքում և կարգով պայմանագիրը վաղաժամկետ լուծվելու դեպքում:

21. Սույն պայմանագիրը կարող է վարձակալի կողմից միակողմանի վաղաժամկետ լուծվել՝
  - 21.1. եթե հողը վարձակալից անկախ պատճառով դարձել է օգտագործման համար ոչ պիտանի,
  - 21.2. ցանկացած այլ հիմքերով՝ դրա մասին մեկ ամիս առաջ գրավոր ծանուցելով վարձատուին:
22. Սույն պայմանագիրը կարող է վարձատուի կողմից միակողմանի վաղաժամկետ լուծվել, եթե՝
  - 22.1. վարձակալը 3 ամիս ուշացնում է վարձավճարի մուծումը,
  - 22.2. վարձակալի հողամասն օգտագործվում է ոչ նպատակային, խախտվում են օգտագործման պայմանները,
  - 22.3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հիմքերով կամ սույն պայմանագրի խախտումների դեպքում:

## **VII. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը**

23. Սույն պայմանագրով՝ անհաղթահարելի ուժ ասելով հասկացվում է ջրհեղեղ, պայթյուն, հրդեհ, երկրաշարժ, այլ տարեկան աղետներ, պատերազմ, ռազմական գործողություններ, զինված հարձակում, զանգվածային անկարգություններ, մայրուղային խողովակաշարերի վթար կամ այլ նման իրադարձություններ:
24. Կողմերն իրենց պարտականությունները մասնակիորեն կամ լրիվ չկատարելու համար ազատվում են սույն պայմանագրով սահմանված պատասխանատվություններից, եթե դա

տեղի է ունեցել սույն պայմանագրի կնքումից հետո ծագած այնպիսի անհաղթահարելի ուժի հետևանքով, որը կողմերը չէին կարող կանխել կամ կանխագուշակել և, որի պատճառով վարձակալը չի կարող շարունակել հողի բնականոն օգտագործումը:

25. Անհաղթահարելի ուժի ազդեցության ժամանակահատվածը մեկ ամսվանից ավելի երկարաձգվելու կամ դրա հետևանքները 6 ամսվա ընթացքում չվերացվելու դեպքում կողմերը պետք է ընդունեն սույն պայմանագրի շարունակման մասին որոշում:

### **VIII. Եզրափակիչ դրույթներ**

26. Սույն պայմանագիրը կնքվում է \_\_\_\_\_ հավասարազոր օրինակից, որոնցից մեկական օրինակ պահվում է կողմերի մոտ, ինչպես նաև անշարժ գույքի գրանցման լիազորված պետական մարմնում:
27. Սույն պայմանագիրը պարտադիր է կողմերի իրավահաջորդների համար:
28. Վարձակալի կողմից վարձակալված հողամասի վրա ամրակայված գույքը հօգուտ երրորդ անձի օտարվելու դեպքում նրան են անցնում նաև հողի նկատմամբ վարձակալին՝ նախքան ամրակայված գույքի օտարումը պատկանող իրավունքները և պարտականությունները:
29. Հողի սեփականատիրոջ կողմից հողը երրորդ անձի օտարվելիս՝ վարձակալը պահպանում է վարձակալված հողի նկատմամբ մինչև հողի օտարումն իր ունեցած իրավունքները և պարտականությունները:

30. Կողմերի միջև տարաձայնությունները լուծվում են փոխադարձ համաձայնությամբ կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմերի վավերատարերը՝

Վարձատու \_\_\_\_\_

(անունը, հայրանունը,  
ազգանունը)

Վարձակալ \_\_\_\_\_

(անունը, հայրանունը,  
ազգանունը)

\_\_\_\_\_  
(ստորագրությունը)

\_\_\_\_\_  
(ստորագրությունը)

ՀՀ կառավարություն, Որոշում N 286  
ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ  
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՄԱՅՈՂ  
ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ  
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ  
ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
(2-րդ ՄԱՍ)

Ընդունվել է 12.04.2001  
Վավերացվել է 12.04.2001  
Ուժի մեջ է մտել 08.05.2001

**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԾԱՎԱԼԵԼՈՒ  
ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

\_\_\_\_\_ 200 թ.

ՀՀ \_\_\_\_\_ մարզի \_\_\_\_\_ համայնքի ղեկավարը

\_\_\_\_\_ (այսուհետ՝ վարձատու), մի կողմից,և  
(անունը, ազգանունը)

\_\_\_\_\_ (այսուհետ՝ վարձակալ), մյուս կողմից,  
(վարձակալի անվանումը կամ անունը, ազգանունը)

200 թ. \_\_\_\_\_-ի N \_\_\_\_\_ որոշման և մրցույթի  
արդյունքների մասին N \_\_\_\_\_ արձանագրության հիման վրա  
կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**I. Պայմանագրի առարկան**

1. Սույն պայմանագրին համապատասխան՝ վարձատուն  
մրցույթում հաղթող ճանաչված անձին՝ վարձակալին,  
համապատասխան վարձավճարի դիմաց, նրա  
տիրապետմանը և օգտագործմանն է տրամադրում  
\_\_\_\_\_ վայրում գտնվող \_\_\_\_\_ հս

մակերես ունեցող հողամասը, որից՝  
 վարելահող՝ \_\_\_\_\_ հա,  
 \_\_\_\_\_ կարգի պտղատու այգի՝ \_\_\_\_\_ հա,  
 \_\_\_\_\_ կարգի խախողի այգի՝ \_\_\_\_\_ հա,  
 \_\_\_\_\_ կարգի խոտհարք՝ \_\_\_\_\_ հա,  
 \_\_\_\_\_ կարգի արոտ՝ \_\_\_\_\_ հա,  
 \_\_\_\_\_ կարգի անօգտագործելի \_\_\_\_\_ հա՝  
 համաձայն սույն պայմանագրի հավելվածը կազմող  
 հողամասի հատակագծի, որը սույն պայմանագրի  
 անբաժանելի մասն է:  
 Հողամասը տրամադրվում է \_\_\_\_\_ նպատակով:  
 Հողամասի նկարագիրը \_\_\_\_\_

*(գտնվելու վայրը, ապահովվածությունը ռոտզման ջրով, ճանապարհով և այլն)*

## II. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

1. Վարձակալն իրավունք ունի՝
  - 1.1. տիրապետելու և օգտագործելու վարձակալած հողամասը՝ սույն պայմանագրին և հողի նպատակային նշանակությանը համապատասխան,
  - 1.2. միայն վարձատուի համաձայնությամբ՝ վարձակալած արոտավայրը հանձնելու ենթավարձակալության՝ նրա կողմից սահմանված պայմաններով և ժամկետով,
  - 1.3. վարձատուից պահանջելու պատճառված վնասների հատուցում՝ պայմանագիրը միակողմանի վաղաժամկետ լուծելու դեպքում,
  - 1.4. վարձատուի համաձայնությամբ՝ նախապատվության իրավունքով շարունակելու սույն պայմանագիրը՝ դրա ժամկետի ավարտից հետո:
2. Վարձակալը պարտավոր է՝
  - 2.1. Ժամանակին և սույն պայմանագրով սահմանված կարգով մուծել վարձավճարը,

2.2. հողամասն օգտագործել արդյունավետ, թույլ չտալ վարձակալած հողամասի բնական վիճակի վատթարացում, բերրիության նվազեցում,

2.3. անասունների՝ արոտավայր տեղափոխումն իրականացնել համաձայն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կողմից հաստատված երթուղիների և ժամկետների:

3. Վարձատուն իրավունք ունի՝

3.1. վարձակալից պահանջելու հողն օգտագործել սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու պայմաններին համապատասխան,

3.2. վարձակալի կամ նրա ներկայացուցչի հետ միասին մուտք գործելու վարձակալած հողամաս՝ օգտագործման պայմանները հսկելու նպատակով՝ չխոչընդոտելով վարձակալի բնականոն գործունեությանը,

3.3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն պայմանագրով սահմանված դեպքում ու կարգով վաղաժամկետ լուծելու պայմանագիրը,

3.4. օգտվելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներից:

4. Վարձատուն պարտավոր է՝

4.1. չմիջամտել վարձակալի տնտեսական գործունեությանը, եթե այն վնաս չի պատճառում շրջակա միջավայրին և չի խախտում անձանց իրավունքներն ու օրինական շահերը,

4.2. սույն պայմանագիրը նոտարական վավերացման օրվանից 30-օրյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանում՝ իրավունքների պետական գրանցման համար,

4.3.սույն պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված բոլոր ծախսերը, այդ թվում՝ պետական տուրքը, վճարում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

### III.Վարձավճարը

5. Հողամասի տարեկան վարձավճարը կազմում է տվյալ հողամասի կադաստրային գուտ եկամտի \_\_\_\_\_ տոկոսը, որը \_\_\_\_\_ դրամ է: Պայմանագրի կնքման պահին հողամասի կադաստրային գուտ եկամուտը կազմում է \_\_\_\_\_ դրամ:

5.1.Հողի կադաստրային գուտ եկամտի փոփոխման դեպքում վարձատուն պարտավոր է դրա մասին նախօրոք գրավոր տեղյակ պահել վարձակալին: Հողի կադաստրային գուտ եկամտի աճի դեպքում նոր վարձավճարի չափը ենթակա է կիրառման ոչ շուտ, քան դրա մասին գրավոր տեղեկացվելուց 15 օր անց: Վարձավճարը չի փոփոխվում, եթե վարձակալը մինչև համապատասխան 15-օրյա ժամկետի ավարտը սույն պայմանագրի 8.4-րդ կետով նախատեսված կարգով վարձատուին ծանուցել է պայմանագրի վաղաժամկետ դադարեցման մասին:

5.2.Բացառությամբ սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված դեպքերի՝ վարձավճարի չափը կարող է փոփոխվել միայն սույն պայմանագրի կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ:

Վարձավճարի փոփոխման վերաբերյալ փոխադարձ համաձայնության բացակայության դեպքում կողմերը կարող են դադարեցնել պայմանագիրը՝ սույն պայմանագրի 8.2-րդ կամ 8.4-րդ կետերով նախատեսված կարգով:

5.3.Վարձակալական ընթացիկ վճարումները վարձակալի կողմից մուծվում են հավասար չափերով՝ ըստ

տարվա օրացուցային եռամսյակների, ոչ ուշ, քան մինչև համապատասխան եռամսյակի վերջին ամսվա 25-ը: Առաջին վարձակալական վճարումները կատարվում են որպես կանխավճար, ոչ ուշ, քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 10 օրվա ընթացքում: Վերջին վարձակալական վճարումը կատարվում է ոչ ուշ, քան մինչև պայմանագրի գործողության ժամկետի վերջին ամսվա 25-ը:

5.4.Սույն պայմանագրով վարձակալական վճարումները կատարվում են Հայաստանի Հանրապետության \_\_\_\_\_ բանկում \_\_\_\_\_ հաշվի համարին: Վարձատուն նշված հաշվի համարի կամ վճարումների կատարման կարգի փոփոխման մասին նախապես տեղյակ է պահում վարձակալին:

5.5.Ոչ լրիվ վճարային ժամանակաշրջանների համար վարձավճարը հաշվարկվում է՝ ելնելով տվյալ օրացուցային եռամսյակի օրերի փաստացի թվին համապատասխանող օրական վարձավճարի վերահաշվարկից:

#### **IV.Տույժերը և տուգանքները**

6. Վարձակալը վարձավճարների ամբողջությամբ կամ մասնակի ուշացման յուրաքանչյուր օրվա համար վճարում է տուգանք՝ վարձատուին չվճարված գումարի 0.05 տոկոսի չափով:

#### **V.Պայմանագրի ժամկետները**

7. Սույն պայմանագիրը կնքվում է \_\_\_\_\_ ժամկետով:
  - 7.1.Պայմանագրի ժամկետը կարող է երկարաձգվել կողմերի համաձայնության դեպքում:
  - 7.2.Սույն պայմանագրով սահմանված ժամկետի ավարտից հետո վարձակալված հողամասի տիրապետումն ու օգտագործումը վարձակալի կողմից չդադարեցվելը



պայմանագրի նորոգման կամ վարձակալության ժամկետի երկարաձգման համար հիմք չի հանդիսանում: Վարձակալի պարտականությունները պահպանվում են նրա կողմից վարձակալված հողամասի ժամկետանց տիրապետման և օգտագործման ամբողջ ընթացքում:

## VI. Պայմանագրի դադարումը

8. Սույն պայմանագիրը դադարում է՝
  - 8.1. պայմանագրի ժամկետը լրանալու դեպքում,
  - 8.2. կողմերի փոխադարձ համաձայնությամբ,
  - 8.3. պայմանագրով ու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքում և կարգով պայմանագիրը վաղաժամկետ լուծվելու դեպքում:
  - 8.4. Սույն պայմանագիրը կարող է միակողմանի վաղաժամկետ լուծվել վարձակալի կողմից՝ Եթե հողը վարձակալից անկախ պատճառով դարձել է օգտագործման համար ոչ պիտանի, ցանկացած այլ հիմքերով՝ դրա մասին մեկ ամիս առաջ գրավոր ծանուցելով վարձատուին:
  - 8.5. Սույն պայմանագիրը վարձատուի կողմից կարող է միակողմանի վաղաժամկետ լուծվել, եթե՝ վարձակալը 3 ամիս ուշացնում է վարձավճարի մուծումը, վարձակալի հողամասն օգտագործվում է ոչ նպատակային, խախտվում են օգտագործման պայմանները,
  - 8.6. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հիմքերով կամ սույն պայմանագրի խախտումների դեպքում:

## VII. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը

9. Անհաղթահարելի ուժի ազդեցության ժամանակահատվածը մեկ ամսվանից ավելի երկարաձգվելու կամ դրա հետևանքները վեց ամսվա ընթացքում չվերացվելու

դեպքում կողմերը պետք է ընդունեն սույն պայմանագրի շարունակման մասին որոշում:

**VIII. Եզրափակիչ դրույթներ**

10. Սույն պայմանագիրը կնքվում է \_\_\_\_\_ հավասարազոր օրինակից, որոնցից մեկական օրինակը պահվում է կողմերի մոտ, ինչպես նաև անշարժ գույքի գրանցման լիազորված պետական մարմնում:

10.1. Սույն պայմանագիրը պարտադիր է կողմերի իրավահաջորդների համար:

10.2. Կողմերի միջև ծագած տարաձայնությունները լուծվում են փոխադարձ համաձայնությամբ կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմերի վավերատարերը՝

Վարձատու \_\_\_\_\_  
(անունը, հայրանունը,  
ազգանունը)

Վարձակալ \_\_\_\_\_  
(անունը, հայրանունը,  
ազգանունը)

\_\_\_\_\_  
Հ/հ

\_\_\_\_\_  
Հ/հ

\_\_\_\_\_  
(ստորագրությունը)

\_\_\_\_\_  
(ստորագրությունը)

Կ.Տ.

Կ.Տ.

## ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### Ինչ է սեփականության իրավունքը

Սեփականության իրավունքը սուբյեկտի օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը:

/ՀՀ քաղ. օրենսգիրք Հ. 163/

Առք ու վաճառքի կամ այլ պայմանագրով ձեռք բերված գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ծագում է գույքը ձեռք բերողին հանձնելու պահից, իսկ եթե գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման ապա գրանցման պահից, անշարժ գույքի նկատմամբ կնքված ցանկացած պայմանագիր կնքվում է գրավոր, ենթակա է նոտարական վավերացման, իսկ իրավունքը՝ պետական գրանցման:

Բնակելի տան, բնակարանի, բնակելի տան մի մասի կամ բնակարանի մասի վաճառքի պայմանագրի էական պայման է սովյալ բնակելի տարածքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով օկտագործման գրանցված իրավունք ունեցող անձանց անվանացանկը, ինչպես նաև այն անձանց անվանացուցակը, որոնք բնակարանի կամ բնակելի տան նկատմամբ օգտագործման իրավունք են ունեցել մինչև 1999 թ. թվականի հունվարի 2-ը: Համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքի օտարման, վարձակալության, կամ գույքի նկատմամբ այլ իրավունքները փոխանցելու գործարքների վավերացման ժամանակ նոտարին պետք է ներկայացվի նաև հաստատված վարձավճարների չափը և աճուրդային եղանակով օտարվող գույքի մեկնարկային գինը: Պետական սեփականություն հանդիսացող հողամասը համայնքի ավագանու կամ համայնքի ղեկավարի կողմից օտարելու կամ վարձակալության հանձնելու վերաբերյալ գործարքները վավերացնելիս պահանջվում է ներկայացնել դրանց իրականացման իրավական հիմքերը, ինչպես նաև իրավական

ակտը, համաձայն որի՝ տվյալ համայնքի ղեկավարին իրավունք է վերապահվել կնքել նման գործարքներ:

### **Ինչ է ռենտան.**

Ռենտան դա գրավոր պայմանագրի մի ձև է, ըստ որի պայմանագրի մի կողմը (Ռենտա ստացողը (գույքի սեփականատերը )) մյուս կողմին (Ռենտա վճանողին (գույքը գնողին)) սեփականության իրավունքով հանձնում է գույք, իսկ ռենտա վճարողը (գնորդը ) պարտավորվում է ստացողին (գույքի սեփականատիրոջը) այդ գույքի դիմաց պարբերաբար վճարել ռենտա՝ որոշակի գումար: Ռենտայի վճարի դիմաց անշարժ գույքի օտարումը նախատեսող ռենտայի պայմանագրով անշարժ գույքի սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման. Ռենտայի պայմանագրով կարող է սահմանվել անժամկետ (մշտական ռենտա) կամ ռենտա ստացողի կյանքի ընթացքում (ցմահ ռենտա) ռենտա վճարելու պարտականություն:

Անշարժ գույքի նկատմամբ ցանկացած իրավունք պարտադիր կարգով պետք է գրանցվի ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումում, որի համար կատարվելիք վճարումների չափը սահմանվում և փոփոխվում է օրենքով:

Անհրաժեշտ է գրավոր դիմում ներկայացնել գյուղապետարան, որի հիման վրա գյուղապետի հանձնարարականով, հաշվի առնելով տվյալ հողամասի նկատմամբ Ձեր իրավունքը հավաստող առկա փաստաթղթերը, աշխատակիցների կողմից ուսումնասիրվում է դիմումում նշված փաստերը, կազմվում արձանագրություն (կամ զեկուցագիր): Եթե ստուգման (ուսումնասիրման) արդյունքում հաստատվում է Ձեր իրավունքների խախտման փաստը, ապա գյուղապետարանը Ձեզ գրավոր պետք է տեղեկացնի այդ մասին, որը և հիմք է դատական կարգով պաշտպանել Ձեր խախտված իրավունքը և պահանջել նաև պատճառված վնասի հատուցում:

## ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Հանրապետությունում գործում է եռաստիճան դատական համակարգ՝ առաջին ատյանի դատարան, վերաքննիչ դատարան (II ատյան), վճռաբեկ դատարան (III ատյան): Առաջին ատյանի դատարանի օրինական ուժի մեջ չմտած վճիռներից, դատավճիռներից հետո դժգոհ կողմը իրավունք ունի սահմանված ժամկետներում (վճռի հրապարակումից հետո 15 օրվա ընթացքում) դիմել վերաքննիչ դատարան, որտեղ գործը նորից քննվում է: Վերաքննիչ դատարանի վճիռները, դատավճիռները սահմանված կարգով բողոքարկվում են վճռաբեկ դատարան, որը կարող է մերժել բերված բողոքը, կամ գտնելով, որ բավարար հիմքեր կան վճիռը, դատավճիռը լրիվ կամ մասնակիորեն բեկանելու՝ այն բեկանում է և ուղարկվում է նույն դատարան այլ կազմով նորից քննելու:

Յուրաքանչյուր ոք իր իրավունքների պաշտպանման համար իրավունք ունի սահմանված կարգով դիմելու դատարան, որի համար անհրաժեշտ է դիմումում նշել՝

1. դատարանի անվանումը, որն ներկայացվում է հայցադիմումը,
2. գործին մասնակցող անձանց անունը, ազգանունը, հայրանունը իրավաբանական անձի անվանումը, նրանց բնակության (գտնվելու վայրի) հասցեները, այդ թվում՝ հայցվոր քաղաքացու անձնագրային տվյալները, սոցիալական քարտի համարը՝ դրա առկայության դեպքում, հայցվոր իրավաբանական անձի հարկ վճարողի հաշվառման համարը և պետական գրանցման կամ պետական գրանցման վկայականի համարը,
3. Հայցագիւնը, եթե հայցը ենթակա է գնահատման
4. Հանգամանքները, որոնց վրա հիմնվում են հայցապահանջները
5. Հայցապահանջը հաստատող ապացույցները
6. Բռնագանձման ենթակա կամ վիճարկվող գումարի հաշվարկը

7. Հայցվորի պահանջները, իսկ մի քանի պատասխանողների դեմ հայց հայցվելիս, հայցվորի՝ նրանցից յուրաքանչյուրի ուղղված պահանջները
8. Հայցադիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը

Հայցադիմումին կից ներկայացվում են սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարած լինելը հավաստող փաստաթուղթ կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու միջնորդություն, հայցապահանջը հաստատող ապացույցներ, եթե հայցադիմումն ստորագրված է հայցվորի ներկայացուցչի կողմից, ապա՝ լիազորությունները հաստատող լիազորագիրը:



ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻՆ

ՀԱՅՑՎՈՐՆԵՐ – 1. անուն ազգանուն հայրանուն  
/անձն.-----; unq.քարտ.-----  
հասցեն ----- ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ Գ.

2. անուն ազգանուն հայրանուն  
/անձն.-----; unq.քարտ.-----  
հասցեն ----- ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ Գ.

ՊԱՏԱՍԽԱՆՈՂՆԵՐ-1. անուն ազգանուն հայրանուն  
/անձն.-----; unq.քարտ.-----  
հասցեն -----

2. անուն ազգանուն հայրանուն  
/անձն.-----; unq.քարտ.-----  
հասցեն -----

Հ Ա Յ Ց Ա Դ Ի Մ Ո Ւ Մ

(Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի  
ճանաչման պահանջի մասին)

Ավելի քան 15 տարի է, որ համատեղ կարգով օգտագործում ենք սեփականության իրավունքով մեզ պատկանող տնամերձ հողամասին կից 0.23 հա հողակտորը, որն համատեղ ուժերով ազատել ենք քարքարուտներից և մշակելի դարձնելու համար կատարել զգալի նյութական և այլ ներդրումներ: Հաշվի առնելով վերոհիշյալը և նկատի ունենալով, որ մեր կողմից տիրապետվող հողակտորը որևէ սերվիտուտով ծանրաբեռնված չէ, հարևան հողակտորներից առանձնացված է սեփականության իրավունքով մեզ պատկանող հողամասի հետ միասին և ղեկավարվելով ՀՀ քաղ. դատ. օրենսգրքի 187-րդ հոդվածով՝ խնդրում ենք ձեռք բերման վաղեմության հիմքով այդ հողակտորի նկատմամբ ճանաչել սեփականության մեր իրավունքը:

հայցվորներ

/  
/

/  
/

Կից ներկայացվում է՝

1. անձնագրերի և սոց. քարտերի լուսապատճենները
2. սեփականության իրավունքի վկայագրերը
3. -----գյուղապետարանի N 745 տեղեկանքը
4. Պետտուրքի վճարման անդորրագիրը

ՀՀ Ազգային ժողով, Օրենք N ՀՕ-186  
ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ (1-16  
ՀՈԴՎԱԾՆԵՐ)

Ընդունվել է 27.12.1997  
Վավերացվել է 10.01.1998  
Ուժի մեջ է մտել 11.01.1998

Հոդված 9. Դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական տուրքի դրույքաչափերը.

Առաջին ատյանի և տնտեսական դատարաններին տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

1. հայցադիմումների և որպես վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձ գործին մասնակցելու մասին դիմումների համար`
 

ա) գույքային պահանջով	հայցագնի երկու տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի 150 տոկոսից
բ) ոչ գույքային պահանջով	բազային տուրքի քառապատիկի չափով
  
2. իրավաբանական անձանց սնանկ ճանաչելու դիմումների համար
 

	բազային տուրքի 500-պատիկի չափով
--	---------------------------------

- |    |   |                                  |
|----|---|----------------------------------|
| 3. | քաղաքացիներին սնանկ ճանաչելու դիմումների համար  | բազային տուրքի 100-պատիկի չափով  |
| 4. | <p>հատուկ վարույթի գործերի վերաբերյալ դիմումների`</p> <p>ա) անչափահասին լրիվ գործունակ ճանաչելու համար</p> <p>(4-րդ կետի բ, գ, դ ենթակետերն ուժը կորցրել են 13.12.00 թիվ ՀՕ-123 օրենք)</p> <p>ե) այլ դիմումների համար</p> | բազային տուրքի չափով             |
| 5. | իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման մասին դիմումների համար   | բազային տուրքի կրկնապատիկի չափով |
| 6. | ըստ ներկայացնողի և օրդերային կորցրած արժեթղթով հավաստված իրավունքները վերականգնելու մասին դիմումների համար  | բազային տուրքի չափով             |
| 7. | վիճնորդ դատարանների վճիռների հարկադիր կատարման կատարողական թերթ տալու մասին դիմումների համար`   |                                  |

- |   |  |
|---|--|
| ա) գույքային պահանջով   | բռնագանձման ենթակա գումարի երկու տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի 150 տոկոսից  |
| բ) ոչ գույքային պահանջով  | բազային գույքի քառապատիկի չափով  |
| 8. դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ բողոքների համար՝ |  |
| ա) գույքային պահանջի գործերով                                     | վերաքննիչ բողոքում նշված վիճարկվող գումարի 3 տոկոսի չափով, իսկ եթե վիճարկվում են առաջին ատյանի դատարանի կողմից բավարարված կամ չբավարարված պահանջներն ամբողջությամբ կամ բավարարված կամ չբավարարված պահանջները չեն վիճարկվում, ապա առաջին ատյանի դատարան հարուցված և բողոքարկվող հայցի հայցագնի 3 տոկոսի չափով |
| բ) ոչ գույքային բնույթի պահանջի գործերով                          | բազային տուրքի տասնապատիկի չափով   |
| գ) հատուկ վարույթի գործերով                                       | բազային տուրքի ութապատիկի չափով  |

9. դատարանի վճիռների ու որոշումների դեմ բերված վճռաբեկ բողոքների համար՝
- ա) գույքային պահանջի գործով հայցագնի 3 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի տասնապատիկից և ոչ ավելի բազային տուրքի հազարապատիկից
- բ) ոչ գույքային բնույթի պահանջի գործերով բազային տուրքի 20-պատիկի չափով
- գ) հատուկ վարույթի գործերով բազային տուրքի տասնապատիկի չափով
10. (10-րդ կետն ուժը կորցրել են 13.12.00 թիվ ՀՕ-123 օրենք)
11. դատարանի վճռի, դատավճռի, դատարանի որոշման պատճենը (կրկնօրինակը) գործի քննությանը մասնակցող կողմերի կամ այլ անձանց գրավոր դիմումի համաձայն տալու համար բազային տուրքի 50 տոկոսի և պատրաստված յուրաքանչյուր էջի համար՝ բազային տուրքի 15 տոկոսի չափով
12. գործին մասնակցող անձանց հայցադիմումին կից փաստաթղթերի պատճենները գործի քննությանը մասնակցող կողմերի կամ այլ անձանց գրավոր դիմումի համաձայն տալու համար բազային տուրքի 20 տոկոսի և պատրաստված յուրաքանչյուր էջի համար՝ բազային տուրքի 10 տոկոսի չափով

13. դատական նիստի համա- պատրաստված յուրաքան- կարգչային ձայնագրման ջուր կրիչի (կոմպլեկտ կրիչի բնօրինակից պատճե- լագերային սկավառակի) նահանված կրիչ տալու համար՝ բազային տուրքի համար չափով

(9-րդ հոդվածի փոփ. 28.12.98 ՀՕ-277, 12.10.99 թիվ ՀՕ-4, 11.09.01 ՀՕ-219, 29.05.02 ՀՕ-358-Ն, 07.07.05 ՀՕ-148-Ն օրենքներ)

Հոդված 10. Պետական արբիտրաժ տրվող հայցադիմումների, ինչպես նաև պետական արբիտրաժի վճիռները (որոշումները) վերանայելու վերաբերյալ տրվող դիմումների համար պետական տուրքի դրույ- քաչափերը  
(10 հոդվածը հանվել է 28.12.98 ՀՕ-277 օրենք)

Ծանոթություն՝ բազային տուրքը 1000 դրամ է

## ՆՈՏԱՐ

### Ի՞նչ գործողություններ է իրականացնում նոտարը

Նոտարն իրականացնում է հետևյալ գործողությունները՝

1. Վավերացնում է գործարքներ(պայմանագրեր, կտակներ, լիազորագրեր, համաձայնագրեր և այլն).
2. միջոցներ է ձեռք առնում ժառանգական գույքի պահպանության համար.
3. տալիս է ժառանգության իրավունքի վկայագրեր.
4. տալիս է ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականության ներքո գտնվող գույքից հասանելիք բաժնի նկատմամբ սեփականության իրավունքի վկայագրեր.
5. վավերացնում է փաստաթղթերի պատճենների կամ դրանց քաղվածքների իսկությունը.
6. վավերացնում է փաստաթղթերի վրա եղած ստորագրությունների իսկությունը.
7. վավերացնում է փաստաթղթերի թարգմանության իսկությունը.
8. հաստատում է քաղաքացու ողջ լինելու փաստը.
9. հաստատում է քաղաքացու՝ որոշակի վայրում գտնվելու փաստը.
10. հաստատում է լուսանկարում պատկերված անձի և քաղաքացու նույնությունը.
11. հաստատում է փաստաթղթեր ներկայացնելու ժամանակը.
12. ֆիզիկական անձանց կամ կազմակերպությունների դիմումները, հայտարարությունները կամ այլ փաստաթղթերը փոխանցում է այլ ֆիզիկական անձանց կամ կազմակերպությունների
13. դեպոզիտ է ընդունում, պահպանում, հանձնում կամ վերադարձնում դրամական գումար կամ արժեթղթեր.
14. ի պահ է ընդունում փաստաթղթեր.
15. ապահովում է ապացույցներ.



16. վավերացնում է կազմակերպության ընդհանուր ժողովի կամ կոլեգիալ այլ մարմնի նիստի արձանագրությունը:

ՀՀ-ում նոտարական գործողությունների իրականացումը և նոտարի ծառայությունները վճարովի են և բաժանվում են երկու խմբի՝

### Օրենքով սահմանված պետտուրքի վճարումներ

ՀՀ Ազգային ժողով, Օրենք N ՀՕ-186  
ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ (1-16  
ՀՈԴՎԱԾՆԵՐ)

Ընդունվել է 27.12.1997  
Վավերացվել է 10.01.1998  
Ուժի մեջ է մտել 11.01.1998

Հոդված 11. Նոտարական գործողությունների համար պետական տուրքի դրույքաչափերը

Նոտարական գրասենյակները գործողությունների համար պետական տուրքը գանձում են հետևյալ դրույքաչափերով՝

1. անշարժ գույքի յուրաքանչյուր միավորի օտարման (բացառությամբ՝ նվիրատվության) պայմանագրերը վավերացնելու համար՝

ա) գյուղատնտեսական նշանակության ոչ պետական հողամասերի կամ տնամերձերի կամ պետական կամ համայնքային սեփականության հողամասերի

բազային տուրքի հիսուն տոկոսի չափով

բ) այլ անշարժ գույքի

բազային տուրքի հնգապատիկի չափով

2. անշարժ գույքի օգտագործման (վարձակալության,

անհատույց օգտագործման, ռենտայի և այլն) պայմանագրերը վավերացնելու համար`

ա) գյուղատնտեսական նշանակության ոչ պետական հողամասերի կամ տնամերձ հողամասերի, պետական կամ համայնքային սեփականություն համարվող հողամասերի, ինչպես նաև հանրակացարանների համար

բազային տուրքի հիսուն տոկոսի չափով

բ) բնակարանների համար

բազային տուրքի չափով

գ) այլ անշարժ գույքի համար

բազային տուրքի հնգապատիկի չափով

3. ավտոտրանսպորտային միջոցների օտարման (բացի նվիրատվությունից) պայմանագրերը վավերացնելու համար`

ա) առաջին հերթի ժառանգներին

բազային տուրքի կրկնապատիկի չափով

բ) երկրորդ և երրորդ հերթի ժառանգներին

բազային տուրքի եռապատիկի չափով

գ) այլ անձանց

բազային տուրքի հնգապատիկի չափով

4. գրավի (բացառությամբ անշարժ գույքի հիփոթեքի կամ շարժական գույքի կոշտ

բազային տուրքի կրկնապատիկի չափով

գրավի) պայմանագրերի վավերացման համար

5. անշարժ գույքի հիփոթեքի կամ շարժական կոշտ գրավի պայմանագրերի վավերացման (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության ոչ պետական հողամասերի, տնամերձերի և այգեգործական հողամասերի յուրաքանչյուր միավորի և բնակելի նշանակության գույքի) համար տնամերձերի և այգեգործական հողամասերի յուրաքանչյուր միավորի և բնակելի նշանակության գույքի) համար բազային տուրքի չափով
6. գյուղատնտեսական նշանակության ոչ պետական հողամասերի, տնամերձերի և այգեգործական հողամասերի յուրաքանչյուր միավորի և բնակելի նշանակության գույքի պայմանագրերի վավերացման համար բազային տուրքի հիսուն տոկոսի չափով
7. գյուղատնտեսական նշանակության հողերի, տնամերձերի, այգեգործական հողերի միավորման, բաժանման պայմանագրերի վավերացման համար բազային տուրքի հիսուն տոկոսի չափով

- |     |   |                                  |
|-----|---|----------------------------------|
| 8.  | այլ պայմանագրերի վավերացման համար   | բազային տուրքի կրկնապատիկի չափով |
| 9.  | կտակների վավերացման համար   | բազային տուրքի կրկնապատիկի չափով |
| 10. | Ժառանգության իրավունքի վկայագրեր տալու և նվիրատվության պայմանագրերի վավերացման համար`   |                                  |
|     | ա) առաջին հերթի ժառանգներին   | բազային տուրքի կրկնապատիկի չափով |
|     | բ) երկրորդ և երրորդ հերթի ժառանգներին   | բազային տուրքի եռապատիկի չափով   |
|     | գ) այլ անձանց   | բազային տուրքի հնգապատիկի չափով  |
| 11. | անշարժ գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունքի լիազորագրեր վավերացնելու համար  | բազային տուրքի եռապատիկի չափով   |
| 12. | շարժական գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման (բացառությամբ ա վ տ ո տ ր ա ն ս պ ո տ ա յ ի ն միջոցների) լիազորագրեր վավերացնելու համար | բազային տուրքի կրկնապատիկի չափով |
| 13. | գույքային իրավունքների  | բազային տուրքի չափով             |

կառավարման լիազորագրերի վավերացման համար

14. ավտոտրանսպորտային միջոցները տնօրինելու իրավունքի լիազորագրերը վավերացնելու համար`
- ա) առաջին հերթի ժառանգներին Բազային տուրքի չափով
  - բ) երկրորդ և երրորդ հերթի ժառանգներին Բազային տուրքի հնգապատիկի չափով
  - գ) այլ անձանց Բազային տուրքի քսանապատիկի չափով
15. ավտոտրանսպորտային միջոցները տնօրինելու իրավունքի վերալիազորման իրավունքով լիազորագրերի վավերացման համար`
- ա) առաջին հերթի ժառանգներին Բազային տուրքի չափով
  - բ) այլ անձանց Բազային տուրքի երեսնապատիկի չափով
16. այլ լիազորագրերի վավերացման համար Բազային տուրքի հիսուն տոկոսի չափով
- Ժառանգական գույքի պահպանմանն ուղղված միջոցառումների իրականացման համար Բազային տուրքի կրկնապատիկի չափով

18. փաստաթղթերի թարգմանության յուրաքանչյուր էջի իսկության վավերացման համար բազային տուրքի հիսուն տոկոսի չափով
19. փաստաթղթերի պատճենների և դրանցից քաղվածքների յուրաքանչյուր էջի իսկության վավերացման համար բազային տուրքի երեսուն տոկոսի չափով
20. փաստաթղթերի ստորագրությունների, այդ թվում՝ թարգմանչի ստորագրության յուրաքանչյուր փաստաթղթի իսկության վավերացման համար բազային տուրքի հիսուն տոկոսի չափով
21. առանց դատարան դիմելու՝ գրավ դրված գույքի հաշվին գրավառուի պահանջները բավարարելու վերաբերյալ գրավառուի և գրավատուի միջև կնքված համաձայնության վավերացման համար բազային տուրքի չափով

### **Նոտարի կողմից մատուցվող վճարովի այլ ծառայություններ**

Նոտարի կողմից մատուցվող վճարովի այլ ծառայություններ, որոնց սակագները սահմանում է ՀՀ կառավարությունը:  
Տեղադրել սակագները ՀՀ կառ 25.04.2002.թ.919

NN Նոտարական գործողության տեսակը նվազագույն  
ը/ կ աշխատավարձի նկատմամբ գործակիցը  
1 2 3

- |    |  |          |
|----|--|----------|
| 1. | Գույքի նկատմամբ կնքվող գործարքի վավերացման ժամանակ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման պարզաբանումների համար(բացառությամբ գրավի պայմանագրերի և գյուղատնտեսական նշանակության հողամասերի նկատմամբ կնքվող գործարքների) | 0, 5 - 5 |
| 2. | Գյուղատնտեսական նշանակության հողամասերի վերաբերյալ պայմանագրերի վավերացման ժամանակ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման և պարզաբանումների համար  | 0,5 - 1  |
| 3. | Գրավի պայմանագրի վավերացման ժամանակ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման և պարզաբանումների համար   | 1 - 5    |
| 4. | Բացի կտակի վավերացման ժամանակ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման և պարզաբանումների համար   | 0,3 – 3  |
| 5. | Փակ կտակի վավերացման ժամանակ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման և պարզաբանումների համար  | 0,5- 5   |
| 6. | Լիազորագրի վավերացման ժամանակ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման և պարզաբանումների համար   | 0,5 – 3  |
| 7. | Խառը պայմանագրերի վավերացման ժամանակ ներկայացված փաստաթղթերի   |          |

- |  |         |
|--|---------|
| ուսումնասիրման և պարզաբանումների համար   | 1-10    |
| 8. 1- 6- րդ կետերում չնշված այլ գործարքների վավերացման ժամանակ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման և պարզաբանումների համար  | 0,5- 10 |
| 9. Առանձնապես բարդ գործարքներ վավերացնելու ժամանակ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման և պարզաբանումների համար  | 5- 20   |
| 10. Ժառանգական գույքի պահպանության համար փջոցներ ձեռք առնել ու գործողությունների կատարման ժամանակ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման և պարզաբանումների համար   | 5- 50   |
| 11. Ժառանգության իրավունքի վկայագիր տալու ժամանակ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման և պարզաբանումների համար   | 0,5- 5  |
| 12. Ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականության ներքո գտնվող գույքից հասանելիք բաժնի նկատմամբ սեփականության իրավունքի վկայագիր տալու ժամանակ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման և պարզաբանումների համար | 0,5- 5  |
| 13. Փաստաթղթերի պատճենների կամ դրանցից   |         |



- քաղվածքների իսկությունը վավերացնելու ժամանակ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման և պարզաբանումների համար (յուրաքանչյուր էջի համար) 0,5
14. Փաստաթղթերի վրա եղած ստորագրությունների իսկությունը վավերացնելու ժամանակ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման և պարզաբանումների համար (յուրաքանչյուր ստորագրության համար) 0,5
15. Փաստաթղթերի թարգմանության իսկությունը վավերացնելու ժամանակ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման և պարզաբանումների համար (յուրաքանչյուր էջի համար) 0,5
16. Քաղաքացու ողջ լինելու փաստը հաստատելու ժամանակ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման և պարզաբանումների համար 2
17. Քաղաքացու՝ որոշակի վայրում գտնվելու փաստը հաստատելու ժամանակ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման և պարզաբանումների համար 2
18. Լուսանկարում պատկերված անձի և քաղաքացու նույնությունը հաստատելու ժամանակ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման և պարզաբանումների համար 2

19. Փաստաթղթերի ներկայացնելու ժամանակը հաստատելիս ներկայասված փաստաթղթերի ուսումնասիրման և պարզաբանումների համար 1
20. Ֆիզիկական անձանց կամ կազմակերպությունների դիմումները, հայտարարությունները կամ այլ փաստաթղթեր այլ ֆիզիկական անձանց կամ կազմակերպություններ փոխանցելու ժամանակ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման և պարզաբանումների համար 3
21. Դրամական գումար կամ արժեթղթեր դեպոզիտ ընդունելու, դեպոզիտ պահպանելու, հանձնելու կամ վերադարձնելու ժամանակ ընդունվող ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման և գումարի պարզաբանումների համար տոկոսը 0,5
22. Փաստաթղթերի պահ ընդունելու ժամանակ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման և պարզաբանումների համար (յուրաքանչյուր օրվա համար) 0,1-0,3
23. Ապացույցների ապահովման ժամանակ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման և պարզաբանումների համար 5-50
24. Կազմակերպության ընդհանուր ժողովի կամ կոլեգիալ այլ մարմնի նիստի արձանագրությունը վավերացնելու ժամանակ ներկայացված փաստաթղթերի

- ուսումնասիրման և պարզաբանումների համար 5-50
25. Գործարքների, հաստատման ենթակա փաստաթղթերի կամ իրավական այլ փաստաթղթի օրինակելի ձևերի պատրաստման և տրամադրման համար 1-2
26. Անձանց առաջարկությունների հիման վրա ոչ օրինակելի գործարքների, հաստատման ոչ ենթակա ոչ օրինակելի փաստաթղթերի կամ իրավական այլ փաստաթղթերի պատրաստման և տրամադրման, ինչպես նաև գործարքների վավերացման կամ փաստաթղթերի պատրաստման հետ չկապված իրավական օգնության կամ խորհրդատվության տրամադրման կամ այլ ծառայությունների մատուցման համար՝ ծառայության մատուցման համար անհրաժեշտ յուրաքանչյուր ժամի համար 10

### **Նոտարական գործողությունների իրականացնող մարմիններում պետական տուրքի գծով արտոնությունները**

Նոտարական գործողություններ իրականացնող մարմիններում պետական տուրքի վճարումից ազատվում են՝

- ա) ֆիզիկական անձանց՝ պետության կամ համայնքի օգտին կտակի կամ գույքի նվիրատվության պայմանագիրը վավերացնելու համար.
- բ) պետությանը կամ համայնքին ժառանգության իրավունքով անցած գույքի մասին նրանց վկայագիր, ինչպես նաև դրանց ստացման անհրաժեշտ փաստաթղթեր տալու համար.

- զ) ֆիզիկական անձիք՝ ժառանգության իրավունքի մասին նրանց վկայագիր տալու համար, եթե՝
- բնակելի տունը՝ հողամասով բնակարանը կամ բնակարանային-շինարարական կոոպերատիվում այն անցնում է ժառանգատուի հետ համատեղ բնակվող այնպիսի անձանց, ովքեր ժառանգատուի մահվան օրվա դրությամբ եղել են հաշվառված նույն տանը և նրա մահից հետո շարունակում են բնակվել այնտեղ,
  - ժառանգության իրավունքի օբյեկտ են համարվում բանկերում եղած ավանդները, անձնական և գույքային ապահովագրության գծով ապահովագրական գումարները, պետական փոխառության պարտատոմսերը, աշխատավարձի գումարները, կենսաթոշակները.
- դ) ֆիզիկական անձիք՝ թոշակների և նպաստների ստացման վերաբերյալ լիազորագրերը վավերացնելու համար.
- ե) մայրերը՝ բազմազավակության շքանշաններով և մեդալներով իրենց պարգևատրելու մասին փաստաթղթերի պատճենների իսկությունը վավերացնելու համար.
- զ) այն քաղաքացիների ժառանգները, ովքեր իրենց աշխատանքի (ծառայության) վայրում կազմակերպությունների հաշվին ապահովագրված են եղել դժբախտ պատահարի հետևանքով մահվան կամ գոհվելու դեպքերից՝ ապահովագրական վարձատրության ժառանգման իրավունքը հաստատող վկայագիր տալու համար.
- է) երկրորդ աշխարհամարտի հաշմանդամները և այլ անձիք, ովքեր հաշմանդամ են դարձել Հայաստանի Հանրապետությունը, նախկին ԽՍՀՄ-ը պաշտպանե-

լիս կամ զինվորական այլ պարտականություններ կատարելիս վիրավորվելու, կոնտուզիայի, խեղման կամ ռազմաճակատում գտնվելու հետ կապված հիվանդության հետևանքով, նախկին պարտիզան հաշմանդամները, ինչպես նաև կենսաթոշակային օրենսդրությանը համապատասխան զինծառայողների՝ վերը նշված խմբերին հավասարեցված մյուս հաշմանդամները, երկրորդ աշխարհամարտում Հայաստանի Հանրապետությունը, նախկին ԽՍՀՄ-ը պաշտպանելիս կամ զինորական այլ պարտականություններ կատարելիս գոհված կամ անհայտ կորած անձանց ընտանիքի անդամները՝ վերոհիշյալ հիմքերով արտոնություններ վերապահելու համար անհրաժեշտ փաստաթղթերի պատճենների իսկությունը վավերացնելու համար.

- ը) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը.
- թ) սեփականատերերն ու օգտագործողները՝ կադաստրային քարտեզագրումն ավարտված տրածքներում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման գործընթացի ժամանակ պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի օտարման պայմանագրերը վավերացնելու համար.
- ժ) ֆիզիկական՝ անձինք պետական սեփականություն համարվող բնակարանների անհատույց մասնավորեցման (նվիրատվության) պայմանագրի վավերացման համար.
- ժա) սեփականատերը՝ օրենքով նախատեսված դեպքերում սեփականության իրավունքով անհատույց տրամադրված պետական սեփականություն համարվող հողամասերի օտարման պայմանագրերը վավերացնելու համար.

- ժբ) 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձինք՝ իրենց զբաղեցրած համայնքային բնակարանային ֆոնդի բնակելի տարածքների վարձակալության պայմանագրերը վավերացնելու համար.
- ժգ) սեփականատերերը և օգտագործողները՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 225 հոդվածով սահմանված բնակելի տարածության օգտագործման պայմանագրերը վավերացնելու համար.
- ժդ) Հայաստանի Հանրապետության պետական ծրագրերի շրջանակներում հողերի միավորման (կոնսոլիդացիա) պայմանագրերը վերացնելու համար: (24 հոդվածը փոխ. 28.12.98 ՀՕ-277, 12.10.99 թիվ ՀՕ-4, 30.05.00 ՀՕ-67, 15.12.00 ՀՕ-136, 09.10.01 թիվ 234, խմբ. 12.06.02 ՀՕ-375-Մ, 04.10.05 ՀՕ-198-Ն օրենքներ):

Ծանոթություն՝ բազային տուրքը 1000 դրամ է

## ՔԿԱԳ

Քաղաքացիական կացության ակտերի հետ կապված հարաբերությունները կարգավորում են Քաղաքացիական կացության մասին ՀՀ օրենքով, ՀՀ ընտանեկան օրենսգրքով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ միջազգային պայմանագրերով: ՀՀ օրենքների և միջազգային պայմանագրերում տարբերությունների կամ հակասությունների առկայության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերը:

Քաղաքացիական կացության ակտերն առաջացնում, փոփոխում կամ դադարեցնում են, ինչպես ՀՀ քաղաքացիների այնպես էլ քաղաքացիություն չունեցող անձանց, օտարերկրյա քաղաքացիների իրավունքները և պարտականությունները, բնութագրում են նրանց իրավական վիճակը: Հայաստանի Հանրապետության տարածքում պետական գրանցման ենթակա են քաղաքացիական կացության հետևյալ ակտերը.

- ա) ծնունդը
- բ) ամուսնությունը
- գ) ամուսնալուծությունը
- դ) որդեգրումը
- ե) հայրությունը որոշելը
- զ) անվան փոփոխումը
- է) մահը

գանձվող պետտուրքի չափերը և պետտուրքի արտոնությունները

## ԾՆՈՒՆԴ

### Ի՞նչ է անհրաժեշտ ծննդի գրանցման համար

Ծնունդը ենթակա է պարտադիր գրանցման ՔԿԱԳ տարածքային բաժնում, ծնողի (ների) կողմից տրված դիմումի կամ հայտարարության հիման վրա: Ծննդի մասին դիմումը պետք է տրվի երեխայի ծննդյան օրվանից ոչ ուշ քան երեք ամսվա ընթացքում, իսկ գրավոր հայտարարությունը՝ ՔԿԱԳ. մարմնին տրվում է ոչ ուշ, քան երեխայի ծննդի օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում: Ծննդի գրանցումը ծնողների ցանկությամբ

կատարվում է եթեխայի (ների) ծննդավայրի կամ ծնողների (նրանցից մեկի) բնակության վայրի ՔԿԱԳ տարածքային բաժիններում, իսկ գտնված (ընկեցիկ) երեխաներին՝ գրանցումը կատարում է գտնվելու վայրի ՔԿԱԳ մարմինը:

ՔԿԱԳ տարածքային բաժինն իրավունք չունի մերժելու ծննդի գրանցումն՝ այն մեկ այլ բաժնում կատարելու նպատակահարմարության պատճառաբանությամբ:

Ծննդի գրանցման մասին հայտարարությունը տրվում է գրավոր կամ բանավոր: Ծնողների հիվանդության, մահվան կամ այլ պատճառներով նրանց կողմից հայտարարություն կատարելու անհնարինության դեպքում՝ այն կարող են կատարել ազգականները, հարևանները, այն բժշկական հիմնարկի վարչակազմը, որտեղ ծնվել է երեխան, ինչպես նաև այլ անձինք: Այն դեպքում, երբ երեխան ծնվել է ոչ բժշկական հիմնարկում և ծննդաբերության ժամանակ առանց բժշկական օգնություն ցույց տալու, ծնունդը կարող է գրանցվել վկաների ցուցմունքների, երեխայի ծննդի և կենդանության մասին բժշկական տեղեկանքի հիման վրա: Եթե երեխան ծնվել է ծովային, գետային նավում կամ օդանավում մոր գտնվելու ժամանակ, ինչպես նաև գնացքում, ապա կապիտանը (նավի հրամանատարը, գնացքի պետը) երկու վկայի ու բժշկի կամ բուժակի մասնակցությամբ (եթե առկա են) կարող է ակտ կազմել երեխայի ծննդի մասին: Այն ներկայացվում է ծնունդը գրանցող ՔԿԱԳ տարածքային բաժին՝ ծննդի մասին բժշկական տեղեկանքի փոխարեն:

Ամուսնության մեջ չգտնվող կնոջից երեխա ծնվելու դեպքում, եթե ՔԿԱԳ տարածքային բաժնում չի լուծվում նաև հայրության որոշման հարցը, ապա ծննդի գրանցման մատյանում երեխայի հոր մասին գրանցումը կատարվում է մոր ազգանունով, իսկ հոր անունը, հայրանունը՝ մոր ցուցումով, իսկ եթե մայրը հրաժարվում է նշել երեխայի հոր անունը, հայրանունն ու ազգությունը, ապա ծննդի գրանցումը կատարվում է առանց հոր մասին տեղեկություններ լրացնելու և տրվում է ծննդյան վկայական: Անչափահաս ծնողից (ների) ծնված



Երեխայի ծնունդը գրանցվում է ընդհանուր կարգով և գրանցման վերաբերյալ անչափահաս ծնողի (ների) հոր կամ մոր (խնամակալների) համաձայնությունը չի պահանջվում: Երեխային տրվում է միայն մեկ անուն: ՔԿԱԳ տարածքային բաժինն իրավունք չունի մերժելու երեխային ծնողների ընտրված անունը շնորհելու այն պատճառաբանությամբ, որ այդ անունը նշված չէ անձնական անունների տեղեկատուում: Եթե ծնողի գրանցման մասին դիմումը ստացվել է երեխայի ծննդյան օրվանից մեկ տարի անց, բայց մինչև 16 տարին լրանալը, ապա ծնողի գրանցումը կատարվում է միայն երեխայի բնակության վայրի ՔԱԿԳ տարածքային բաժնի կողմից, իսկ 16 տարեկանից բարձր լինելու դեպքում` նույն բաժնում, Քաղ. կացության ակտերի գրանցումները վերականգնելու կանոններով սահմանված կարգով:

## **Ո՞րոնք են ծննդի պետական գրանցման հիմքերը**

Դրանք են`

- ա) ծննդյան մասին սահմանված ձևի փաստաթուղթը` տրված բժշկական այն կազմակերպության կողմից, որտեղ տեղի է ունեցել ծնունդը.
- բ) ծննդյան մասին սահմանված ձևի փաստաթուղթը` տրված ծննդի ժամանակ բժշկական օգնություն ցուցաբերած կազմակերպության կողմից.
- գ) ծննդյան մասին սահմանված ձևի փաստաթուղթը` տրված բժշկի կողմից` բժշկական կազմակերպությունից դուրս ծննդի դեպքում .
- դ) ծննդյան մասին սահմանված ձևի գրավոր հայտարարությունը` տրված ծննդի ժամանակ ներկա գտնված անձի (անձանց) կողմից, և երեխայի առողջության մասին բժշկական կազմակերպության տրված տեղեկանքը` բժշկական կազմակերպությունից դուրս և առանց բժշկական օգնություն ցուցաբերելու ծննդի դեպքում:

Այս հիմքերի բացակայության դեպքում երեխայի ծննդի պետական գրանցումը կատարվում է երեխայի ծննդաբերության փաստը հաստատող՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա.

Ծնունդը հայտարարության հիման վրա գրանցելիս, անկախ հայտարարություն տվողի ինքնությունից, պետք է ներկայացվեն՝

- երեխայի ծննդի մասին բժշկական հիմնարկի տեղեկանք
- ծնողների անձը հաստատող փաստաթղթեր
- փաստաթղթեր, որոնք կարող են հիմք հանդիսանալ հոր մասին տվյալները գրանցելու համար
- հայտարարություն տվողի անձը հաստատող փաստաթուղթ.

### **Ինչպե՞ս է գրանցվում ամուսնությունը**

Ամուսնացող անձինք ՔԿԱԳ. մարմին են ներկայացնում ամուսնության համատեղ գրավոր դիմում: ՀՀ -ում օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, օտարերկրյա պետություններում մշտապես բնակվող ՀՀ քաղաքացիների ամուսնությունը միմիայնց և ՀՀ քաղաքացիների հետ ամուսնության գրանցման վերաբերյալ դիմումները ներկայացնում և ամուսնության մասին թույլտվություն են ստանում ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալու-թյան կենտրոնական մարմնի կողմից: Դիմումին կից օտարերկրյա քաղաքացին ՀՀ-ում ամուսնություն գրանցելիս ներկայացնում է անձնագիրը և իր պետության համապատասխան մարմինների կամ դեսպանության (հյուպատոսություն) կողմից տրված տեղեկանք ամուսնության գրանցում չունենալու մասին՝ վավերացված ՀՀ Ա.Գ. նախարարության դիվանագիտական կամ հյուպատոսական մարմիններում: Քաղաքացիություն չունեցող անձիք հիշյալ տեղեկանքները ներկայացնում են իրենց մշտական բնակության վայր համարվող պետության կողմից, իսկ

օտարերկրյա պետությունում մշտապես բնակվող ՀՀ քաղաքացիները Հայաստանի Հանապետությունում ամուսնություն գրանցելիս ամուսնության գրանցում, չունենալու մասին տեղեկանքը պետք է ներկայացնեն իրենց մշտական բնակության վայրի պետության իրավասու մարմնի կողմից տրված և այդ պետությունում գտնվող ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հաստատության կողմից վավերացված լինելուց հետո: Այս տեղեկանքները ուժի մեջ են տրման օրվանից եռամսյա ժամկետում: Պետությունը ճանաչում է միայն ՔԿԱԳ մարմիններում գրանցված ամուսնությունը: Ամուսնացող անձանց համատեղ դիմում տալուց հետո՝ մեկ ամիս անց, բայց երեք ամսից ոչ ուշ ՔԿԱԳ մարմինն կատարում է ամուսնության պետական գրանցում: Մեկամսյա ժամկետի ընթացքն սկսվում է ՔԿԱԳ տարածքային բաժին դիմում տալու օրվան հաջորդող օրվանից:

Հարգելի պատճառների առկայության դեպքում ամուսնության գրանցման ժամկետը կարող է կրճատվել կամ երկարացվել: Ամուսնության գրանցման ժամկետը կրճատելու հարգելի պատճառներն են՝

1. ծանր հիվանդությունը
2. համատեղ երեխաներ ունենալը
3. Ամուսնացող կնոջ հղիությունը (20 շաբաթական)
4. բանակ զորակոչվելը
5. ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվելը

Այս հարգելի պատճառները պետք է հաստատված լինեն համապատասխան փաստաթղթերով, որոնց առկայության դեպքում ամուսնության գրանցումը (ՔԿԱԳ տարածքային) կատարվում է եռօրյա ժամկետում կամ ամուսնացողների ցանկացած օրը:

## Ամուսնության դադարում

Ամուսնությունը դադարում է՝

- ա) ամուսիններից մեկի մահվան դեպքում
- բ) դատական կարգով
- գ) ամուսնալուծության վերաբերյալ փոխադարձ համաձայնությամբ
- դ) ամուսիններից մեկի դիմումի հիման վրա

Դատական կարգով ամուսնալուծությունը կատարվում է ամուսիններից մեկի կողմից դատարան ներկայացված հայցադիմումով: Ամուսնալուծության գործը քննելիս դատարանն իրավունք ունի, ամուսինների հաշտվելու նպատակով, գործի քննությունն հետաձգել երեք ամսով:

Ամուսինների միջև համաձայնության բացակայության դեպքում դատարանը պարտավոր է՝

1. որոշել թե ամուսնալուծությունից հետո ծնողներից ում հետ պետք է ապրեն երեխաները
2. որոշել, թե որ ծնողից և ինչ չափով պետք է ալիմենտ (ապրուստավճար) բռնագանձվի
3. ամուսինների (նրանցից մեկի) պահանջով կատարել նրանց ընդհանուր սեփականությունը համարվող գույքի բաժանումը
4. ամուսնուց ապրուստի միջոց ստանալու իրավունք ունեցող մյուս ամուսնու պահանջով որոշել այդ միջոցների չափը փոխադարձ համաձայնության առկայության դեպքում, ամուսինները համատեղ դիմում են ներկայացնում ՔԿԱԳ մարմնին, որտեղ պետք է նշվեն՝

- ա) ամուսիններից յուրաքանչյուրի անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան վայրը և ժամանակը, քաղաքացիությունը, բնակության վայրը, կրթությունը, աշխատանքի վայրը և զբաղմունքը
- բ) ամուսնության ակտի գրառման տվյալները
- գ) այն ազգանունները, որոնք ընտրվում են

ամուսիններից յուրաքանչյուրի կողմից  
ամուսնալուծությունից հետո

դ) ամուսինների անձը հաստատող փաստաթղթերի  
տվյալները

ե) անհրաժեշտ այլ տեղեկություններ

Ամուսնալուծության պետական գրանցումն իրականացվում է  
դիմումը տալու օրվանից մեկ ամիս անցնելուց հետո, բայց երեք  
ամսից ոչ ուշ, ամուսինների ներկայությամբ, ամուսիններից մեկի  
դիմումի հիման վրա

### **Ամուսնության դադարումը ամուսիններից մեկի դիմումի հիման վրա**

ՔԿԱԳ-ում ամուսնալուծությունը կատարվում է եթե մյուս  
ամուսինը՝

- ա) դատարանի կողմից ճանաչել է անհայտ բացակայող
- բ) դատարանի կողմից ճանաչվել է անգործունակ
- գ) դատապարտվել է ազատազրկման՝ երեք տարուց ոչ  
պակաս ժամկետով.

Ամուսնալուծության մասին դիմում ներկայացնող ամուսինը  
դիմումում պետք է նշի հետևյալ տեղեկությունները՝

1. Ամուսնալուծվել ցանկացող ամուսնու անունը,  
հայրանունը, ազգանունը, քաղաքացիությունը,  
բնակության վայրը և զբաղմունքը.
2. Ամուսնության ակտի գրառման տվյալները
3. Այն ազգանունը, որը ամուսնալուծությունից հետո  
ընտրում է ամուսնալուծվել ցանկացողը
4. Ամուսնալուծվել ցանկացող ամուսնու անձը  
հաստատող փաստաթղթի տվյալները
5. Ամուսնալուծության հիմքերը
6. Ամուսիններից մյուսի անունը, ազգանունը, հայրանու-  
նը, ծննդյան վայրը և ժամանակը, քաղաքացիությունը,  
բնակության վերջին հայտնի վայրը.

7. Անհայտ բացակայող կամ անգործունակ ճանաչված ամուսնու գույքի հավատարմագրային կառավարչի բնակության վայրը կամ այն քրեակատարողական հիմնարկի գտնվելու վայրը, որտեղ ամուսինը կրում է պատիժը

8. Անհրաժեշտ այլ տեղեկություններ

Դիմումի հետ միաժամանակ պետք է ներկայացվեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած, ամուսնուն անհայտ բացակայող կամ անգործունակ ճանաչելու մասին, վճռի կամ նրան երեք տարուց ոչ պակաս ժամկետով ազատագրկման դատապարտելու մասին դատավճռի պատճեն: Ամուսնալուծությունից հետո ամուսիններին յուրաքանչյուրը կարող է պահպանել իր ամուսնական ազգանունը, կամ իր ցանկությամբ ստանալ իր մինչ ամուսնական ազգանունը, որի մասին նշում է կատարում տրված դիմումի մեջ: Այս դեպքում ամուսնալուծությունը գրանցելուց հետո ՔԿԱԳ տարածքային բաժինը ամուսնու անձնագրի առաջին էջում նշում է, որ անձնագիրը ենթակա է փոխանակման՝ ազգանվան փոխման կապակցությամբ, այն վավերացվում է բաժնի պետի ստորագրությամբ և կնիքով (դրոշմակնիքով):

## **Որդեգրման պետական գրանցում**

Որդեգրման գրանցման է որդեգրման մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը: Որդեգրման պետական գրանցումն իրականացնում են որդեգրման մասին վճիռ կայացրած դատարանը կամ որդեգրողները:

Որդեգրման գրանցման համար որդեգրողը (ները) տարածքային ՔԿԱԳ մարմնին ներկայացնում են գրավոր դիմում, որի մեջ նշվում են.

1. Որդեգրման համար որդեգրողը (ները) տարածքային ՔԿԱԳ մարմին են ներկայացնում գրավոր դիմում, որի մեջ նշվում են հետևյալ տեղեկությունները.

- ա) որդեգրողի (ների) անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան թիվը և վայրը, քաղաքացիությունը, ազգությունը (ըստ հայտարարության կամ անձնագրում այդ տվյալների առկայության) .
- բ) որդեգրողի ( ների ) բնակության վայրը.
- գ) որդեգրողի (ների) ամուսնության գրանցման վայրը, համարը, ժամանակը.
- դ) որդեգրողի (ների) կամ նրանց լիազորած անձի անձը հաստատող փաստաթղթերի տվյալները ( սերիա, երբ և ում կողմից է տրվել ) .
- 2. ե) երեխայի անունը, ազգանունը, ծննդյան վայրը և ժամանակը մինչև որդեգրումը և որդեգրումից հետո.
- գ) որդեգրման մասին վճիռ կայացրած դատարանի անվանումը, վճռի կայացման ժամանակը և համարը.
- ե) երեխայի ծննդյան ակտիվ գրանցման վայրը, ժամանակը և համարը.
- ը) անհրաժեշտ այլ տեղեկություններ:

Որդեգրողը (ները) ( լիազորված անձը ) ստորագրում է (են) որդեգրման մասին դիմումը և նշում այն ներկայացնելու ժամանակը:

Եթե որդեգրողը (ները) երեխայի որդեգրումից հետո՝ մեկամսյա ժամկետում, որդեգրման պետական գրանցման մասին դիմում չեն ներկայացնում, ապա ՔԿԱԳ մարմին որդեգրման մասին դատարանի կողմից իրեն ուղղված օրինական ուժի մեջ մտած վճռի քաղվածքի հիման վրա ծննդյան ակտի գրանցման մեջ սահմանված կարգով կատարում է որդեգրման մասին նշում և տրվում է որդեգրման վկայական:

## Հայրության որոշումը

Երեխայի հայրությունը որոշվում է

1. Երեխայի մոր հետ ամուսնության մեջ չգտնվող անձի հայրությունը որոշվում է ՔԿԱԳ մարմիններում երեխայի հոր և մոր համատեղ դիմումի հիման վրա, իսկ մոր մահվան կամ դատարանի կողմից վերջինս անգործունակ ճանաչելու կամ բնակության վայրը որոշելու անհնարինության կամ ծնողական իրավունքներից զրկվելու դեպքում՝ հոր դիմումի հիման վրա՝ խնամակալության և հոգեբարձության մարմնի համաձայնությամբ:
2. Դատական կարգով՝ ծնողներից մեկի կամ մոր, երեխայի խնամակալի (հոգեբարձուի), կամ այն անձի դիմումի հիման վրա, որի խնամքին է գտնվում երեխան.

Հայրության պետական գրանցման հիմքերն են՝

1. Երեխայի ծննդյան պահին ամուսնության մեջ չգտնվող հոր և մոր համատեղ դիմումը
2. Երեխայի ծննդյան պետական գրանցման պահին երեխայի մոր հետ ամուսնության մեջ չգտնվող հոր դիմումի համաձայն՝ հայրության որոշման պետական գրանցումն իրականացվում է մոր մահվան, նրան անգործունակ ճանաչելու, մոր գտնվելու վայրը պարզելու անհնարինության, մորն անհայտ բացակայող ճանաչելու կամ նրան ծնողական իրավունքից զրկելու մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի, ինչպես նաև հայրության որոշման մասին խնամակալության և հոգեբարձության մարմնի համաձայնության առկայության դեպքում՝ երեխայի հոր դիմումը.

Հայրության որոշման պետական գրանցումն իրականացնում է երեխայի՝ ամուսնության մեջ չգտնվող հոր կամ մոր բնակության վայրի կամ երեխայի ծննդի պետական գրանցման վայրի, իսկ



դատական կարգով հայրության փաստի հաստատման դեպքում՝ վճիռ կայացրած դատարանի գտնվելու վայրի ՔԿԱԳ. մարմինը.

3.. հայրության կամ հայրության ճանաչման փաստի որոշման մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը:

Հայրության որոշման պետական գրանցումն իրականացնում է երեխայի՝ ամուսնության մեջ չգտնվող հոր կամ մոր բնակության վայրի կամ երեխայի ծննդի պետական գրանցման վայրի, իսկ դատական կարգով հայրության փաստի հաստատման դեպքում՝ վճիռ կայացրած դատարանի գտնվելու վայրի ՔԿԱԳ. մարմինը.

### Անվան փոխում

Մինչև երեխայի 10-ը տարին լրանալը երեխայի անունը, ինչպես նաև նրան տրված ազգանունը՝ մյուս ծնողի ազգանունով, ՔԿԱԳ մարմինները փոխում են ծնողների համատեղ դիմումի հիման վրա, իսկ եթե ծնողներն ապրում են առանձին, և ծնողը, որի մոտ ապրում է երեխան, ցանկանում է տալ իր ազգանունը, ապա հարցը լուծվում է՝ հաշվի առնելով մյուս ծնողի կարծիքը: Այն պարտադիր չէ, եթե

1. հնարավոր չէ պարզել մյուս ծնողի բնակության վայրը
2. նա գրկված է ծնողական իրավունքներից
3. նա դատարանի կողմից ճանաչված է անգործունակ
4. նա, առանց հարգելի պատճառների, խուսափում է երեխային դաստիարակելուց և պահելուց: 16 տարին չլրացած անձի անվան փոխումը և (կամ) ազգանվան փոխումը կարող է կատարվել նաև խնամակալի (հոգեբարձուի) խնդրանքով, իսկ ծնողների միջև համաձայնության բացակայության դեպքում՝ խնամակալության և հոգեբարձության մարմնի որոշմամբ 16 տարին լրացած անձն իրավունք ունի փոխել իր անունը, որը ներառում է անունը, հայրանունը, ազգանունը.

16-18 տարեկան անձը անվան փոխման համար ՔԿԱԳ տարածքային մարմին է դիմում անձը հաստատող փաստաթղթի առկայության և ծնողների գրավոր համաձայնության առկայության դեպքում:

Անունը փոխել ցանկացած չափահաս անձն անվան փոխման մասին դիմումը ներկայացնում է անձամբ՝ իր մշտական բնակության վայրի կամ ծննդի պետական գրանցման վայրի ՔԿԱԳ տարածքային մարմին: Անվան փոխման մասին դիմումը ՔԿԱԳ մարմինը քննություն է առնում դիմում տալու օրվանից երկու ամսյա ժամկետում, իսկ դիմումն ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, ստանալով բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, գրանցման թույլտվություն ստանալու համար գործը ներկայացնում է ՀՀ արդարադատության նախարարություն: Անվան փոխման վերաբերյալ տրվում է համապատասխան վկայական.

Մինչև 16 տարեկան երեխաների անվան, հայրանվան, և ազգանվան փոխում կատարել թույլատրվում է հետևյալ դեպքերում՝

- ա) անվան, ազգանվան անբարեհնչունության.
- բ) անվան, ազգանվան արտասանության դժվարության.
- գ) ծնողների համաձայնությամբ մյուս ծնողի ազգանուն կրելու.
- դ) եթե ծնունդ գրանցելիս երեխային ազգանուն կամ անուն է տրվել առանց ծնողների ցանկությունը հաշվի առնելու.
- ե) եթե երեխան փաստացի կրում է իր ծննդյան գրանցման մեջ նշված անունից տարբերվող անուն՝ ելնելով երեխայի շահերից.
- զ) եթե ծննդի գրանցման մեջ նշված է երեխայի թերի անունը (փաղաքշական, կրճատ, փոքրացնող):

16 տարեկանից բարձր անձանց՝ անվան, հայրանվան և ազգանվան փոխման գրանցում կատարել թույլատրվում է հետևյալ դեպքերում

- ա) անվան, հայրանվան, ազգանվան անբարեհնչություն.
- բ) անվան, հայրանվան, ազգանվան արտասանության դժվարություն.
- գ) ամուսնու ցանկության՝ մյուս ամուսնու հետ միասին մեկ ընդհանուր ազգանուն կրելու.
- դ) մինչամուսնական ազգանունը կրելու ցանկության.
- ե) երեխաների հետ միսին ընդհանուր ազգանուն կրելու ցանկության, եթե ամուսինը մահացել է, իսկ դիմողը եղել է մինչամուսնական ազգանունով.
- զ) դիմողի՝ փաստորեն դաստիարակվող անձի անունով
- է) հայրանուն և ազգանուն կրելու ցանկության.  
դիմողի ազգությանը համապատասխան ազգանուն և անուն կրելու ցանկության.
- ը) դիմողի տոհմական ազգանունը կրելու ցանկության:

Անվան փոխման մասին դիմումի հետ ներկայացված և սեփական հարցումների արդյունքում ստացված փաստաթղթերի հիման վրա ՔԿԱԳ տարածքային մարմինը կազմում է գործ, տալիս է եզրակացություն անվան փոխման մասին և դրանք ներկայացնում ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԱԳ-ի գործակալություն, որը հաստատում կամ մերժում է անվան փոխման մասին ներկայացված եզրակացությունը: Անվան փոխման մասին գրանցումը մերժվում է եթե՝

- ա) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Քաղաքացիական կացության ակտերի մասին ՀՀ օրենքի և իրավական ակտերի պահանջներին
- բ) անունը փոխել ցանկացող անձի նկատմամբ հարուցված է քրեական գործ
- գ) կրում է քրեական պատիժ
- դ) ունի դատվածություն (այն մարված, կամ ճանաչված չէ)
- ե) եթե անձն այն փոխում է երկրորդ անգամ (բացառությամբ 16 տարին չլրացածի)

Անվան փոխման խնդրանքը բավարարելու մասին ՔԿԱԳ-ի տարածքային մարմնի կողմից տեղեկացվելուց

քաղաքացիին պարտավոր է մեկ ամսվա ընթացքում ներկայանալ ՔԿԱԳ-ի տարածքային մարմին՝ անվան փոխման գրանցումը կատարելու համար: Անվան փոխման գրանցման մասին գրանցում կատարելուց հետո, քաղաքացու անձնագրի առաջին էջում դրոշմվում է՝ Անձնագիրը ենթակա է փոխմանը՝ որի վերջնաժամկետը 15–օր է: Անվան փոխման գրանցումը մերժելու մասին պարզաբանումները ստանալուց հետո, մերժումը կարող է բողոքարկվել դատական կարգով.

### **Ինչպե՞ս ՔԿԱԳ – ի գրառումներում կատարել ուղղումներ, լրացումներ, փոփոխություններ**

Քաղաքացիական կացության ակտի գրառման մեջ ուղղում, լրացում, փոփոխություն կատարելու համար շահագրգիռ անձը, (սահմանված կարգով լիազորված անձը) դիմում է ներկայացնում իր բնակության վայրի կամ քաղաքացիական կացության ակտի գրառումների պահպանման վայրի ՔԿԱԳ մարմին: Դիմումում պետք է նշված լինեն հետևյալ տեղեկությունները.

- ա) դիմողի անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան վայրը և ժամանակը, բնակության վայրը.
- բ) քաղաքացիական կացության ակտի գրառման այն տվյալները, որոնց մեջ դիմողը խնդրում է ուղղում, լրացում կամ փոփոխություն կատարել

Դիմումի հետ միժամանակ պետք է ներկայացվեն փոփոխման ենթակա քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման վկայականը, որը փոխանակվելու է, և ակտի գրառման մեջ ուղղում, լրացում կամ փոփոխություն կատարելու հիմքերի առկայությունը հաստատող փաստաթղթեր:

ՔԿԱԳ մարմինը ստացված դիմումը պետք է քննարկի և բավարարման կամ մերժման հարցը լուծի ստացման օրվանից մեկ ամսվա ընթացքում:

ՔԿԱԳ-ի կողմից ակտի գրառման մեջ ուղղում, լրացում կամ փոփոխություն կատարելը կամ դրա մերժումը կատարվում

է ՀՀ արդարադատության նախարարության թույլտվության հիման վրա:

Ուղղված, լրացված կամ փոփոխման գրառման հիման վրա ՔԿԱԳ մարմինը տալիս է ակտի պետական գրանցման նոր վկայական.

### **Ո՞րոնք են ՔԿԱԳ գրառումներում ուղղումներ, լրացումներ կամ փոփոխություններ կատարելու հիմքերը**

Այդ հիմքերն են՝

1. որդեգրման ակտի գրառումը
2. հայրության որոշման ակտի գրառումը
3. անվան փոխման ակտի գրառումը
4. դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը
5. երեխայի անվան փոխման մասին խնամակալության և հոգեբարձության մարմնի որոշումը
6. երեխայի ծննդի ակտի գրառման մեջ նրա հոր մասին տեղեկություններ լրացնելու, փոփոխելու կամ հանելու մասին հոր հետ ամուսնության մեջ չգտնվող մոր դիմումը
7. տվյալ անձի ծննդի ակտի գրառման մեջ ծնողների վերաբերյալ տեղեկությունները փոխելու մասին չափահաս անձի դիմումը՝ ծնողների (ծնողներից մեկի) կողմից իրենց անվան փոփոխման դեպքում
8. մահացածի անձը ճանաչելու մասին նախաքննության կամ հետաքննության մարմնի կողմից սահմանված ձևով տրված փաստաթուղթը, եթե մահը գրանցված է որպես անհայտ անձի մահ
9. քաղաքացիական կացության ակտի գրառման մեջ ուղղում, լրացում կամ փոփոխություն կատարելու մասին ՔԿԱԳ մարմնի եզրակացությունը, որը նրա կողմից տրվում է հետևյալ դեպքում՝
  - ա) քաղաքացիական կացության ակտի գրառման մեջ նշված են ոչ լրիվ կամ սխալ տեղեկություններ

- բ) քաղաքացիական կացության ակտի գրառումը կատարվում է առանց օրենքով սահմանված կարգի պահպանման
- գ) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բժշկական կազմակերպությունը տվել է սեռի փոփոխման մասին սահմանված ձևի փաստաթուղթ

Եթե շահագրգիռ անձանց միջև առկա է ակտերի գրառումներում ուղղումներ, լրացումներ կամ կատարելու վերաբերյալ վեճ, ապա դրանք կատարվում են դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափով՝

1. ծննդյան գրանցման համար, բազային տուրքի տասը ներառյալ՝ վկայական տալը տոկոսի չափով
2. ամուսնության գրանցման համար, ներառյալ վկայական տալը բազային տուրքի չափով
3. ամուսնալուծության գրանցման համար, ներառյալ՝ վկայական տալը բազային տուրքի տասնապատիկի չափով
4. ազգանվան, անվան և հայրանվան փոփոխություն, լրացում և ուղղում գրանցելու համար, ներառյալ վկայականի տալը բազային տուրքի հնգապատիկի չափով
5. քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին վկայականների կրկնօրինակը տալու համար բազային տուրքի կրկնապատիկի չափով

- |     |   |                                  |
|-----|---|----------------------------------|
| 6.  | հայրություն (մայրություն) ճանաչելու համար   | բազային տուրքի չափով             |
| 7.  | որդեգրում գրանցելու համար   | բազային տուրքի չափով             |
| 8.  | ծննդյան, ամուսնության, ամուսնալուծության և մահվան փաստերը վերականգնելու վկայականները տալու համար  | բազային տուրքի չափով             |
| 9.  | քաղաքացիական կացության ակտերի գրանցման առարկության կամ բացակայության մասին տեղեկանք տալու համար   | բազային տուրքի կրկնապատիկի չափով |
| 10. | պետական տուրք վճարողի դիմումի հիման վրա քաղաքացիական կացության ակտերի գրանցման վկայականի կրկնօրինակ ստանալու ծանուցում ուղարկելու համար | բազային տուրքի չափով             |
- քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի աշխատավայրից (բաժնից) դուրս կատարվող քաղաքացիական կացության ակտերի գրանցման համար պետական տուրքը գանձվում է կրկնակի չափով:

**Քաղաքացիական կացության ակտերի գրանցում  
իրականացնող մարմիններում պետական տուրքի գծով  
արտոնությունները**

Քաղաքացիական կացության ակտերի գրանցում իրականացնող մարմիններում պետական տուրքի վճարումից ազատվում են՝

- ա) կրթության համկարգի մարմինները, անչափահասների գործերով հանձնաժողովները՝ ծնողագուրկ և առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բոլոր տեսակի գիշերօթիկ հիմնարկներ և ուսումնական հաստատություններ ուղարկելու կապակցությամբ ծննդյան վկայականների կրկնօրինակներ տալու համար.
- բ) քաղաքացիները՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման ժամանակ, գրանցող մարմնի աշխատակցի թույլ տված սխալների հետ կապված, գրանցումներում փոփոխություններ, լրացումներ և ուղղումներ կատարելու դեպքերում՝ նոր վկայականներ տալու համար.
- գ) ամուսինները՝ ամուսնության գրանցման ժամանակ իրենցից մեկի ազգանունը որպես ամուսնական ընդհանուր ազգանուն ըննտրելու դեպքում.
- դ) անչափահաս երեխաների ակտային գրանցումներում ծնողի ազգանունը կամ անունը փոփոխելու կապակցությամբ կատարվող ուղղումների համար:
8. Մինչև 16 տարեկան երեխաների անվան, հայրանվան և ազգանվան գրանցում կատարել թույլատրվում է հետևյալ հարգելի պատճառների առկայության դեպքում՝
- ա) անվան, ազգանվան անբարեհնչունության.
- բ) անվան, ազգանվան արտասանության դժվարության.
- գ) ծնողների համաձայնությամբ մյուս ծնողի ազգանուն կրելու.
- դ) եթե ծնունդ գրանցելիս երեխային ազգանուն կամ անուն է տրվել առանց ծնողների ցանկությունը հաշվի առնելու.



- ե) եթե երեխան փաստացի կրում է իր ծննդյան գրանցման մեջ նշված անունից տարբերվող անուն՝ ելնելով երեխայի շահերից.
  - զ) եթե ծննդի գրանցման մեջ նշված է երեխայի թերի անունը( փաղաքշական, կրճատ, փոքրացնող):
9. 16 տարեկանից բարձր անձանց անվան, հայրանվան և ազգանվան փոխման գրանցում կատարել թույլատրվում է հետևյալ հարգելի պատճառների առկայության դեպքում՝
- ա) անվան, հայրանվան, ազգանվան անբարեհնչունության.
  - բ) անվան, հայրանվան, ազգանվան արտասանության դժվարության.
  - գ) ամուսնու ցանկության՝ մյուս ամուսնու հետ միասին մեկ ընդհանուր ազգանուն կրելու.
  - դ) մինչամուսնական ազգանունը կրելու ցանկություն.
  - ե) երեխաների հետ միասին ընդհանուր ազգանուն կրելու ցանկության, եթե ամուսինը մահացել է, իսկ դիմողը եղել է մինչամուսնական ազգանունով.
  - զ) դիմողի՝ փաստորեն դաստիարակող անձի անունով հայրանուն և ազգանուն կրելու ցանկություն.
  - է) դիմողին ազգությանը համապատասխան ազգանուն և անուն կրելու ցանկության.
  - ը) դիմողի տոհմական ազգանունը կրելու ցանկության:

Մյուս դեպքերում անվան փոխում թույլատրվում է միայն բացառության կարգով՝ յուրաքանչյուր դեպքում հաշվի առնելով քաղաքացու խնդրանքը հիմնավորող փաստաթղթերը:

## ԸՆՏԱՆԻՔ, ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ

Չափահաս դարձած տղամարդիկ ու կանայք իրավունք ունեն, առանց ռասայական, ազգային ու կրոնական պարտականության հատկանիշների որևէ սահմանափակման ամուսնանալու և ընտանիք կազմելու: Նրանք օգտվում են նույն իրավունքներից ամուսնանալու պահին, ամուսնության ընթացքում և ամուսնալուծության դեպքում:

/մարդու իրավունքների համընդհանուր  
հռչակագիր հոդված -16/

Ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք ունեն ամուսնական տարիքի հասած կինը և տղամարդը: Որպես ամուսնական տարիք Հայաստանի Հանրապետությունում կանանց համար սահմանված է 17, իսկ տղամարդկանց համար՝ 18 տարեկանի հասնելը:

### Ովքե՞ր չեն կարող ամուսնանալ միմյանց հետ

Արգելվում է ամուսնություն կնքել՝

1. այն անձանց միջև, որոնցից թեկուզև մեկը գտնվում է օրենքով սահմանված կարգով գրանցված մեկ այլ ամուսնության մեջ.
2. մերձավոր ազգականների(ուղիղ վերընթաց ու վայրընթաց ազգականների՝ ծնողների ու զավակների, պապի, տատի ու թոռների, ինչպես նաև հարազատ և համահայր և համամայր եղբայրների ու քույրերի, մորաքրոջ, հորաքրոջ, հորեղբոր և մորեղբոր զավակների) միջև.
3. որդեգրողների և որդեգրվածների միջև. այն անձանց միջև, որոնցից թեկուզև մեկին դատարանը ճանաչել է անգործունակ

## Ալիմենտ (Ապրուստի միջոց)

Ուլքե՞ր կարող են ալիմենտ (ապրուստի միջոց) ստանալ և ումից  
 Ալիմենտ (ապրուստի միջոց) ստանալու իրավունք և այն վճարելու պարտականություն ունեն ընտանիքի անդամները, երեխաները և աշխատունակ չափահաս զավակները՝ ծնողներից, ծնողները՝ չափահաս զավակներից, Ամուսինները և նախկին ամուսինները՝ միմիայնցից, թոռները՝ պապից ու տատից, պապերն ու տատերը՝ թոռներից, անչափահաս և անաշխատունակ թոռները՝ պապերից ու տատերից, երեխաներին փաստացի խնամողները՝ երեխաներից, խորթ հայրը և մայրը՝ խորթ զավակներից, ալիմենտ ստացողը և ալիմենտ վճարելու պարտավոր անձինք կարող են ալիմենտ վճարելու վերաբերյալ կնքել համաձայնություն: Այս համաձայնագիրը կարող է փոփոխվել կամ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ, որը նույնպես պետք է կատարվի գրավոր և վավերացվի նոտարական կարգով: Կողմերի միջև համաձայնության փոփոխման կամ լուծման վերաբերյալ վեճի առկայության դեպքում, կողմը այն փոփոխելու կամ լուծելու հարցով կարող է դիմել դատարան: Համաձայնությամբ վճարվող ալիմենտի չափը որոշում են կողմերը, բայց երեխաներից յուրաքանչյուրի համար որոշվող ալիմենտի չափը չի կարող պակաս լինել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի չափից (2007թ. հունվարի 1-ից՝ 20.000 դրամից):

## Որքա՞ն կարող է լինել ալիմենտի չափը

ա) Երեխաներ – ծնողներ

Ալիմենտի վճարման վերաբերյալ համաձայնության բացակայության դեպքում՝ բռնագանձումը կատարվում է դատական կարգով, հետևյալ չափերով՝

ա) մեկ երեխայի համար՝ ծնողների վաստակի և (կամ) այլ եկամտի մեկ քառորդը.

բ) երկու երեխաների համար՝ մեկ երրորդը.

գ) երեք և ավելի երեխաների համար՝ կեսը.

Ամենամյա վճարումների չափը յուրաքանչյուր երեխայի համար չպետք է պակաս լինի սահմանված նվազագույն աշխատավարձի չափից, իսկ գործազրկության նպաստ ստացող ծնողներից ալիմենտ բնագանձելիս՝ գործազրկության նպաստի 20 տոկոսից, իսկ եթե՝

1. այն անձանց միջև, որոնցից թեկուզև մեկը գտնվում է օրենքով սահմանված կարգով գրանցված մեկ այլ ամուսնության մեջ.
2. մերձավոր ազգականների(ուղիղ վերընթաց ու վայրընթաց ազգականների՝ ծնողների ու զավակների, պապի, տատի ու թոռների, ինչպես նաև հարազատ և համահայր և համամայր եղբայրների ու քույրերի, մորաքրոջ, հորաքրոջ, հորեղբոր և մորեղբոր զավակների) միջև.
3. որդեգրողների և որդեգրվածների միջև. այն անձանց միջև, որոնցից թեկուզև մեկին դատարանը ճանաչել է անգործունակ

### **Ծնողներ --- Զավակներ**

Անաշխատունակ և օգնության կարիք ունեցող ծնողներն իրավունք ունեն դատական կարգով իրենց չափահաս աշխատունակ զավակներից պահանջել ալիմենտ: Դատարանը, ելնելով ծնողների և զավակների գույքային ու ընտանեկան դրությունից, որոշում է յուրաքանչյուր զավակից բնագանձվելիք ալիմենտի չափը՝ կայուն դրամական գումարով, որը ենթակա է վճարման յուրաքանչյուր ամիս: Անկախ այն հանգամանքից, որ ծնողը (ներք) ալիմենտի պահանջ է ներկայացրել զավակներից մեկին, դատարանը ալիմենտի չափը որոշելիս կարող է հաշվի առնել տվյալ ծնողի չափահաս բոլոր զավակներին: Զավակներն ազատվում են ծնողին (ներին) ալիմենտ վճարելու

պարտականություններից:

Եթե՝

- ա) ծնողը (ները) գրկված է եղել ծնողական իրավունքից
- բ) դատարանի վճռով կհաստատվի, որ ծնողները ժամանակին խուսափել են իրենց ծնողական պարտականությունները կատարելուց:

**Ամուսնալուծությունից հետո նախկին ամուսնուց ալիմենտ ստանալու իրավունք ունի՝**

- ա) նախկին կինը հղիության ընթացքում, ինչպես նաև ընդհանուր երեխային խնամող ամուսինը մինչև երեխայի երեք տարին լրանալը
- բ) անապահով նախկին ամուսինը, որը խնամում է մանկուց հաշմանդամ ընդհանուր երեխային կամ առաջին խմբի հաշմանդամ զավակին
- բ) անաշխատունակ անապահով նախկին ամուսինը, կամ ամուսնալուծվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում
- գ) անապահով ամուսինը, որը, խնամում է մանկուց հաշմանդամ ընդհանուր երեխային կամ առաջին խմբի զավակին:
- դ) անապահով ամուսինը, կենսաթոշակային տարիքի է հասել ամուսնալուծության պահից սկսած հինգը տարում, եթե ամուսինները տասնհինգ և ավելի տարի գտնվել են ամուսնության մեջ:

Փոխադարձ համաձայնության բացակայության դեպքում, բռնագանձվող ալիմենտի չափը դատարանի կողմից որոշվում է կայուն դրամական գումարով, որը պետք է վճարվի յուրաքանչյուր ամիս:

Դատարանը կարող է ազատել մյուս ամուսնուն օգնություն ցույց տալու, պարտականությունից կամ այն սահմանափակել, եթե ամուսնու անաշխատունակությունը վրա է հասել՝

- ա) ոգելից խմիչքի, թմրամիջոցի և (կամ) թունամիջոցի չարաշահման կամ նրա կողմից դիտավորյալ հանցագործություն կատարելու հետևանքով
- բ) ամուսինները միմյանց հետ ամուսնության մեջ են գտնվել մեկ տարուց ոչ ավել ժամանակահատվածում
- գ) Ալիմենտի վճարում պահանջող ամուսնու՝ ընտանիքում հակաբարոյական վարքագիծ (ամուսնական դավաճանություն, մոլախաղերով զբաղվել և այլն) ցուցաբերելու հետևանքով.

### **Ամուսիններ և նախկին ամուսիններ**

Դատական կարգով ալիմենտ պահանջելու իրավունք ունի՝

- ա) անաշխատունակ, անապահով ամուսինը
- բ) կինը՝ հղիության ընթացքում, ինչպես նաև ընդհանուր երեխային խնամող ամուսինը մինչև երեխայի երեք տարին լրանալը

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Աշխատանքային պայմանագիրը դա աշխատողի և գործատուի միջև գրավոր համաձայնագիր է, որով սահմանվում են կողմերի իրավունքներն ու պարտականությունները, աշխատողի աշխատանքային իրավունքներն ու պարտականությունները, աշխատավարձի չափը և այն բոլոր էական պայմանները, որոնք անհրաժեշտ են տվյալ աշխատանքի կատարման համար: Աշխատանքային պայմանագիրը կնքվում է յուրաքանչյուր աշխատողի հետ, առաջացնում է անձնական ու պարտականությունների ստանձում և դրա հետ կապված իրավունքների իրականացում:

Աշխատանքային պայմանագիրը կնքվում է գրավոր, երկու օրինակից՝ մեկը տրվում է աշխատողին, մյուսը՝ գործատուին: Ստորագրված աշխ. պայմանագիրը աշխատողին հանձնելուց և ներքին կարգապահական կանոններին աշխատողին ծանոթանացնելուց հետո, գործատուն իրավունք ունի աշխատողին թույլատրել աշխատանքի, Աշխատանքային պայմանագիրը պարտադիր կարգով իր մեջ ներառում է՝

1. աշխատանքի վայրը՝ նշելով կառուցվածքային ստորաբաժանումը
2. աշխատանքն սկսելու տարին, ամիսը, ամսաթիվը
3. պաշտոնի, մասնագիտության անվանումը՝ նշելով որակավորմանը ներկայացվող պահանջները կամ աշխատանքային գործառույթները.
4. աշխատողի իրավունքներն ու պարտականությունները.
5. գործատուի իրավունքներն ու պարտականությունները
6. աշխատանքի վարձատրության պայմաններն ու չափը.
7. աշխատանքի պայմանների նկարագրությունը, ծանր, վնասակար և (կամ) վտանգավոր պայմաններում աշխատանքի դեպքում՝ աշխատողների արտոնություններն ու հատուցումները

Աշխատանքային պայմանագրերը լինում են՝

1. անորոշ ժամկետով կնքված՝ եթե պայմանագրում դրա գործողության ժամկետը նշված չէ
2. որոշակի ժամկետով՝ եթե աշխատանքային պայմանագրում դրա գործողության ժամկետը նշված է
3. ժամանակավոր աշխատանքային պայմանագիր (մինչև երկու ամիս):

Ժամանակավոր աշխատանքային պայմանագիր կնքած ախատողներին հատկացվում է արձակուրդ կամ պայմանագիրը լուծելիս վճարվում է հատուցում՝ յուրաքանչյուր ամսվա համար երկու աշխատանքային օրվա հաշվարկով:

Աշխատանքային պայմանագրի կնքման առավելագույն ժամկետը 5 տարի է: Ժամկետով աշխ. պայմանագիրը կարող է կնքվել կամ օրացուցային ժամկետի նշումով, կամ միջև որոշակի աշխատանքների ավարտը:

## **Աշխատանքային պայմանագրերի լուծումը**

Աշխ. պայմանագրի լուծման հիմքերն են՝

1. կողմերի համաձայնությունը
2. պայմանագրի գործողության ժամկետի լրանալը
3. աշխատողի նախաձեռնությունը
4. գործատուի նախաձեռնությունը

Կողմերի համաձայնությունով աշխ. պայմանագիրը լուծելիս, այդ մասին գրավոր առաջարկություն ստացած կողմը, պարտավոր է իր համաձայնության մասին 7 օրվա ընթացքում ծանուցել առաջարկություն անողին: Այս ժամկետում չպատասխանելու դեպքում՝ առաջարկը համարվում է մերժված, իսկ եթե առկա է պայմանագրի լուծման երկկողմ համաձայնություն, ապա կնքվում է գրավոր համաձայնագիր, որտեղ նշվում են պայմանագրի լուծման ժամկետը և այլ պայմաններ (հատուցումներ և այլն):

Որոշակի ժամկետով կնքված աշխատանքայի պայմանա-



պայմանագիրը ժամկետի լրանալու կապակցությամբ լուծելու դեպքում՝ կողմերից մեկը մյուսին ժամկետը լրանալուց առնվազն 10-օր առաջ գրավոր ծանուցում է այդ մասին: Եթե որոշակի ժամկետով կնքված աշխ. պայմանագրի ժամկետը լրանալուց հետո, պայմանագիրը չի լուծվում հիշյալ կարգով և շարունակվում են աշխատանքային հարաբերությունները, ապա պայմանագիրը համարվում է անորոշ ժամկետով կնքված: Եթե աշխատողն որոշել է իր նախաձեռնությամբ լուծել պայմանագիրը, ապա այդ մասին պայմանագրի ժամկետը լրանալուց՝ առնվազն 14 օր առաջ գրավոր ծանուցում է գործատուին: Ծանուցման ժամկետը լրանալուց հետո, գործատուն պարտավոր է աշխատողի հետ կատարել վերջնահաշվարկ: Իսկ աշխատանքային խեղումների կամ առողջական վիճակի հետ կապված դեպքերում գործատուն ծանուցվում է 5 օր առաջ: Աշխատողն իրավունք ունի աշխատանքային պայմանագրի լուծման մասին իր ծանուցումը հետ վերցնել այն ներկայացնելու օրվանից հետո՝ երեք աշխ. օրվա ընթացքում, իսկ այնուհետև՝ գործատուի համաձայնությամբ:

### **Գործատուն իրավունք ունի լուծել աշխատանքային պայմանագիրը՝**

1. Գործատուն իրավունք ունի լուծել անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝
  1. կազմակերպության լուծարման (անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման) դեպքում.
  2. գործատուի սնանկ ճանաչվելու դեպքում.
  3. արտադրության ծավալների, տնտեսական, տեխնոլոգիական և աշխատանքի կազմակեր-

պման պայմանների փոփոխման, ինչպես նաև արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների թվաքանակի կրճատման դեպքում.

4. աշխատողի զբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին չհամապատասխանելու դեպքում.
5. փորձաշրջանի անբավարար արդյունքի պատճառով.
6. աշխատողի կողմից իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում.
7. աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքում.
8. աշխատողի երկարատև անաշխատունակության հետևանքով (եթե աշխատողը ժամանակավոր անաշխատունակության պատճառով աշխատանքի չի ներկայացել ավելի քան 120 օր անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում՝ ավելի քան 140 օր, եթե օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված չէ, որի որոշակի հիվանդությունների դեպքում աշխատատեղը և պաշտոնը պահպանվում են ավելի երկար ժամանակով).
9. աշխատողի կենսաթոշակային տարիքը լրանալու պատճառով.

Կազմակերպության լուծարման և աշխատողների թվաքանակի կրճատման հիմքերով աշխ. պայմանագրերը լուծելու դեպքում գործատուն պարտավոր է այդ մասին աշխատողին գրավոր ծանուցել ոչ ուշ, քան երկու ամիս առաջ, իսկ աշխատողի զբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին չհամապատասխանելու կամ կենսաթոշակային տարիքը լրանալու հիմքերով՝ երկու շաբաթ: Աշխատանքային

պայմանագիրը լուծելու մասին ծանուցումն ուժը կորցնում է, եթե ծանուցման ժամկետը լրանալուց հետո անցել է հինգ օր, բայց գործատուն չի լուծել պայմանագիրը: Աշխատանքային պայմանագրի լուծման օրը գործատուն պարտավոր է աշխատողի հետ կատարել վերջնահաշվարկ, եթե փոխադարձ համաձայնությամբ վերջնահաշվարկի այլ կարգ սահմանված չէ, և նրան հանձնել աշխատանքային գրքույկը:

Աշխատողի պահանջի դեպքում գործատուն պարտավոր է նրան տրամադրել տեղեկանք աշխատանքային պարտականությունների, աշխատավարձի, վճարված հարկերի ու պետական սոց. ապահովագրության վճարումների չափի և աշխատանքի գնահատականի վերաբերյալ:

## **Կանայք**

Ընտանիքը հասարակության բնական և հիմնական բջիջն է... Մայրության հետ կապված պատճառներով աշխատանքից ազատելն արգելվում է: Յուրաքանչյուր աշխատող կին հղիության և ծննդաբերության դեպքում ունի վճարովի արձակուրդի և նորածին երեխայի խնամքի կամ որդեգրման համար արձակուրդի իրավունք

/ՀՀ Սահմանադրություն Հ. 35 /

## **Ինչպիսի՞ աշխատանքային արտոնություններ ունեն կանայք**

Գործատուն, հղի կնոջ հետ կնքելով աշխատանքային պայմանագիրը, իրավունք ունի լուծելու (նրան աշխատանքից ազատել) եթե՝

1. Կազմակերպությունը լուծարվել է
2. Գործատուի սնանկ ճանաչվելու դեպքում
3. Աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքում

4. Առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռ, որի կատարումն անհնարին է դարձնում շարունակվելու աշխատանքը: Մնացած բոլոր դեպքերում գործատուն իր հնարավորությամբ չունի լուծել հղի կնոջ հետ կնքված աշխատանքային պայմանագիրը ինչպես հղիության, ծննդաբերության, արձակուրդի և դրան հաջորդող ամսվա ընթացքում, այնպես էլ մինչև մեկ տարեկան երեխա խնամող աշխատողի հետ.

Հղի կնոջ և մինչև մեկ տարեկան երեխա խնամող աշխատողի պահանջով կողմերի (գործատու - աշխատող) համաձայնությամբ կարող է սահմանվել ոչ լրիվ աշխատանքային օր կամ ոչ լրիվ աշխատանքային շաբաթ, իսկ արտաժամյա աշխատանքներին նրանք կարող են ներգրավել միայն իրենց համաձայնությամբ: Միայն իրենց համաձայնությամբ հերթապահության, տոնական և հանգստյան օրերին աշխատանքի (եթե աշխատանքի 3 ժամերը համընկնում են ժամը 22 -6 –ի ժամանակահատվածին) կարող են ներգրավել հղի կանայք և մինչև 3 տարեկան երեխա խնամողները.

### **Ինչպիսի՞ հանգստի արտոնություններ ունեն կանայք**

Մինչև անընդմեջ աշխատանքի վեց ամիս լրանալը, ամենամյա արձակուրդ կարող է տրամադրվել կնոջ հղիության ու ծննդաբերության արձակուրդից առաջ և հետո, ինչպես նաև մինչև 14 տարեկան երեխա խնամողին.

1. Աշխատող կանանց տրամադրվում է հղիության և ծննդաբերության արձակուրդ
  1. 140 օր (70 օր՝ հղիության, 70 օր՝ ծննդաբերության)
  2. 155 օր (70 օր՝ հղիության, 85 օր՝ ծննդաբերության՝) բարդ ծննդաբերության դեպքում.

3. 180 օր (70 օր՝ հղիության, 110 օր՝ ծննդաբերության)՝ միաժամանակ մեկից ավելի երեխաներ ունենալու դեպքում:

Այդ արձակուրդը հաշվարկվում է միասին և կնոջը տրամադրվում է ամբողջությամբ: Ժամանակից շուտ ծննդաբերելու դեպքում հղիության արձակուրդի չօգտագործված օրերը գումարվում են ծննդաբերության արձակուրդի օրերին:

2. Նորածին որդեգրած կամ նորածնի խնամակալ նշանակված աշխատողին տրամադրվում է արձակուրդ՝ որդեգրելու կամ խնամակալ նշանակելու օրվանից մինչև նորածնի 70 օրական (երկու և ավելի նորածին որդեգրելու կամ երկու և ավելի նորածնի խնամակալ նշանակելու դեպքում՝ մինչև նորածինների 110 օրական ) դառնալը:
3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված դեպքերում արձակուրդի համար վարձու աշխատողին վճարվում ժամանակավոր անաշխատունակության նպաստ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Մինչև երեխայի 3 տարեկան դառնալը նրան փաստացի խնամողին տրամադրվում է խնամքի արձակուրդ, որից կարող են օգտվել ամբողջությամբ կամ մաս – մաս, այս դեպքում պահպանվում է աշխատողի աշխատատեղը՝ բացառությամբ կազմակերպության լուծարման կամ գործատուի սնանկ ճանաչման դեպքերի.

Կրճքով կերակրող կնոջը, գործատուն պարտավոր է երեխային կերակրելու համար յուրաքանչյուր երեք ժամը մեկ տրամադրել լրացուցիչ ընդմիջում՝ (բացի հանգստի և սնվելու համար տրամադրվող ընդմիջումներից) 30 րոպեից ոչ պակաս տևողությամբ: Կնոջ ցանկությամբ այդ ընդմիջումները կարելի է միավորել և միացնել ընդհանուր ընդմիջմանը կամ համապատասխանաբար կրճատել աշխատանքային օրվա

տևողությունը: Նորածնին կերակրելու համար նախատեսված ընդմիջումների ժամանակ պահպանվում է մոր միջին աշխատավարձը:

Հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց չի թույլատրվում ներգրավել ներքոհիշյալ աշխատանքներին.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՈՐՈՇՈՒՄ

29 դեկտեմբերի 2005 թվական N 2308-Ն

ՑԱՆԿ

ՄԻՆՉԵՎ 18 ՏԱՐԵԿԱՆ ԱՆՁԱՆՑ, ՀՂԻ ԵՎ ՄԻՆՉԵՎ ՄԵԿ  
ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵՒԱ ԽՆԱՄՈՂ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ ԾԱՆՐ ԵՎ  
ՎՆԱՍԱԿԱՐ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

1. Քիմիական գործոնների ազդեցության ներքո մինչև 18 տարեկան անձանց, հղի և մինչև 1 մեկ տարեկան երեխա խնամող կանանց համար վնասակար աշխատանքները

**Քիմիական գործոնները**

**Աշխատանքի անվանումը**

Ազոտի թթու, ամիակ, ազոտի օքսիդներ

Արտադրություն եվ կիրառություն, նրանց Անջատման հետ կապված գործընթացները

Ակրիլային եվ մետակրիլային թթուներ, Դրանց բարդ եթերները, նիտրիլներ

Ակրիլ նիտրիլ, մեթիլմետակրիլատի եվ այլնի արտադրություն ու կիրառություն

Արոմատիկ շարքի ամինո- նիտրո, նիտրոզո, նիտրոքլոր միացություններ

Տրինիտրոտոլուոլի, դինիտրոքլորբենզոլի Դինիտրոֆենոլի, անիլինի, դիտրոբենզոլի և այլնի, ուրոտրոպինի արտադրություն և կիրառություն

Ճարպային շարքի  
ամինամիացություններ և  
դրանց ածանցյալները,  
էթիլենամին և այլ  
ամինամիացություններ

Արտադրություն և կիրառու-  
թյուն

Բարիում եվ դրա միացու-  
թյուններ

ա) բարիումի լուծելի միացու-  
թյունների արտադրություն եվ  
դրանց կիրառությունը  
բ)բարիումի անլուծելի միացու-  
թյունների արտադրություն եվ  
դրանց կիրառությունը

Առոմատիկ շարքի անուններ,  
բենզիդին և դրանց միացու-  
թյունները, դիանիզիդին  
տոլուիդին եվ դրա միացու-  
թյունները, նաֆթիլամիններ

Արտադրություն եվ կիրառու-  
թյուն, ներառյալ լաբորատոր  
աշխատանքները, դրանց  
հիմքի վրա ստեղծված  
ներկերի կիրառությունը

Բենզոլ եվ դրա ածանցյալներ  
(տոլուոլ, ֆսիոլ, ստիրոլ եվ  
այլն):Արոմատիկ շարքի  
Հալոգեն ածանցյալներ:  
Բենզոլի հոմոլոգներ,քլորային  
բենզիլիդեն

ա) Բենզոլի արտադրություն և  
կիրառություն  
բ) Բենզոլի հոմոլոգների և  
ածանցյալների (իզոպրոպիլ-  
բենզոլի, ստիրոլի, տոլուոլի և  
այլն) արտադրություն և  
կիրառություն:

Ազոներկեր, անտրախինոնա-  
յին, ֆտալոցիալինային  
ներկեր

Արտադրություն և կիրառու-  
թյուն

Բերիլիում և նրա միացու-  
թյուններ

Մետաղական բերիլիումի և  
դրա միացությունների



	բովանալարնուրդի նախապատրաստում, բերիլիումի օքսիդից պատրաստված խեցեգործա- կան Առարկաների մեխանիկական մշակում, բերիլիում պարունակող համաձուլվացքների արտադրություն և կիրառու- թյուն
Բետա -նաֆթոլ	Արտադրություն և կիրառու- թյուն
Բոռմ և դրա միացություններ	Արտադրություն և կիրառու- թյուն
Ճարպային շարքի ածխաջրածինների հալոգեն ածանցյալներ	Դիքլորեթանի, քառաքլորային ածխածնի, վինիլ քլորիդի, քլորայի մեթիլի, քլորոֆորմի բրոմ էթիլի, երեքքլորէթիլենի, քլորոպրենի և այլնի արտադրություն ու կիրառու- թյուն (ներառյալ լաբորատոր աշխատանքներ )
Հիդրազին և դրա միացու- ցուններ	Արտադրություն և կիրառու- թյուն
Դեմեթիլ-ֆորմամիդ, դեմեթիլացետամիդ և ճարպաթթուների այլ ամրոններ	Արտադրություն և կիրառու- թյուն

Իզոցիանատներ	Արտադրություն և կիրառություն
Արհեստական և սինթետիկ թելեր	Ա)արտադրություն Բ)մեխանիկական վերամշակումներ, ներկում Գ)ճարպատոզորիչների պատրաստում և դրանց կիրառությունը
Կադմիում և դրա միացություններ	Արտադրություն և կիրառություն
Կոքսազագ և կոկսացման այլ արգասիքներ	Կոկսի և կոկսազագի արտադրություն, կոկսացման արգասիքների որսում, որսածածխաջրածինների կրկնաթորում, քարածխային խեժերի թորում և վերամշակում կոկսաքիմիական ործորոններում
Միլիցիումի օրգանական միացություններ և դրանց հիմքով ճարպատոզորիչները	Արտադրություն և կիրառություն
Լիթիում և դրա միացություններ	Արտադրություն և կիրառություն
Մանգան և դրա միացություններ	ա)Մանգանի օքսիդների, եռակցման նյութերի (էլեկտրոդների, փոշեկից մետաղալարի, լցանյութերի)

	<p>արտադրություն և կիրառություն: Մանգանային մետաղների և 10% ավել մանգան պարունակող այլ մետաղների հալում, մանգանի օրգանական միացությունների արտադրություն:</p> <p>բ) Հանքի արդյունահանում և վերամշակում, մանգանի օրգանական միացությունների օգտագործում:</p>
Մեթանոլ	Արտադրություն և կիրառություն, նրա ազատման հետ կապված գործընթացներ
Մկնդեղ և դրա միացություններ	մկնդեղի օրգանական և անօրգանական միացությունների արտադրություն և կիրառություն, դրա արտազատման հետ կապված գործընթացներ
Նիկել և դրա միացություններ	Արտադրություն և կիրառություն
Վուլկանացման օրգանական արագարարներ, խթանիչներ, հնացումը կանխող նյութեր և այլն	Կապտաքսի, ալտաքսի, թիուրամի, նեոզոն Դ-ի և այլնի արտադրություն և կիրառություն
Ջրածնի գերօքսիդ	Արտադրություն և կիրառություն

Պեստիցիդներ

Քլորորգանական,  
ֆոսֆորորգանական,  
կարբամինային թթվի  
ածանցյալներ, մետաղորգանա-  
կան և այլ պեստիցիդների  
արտադրություն և կիրառու-  
թյուն, այդ թվում՝ պահպանում  
պահեստներում և վաճառք

Պլատինե մետաղներ, ոսկի,  
արծաթ, դրանց միացություն-  
ներ և համաձուլվացքներ

Արտադրություն և կիրառու-  
թյուն

Սահմանային և ոչ  
սահմանային ածխաջրածին-  
ներ

ա)Նավթի արդյունահանման  
ժամանակ հորատանցքերի և  
սարքավորումների շահագոր-  
ծում, վերանորոգում, բարձր  
ծծմբային նավթերի, բնական  
գազի, պիրոբենզոլի վերամշա-  
կում, յուղերի սելեկցիոն  
մաքրում, պիրոլիզ, նավթի և  
գազի մաքրում ծծմբաջրածնից,  
նավթաամբարների մաքրում,  
էքստրակցիոն օզոնների տա-  
յին արտադրություն, զանա-  
զան սինթետիկ նյութերի  
(ֆենոլի, ացետոնի, սինթետիկ  
ճարպաթթուների և  
սպիրտների) արտադրություն  
և այլն: Նմուշառման, միջան-  
կյալ և վերջնական  
արտադրանքների, հումքի  
լաբորատոր վերահսկման

(բարձր ծծմբային նավթեր, բնական գազ) հետ կապված օժանդակ գործընթացներ: Բ) Հորատանցքերի շահագործում և վերանորոգում՝ նավթի արդյունահանման ժամանակ սակավ ծծմբային նավթերի և բնական գազի վերամշակում, ավտո և ավիայուղերի ռեգեներացիա, գործընթացներ՝ կապված սահմանային և ոչ սահմանային ածխաջրածինների անջատման և կիրառության հետ (պոլիէթիլենի, դիվինիլի, իզոպրենի և այլնի արտադրություն), բիտումի, յուղերի, պարաֆինների արտադրություն և դրանց կիրառությունը: Բոլոր օժանդակ գործընթացները՝ կապված հումքի, միջանկյալ և վերջնական արտադրանքների (սակավ ծծմբային նավթեր, բնական գազ) նմուշառման և լաբորատոր վերահսկողության հետ:

Հազվադեպ հողալկալի տարրեր

Հազվադեպ հողալկալի տարրերի և դրանց միացությունների փոշիների անջատման հետ կապված արտադրություն

Մնդիկ և դրա միացություններ

ա) Մնդիկի արդյունահանում, հալում և այլ գործընթացներ՝ կապված դրա ստացման և խառնուրդներից մաքրման հետ, կիրառությունը՝ ոսկու և այլ մետաղների կորզման համար, սնդիկային ջերմաչափերի, լյումինեսցենտային լամպերի և այլ ֆիզիկական ու լուսատեխնիկական սարքերի, ներկերի, սնդիկօրգանական միացությունների արտադրություն, սնդիկային էլեկտրոլիզով արտադրություն: Բաց սնդիկի հետ շփումով սարքերի հետ աշխատանք, շառաչող սնդիկի արտադրություն, աշխատանք սնդիկային ուղղիչների, էլեկտրահոսանքի փոխարիչների, պոմպերի հետ, քիմիական գործընթացներում որպես կատալիզատորների կիրառություն, սնդիկօրգանական միացությունների կիրառություն:

բ) Փակ սնդիկով սարքերի արտադրություն և շխատանք դրանց հետ, շառաչող սնդիկի օգտագործում ստորգետնյա հանքավայրերում, աշխատանք սնդիկային ամալգանների հետ ատամնաբուժական

կաբինետներում, սնդիկ պարունակող դեղագործական և կոսմետիկական պատրաստուկների արտադրություն:

Կապար և դրա անօրգանական միացություններ

ա) Կապարի ձուլում հանքանյութից և խտանյութերից, կապար պարունակող պիգմենտների, սպիտականերկերի, քրոմաներկերի ստացում, փակ տարածություններում կապարով մետաղապատում, արտադրանքի գլանում, մամլում, կապարապատում, կապարի մեխանիկական և ձեռքով վերամշակում, ազլումերացիա, առանցքակալների լցաշաղախում, կապար պարունակող ներկերի, գլազուրների, ջնարակի արտադրություն, կապար պարունակող ապակիների և ապակե թելերի արտադրություն և վերամշակում, կապար պարունակող նախաներկով ծածկված մակերեսների եռակցում և կտրում, ներկարարական աշխատանքներ կապարային ներկերի մշտական կիրառությամբ. արտադրանքի պատրաստում

կապարից: Պիեդոկերամիկայի  
և ապակեբյուրեղային  
ցեմենտի արտադրություն և  
կիրառություն:

բ) Կապարի հանքաքարի  
հարստացում, ջարդման, խառման  
և այլն գործընթացներ՝  
կապարի սուլֆիդ պարունակող  
փոշու առաջացմամբ, ոչ  
մեծ քանակությամբ կապարի  
ձուլման, գոդման աշխատանքներ,  
պոլիգրաֆիական արտադրություն  
(լինոտիպային աշխատանքներ,  
ձեռքով շարվածք և այլն):

Սելեն, տելուր և դրանց  
փափուկություններ

Արտադրություն և կիրառություն

Ծծումբ և դրա փափուկություններ

Ծծմբօրգանական փափուկությունների,  
սուլֆոնատային ձուլախառնվածքների, մեթիլ  
ծծմբային փափուկությունների,  
ծծմբային և ծծմբական թթուների  
արտադրություն և կիրառություն,  
ծծմբային և ծծմբական անհիդրիդի,  
ծծմբաջրածնի անջատման հետ  
կապված

Ծծմբաածխածին

Արտադրություն, կիրառություն,  
դրա անջատման հետ կապված  
գործընթացներ



Ցիանական միացություններ

Ցիանաջրածնական թթու, դրա միացությունները, ցիանամիդներ և այլն

Արտադրություն և կիրառություն

Մինթետիկ կաուչուկ

Մինթետիկ կաուչուկի արտադրություն և դրա վերամշակում (ռեզինի խարնուրդների պատրաստում, ռեզինի վուլկանացում)

Լվացող սինթետիկ նյութեր

Սուլֆանոլի, ալկիլամֆոնների, նատրիում սուլֆատի արտադրություն, պարաֆինային ածխաջրածինների ֆրակցիաների քլորոցում և այլն

Մինթետիկ խեժեր և պլաստմասսաներ՝ հետևյալ նյութերի հիմքերի վրա՝

Ստիրոլի

Պոլիմերների և սուպոլիմերների հիմքերի վրա պոլիէթերային խեժերի, լաքերի և սոսինձների, ապակե պլաստիկների և այլնի արտադրություն: Խեժերի և պլաստմասսաների վերամշակում: Լաքերի, խեժերի, սոսինձների կիրառություն:

Տենտլ և ֆորմալդեհիդ	Խեժերի, լաքերի, սոսինձների և այլնի արտադրություն, մամլման փոշու, մամլած նյութերի վերամշակում
Միլիցիում-օրգանական միացություններ	Խեժերի, լաքերի, հեղուկ սիլիկոնների արտադրություն, պոլիմերների, մամլված նյութերի վերամշակում, լաքերի քսուքների, խեժերի և այլնի կիրառություն
Իզոցիանատների	Պոլիուրետանների, փրփուրապոլիուրետանների, պոլիմիզանյութի և այլնի, արտադրություն վերամշակում, կիրառություն
Ֆտորօրգանական միացություններ	Պոլիմերների(ֆտորոպլաստների)և սոպոլիմերների արտադրություն, ֆտորոպլաստների ջերմային և մեխանիկական վերամշակում
Վինիլ քլորիդի և վինիլիդեն քլորիդ	Պոլիմերների և սոպոլիմերների, պերքլորվինիլի, սոսինձների, լաքերի և այլն արտադրություն, խեժերի և պլաստմասսաների վերամշակում, սոսինձների, լաքերի և այլնի կիրառություն

Ակրիլային և մետակրիլային թթուներ	Պոլիմերների և սոպոլիմերների արտադրություն և վերամշակում, էմուլսիաների, լաքերի, ներկերի և այլնի կիրառություն
Ամինոթթուների երկհիմնային թթուներ, դիամիններ	Պոլիամիդների արտադրություն և վերամշակում, սոսինձների և այլնի կիրառություն
Էպիքլորհիդրին	Էպիքլորհիդրային խեժերի և դրանց հիմքի վրա պլաստմասսաների, մեկուսիչ նյութերի արտադրություն և կիրառություն
Ալիֆատիկ և ոչ սահմանային ածխաջրածինների(պոլիէթիլենի, պոլիպրոպիլենի)	Պոլիմերների և ոպոլիմերների արտադրություն և կիրառություն
Թերթաքարային խեժեր	Արտադրություն և կիրառություն, դրանց անջատման հետ կապված արտադրություն
Անտիմոն և դրա միացությունները	Ստացում, վերամշակում, կիրառություն
Թալիում և դրա միացությունները	Արտադրություն և կիրառություն, մոնոկրիստալի աճեցում
Տետրաէթիլ կապար	Տետրաէթիլ կապարի և էթիլային հեղուկի արտադրություն,

Էթիլային հեղուկի խառնումը վառելիքին, ավիա և ավտո շարժիչների փորձարկում, վերանորոգում, քանդում, լվացում, ինքնաթիռների և այլ մեքենաների լիցքավորում, ոչ մեքենայացված կայաններում էթիլացված բենզինի լցում, դատարկում նավթի բազաներում, բենզինի պահեստարաններում, լիցքավորման կայաններում սարքավորումների և տարաների մաքրում

Մետաղներ-կոբալտ, վանադիում, մոլիբդեն, տիտան, ցիրկոնիում, վոլֆրամ և դրանց միացությունները

Կոբալտի և դրա միացությունների ստացում և կիրառություն, հնգարժեք վանադիումի ստացում. Ֆերովադիումի արտադրություն, վանադիում պարունակող խարամի վերամշակում, մոլիբդենի և վոլֆրամի ու դրանց միացությունների արտադրություն և դրանց կիրառությունը, տիտանի վերամշակում, մետաղական տիտանի և դրա միացությունների վերականգնում, վոլֆրամակոբալտային համաձուլվածքների, ցիրկոնիումի և դրա միացությունների ստացում և կիրառություն:

Ուրսուլ և ուրսուլային ներկեր	Ուրսուլ և ուրսուլային ներկերի արտադրություն, մորթիների ներկում:
Դեղաբանական միջոցներ	Մորֆինի և դրա ածանցյալների դեղամիջոցային ձևերի, վիտամինների, սուլֆանիլամիտների, պիրազոլոնների, հակաուռուցքային և հորմոնային պրեպարատների, նեյրոլեպտիկների, անտիկոագուլյանտների, ցավազրկողների (ֆտորոտան) արտադրություն:
Ֆենոլներ և դրանց ածանցյալներ	Արտադրություն եվ կրիառություն
Ֆորմալդեհիդ և ճարպային շարքի այլ ալդեհիդներ	Արտադրություն եվ կիրառություն, դրանց անջատման հետ կապված գործընթացներ
Ֆոսֆոր և դրա միացություններ	Դեղին ֆոսֆորի, դրա միացությունները, ֆոսֆորօրգանական միացությունների, այդ թվում պլաստիֆիկատորների արտադրություն
Ֆտալա թթու, ֆտալային անհիդրիդ եվ դրա միացություններ	արտադրություն և կիրառություն

Ֆտոր և դրա միացություններ	Ֆտորի եվ դրա միացությունների արտադրություն և կիրառություն: Ալյումինի արդյունահանում և կիրառություն, գործընթացներ ֆտորի և դրա միացությունների անջատմամբ:
Ֆուրաններ և դրանց ածանցյալները , ֆուրֆուրոլ, տետրահիդրոֆուրան եվ այլն	արտադրություն և կիրառություն
Քլոր և դրա միացությունները քլոր պարունակող խառնուրդներ	արտադրություն և կիրառություն
Քլորնավթալին և դրա միացությունները (հալովաքս) նավթալիններ (նավթալին, քլորնավթալիններ և դրանց միացությունները, հիդրոօքսինավթոլ և նավթոլ)	արտադրություն և կիրառություն
Քրոմ, քրոմական թթու,դրա միացություններն ու համաձուլվացքները	Արտադրություն և կիրառություն (ներառյալ կողմնակի բաղադրատարրերի տեսքով քրոմ պարունակող նյութերը)

2. Սույն ցանկի 1-ին կետից բացառություն են կազմում՝
  - ա) միջնակարգ հանրակրթական, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսումնական գործընթացի նպատակով ստեղծված քիմիական լաբորատորիաներում կատարվող աշխատանքները.
  - բ) գիտական կազմակերպությունների հետազոտական (ոչ արտադրափորձարարական) լաբորատորիաներում կատարվող աշխատանքները.
  - գ) առողջապահական կազմակերպությունների ախտորոշիչ կլինիկական, քիմիական լաբորատորիաներում կատարվող աշխատանքները.
  - դ) փաթեթավորված բժշկական դեղամիջոցների վաճառքը և առաքումը.
  - ե) գրասենյակային և (կամ) օժանդակ աշխատանքները՝ արտադրական շենքերից դուրս՝ օպտիմալ աշխատանքային պայմաններում:

2. Ֆիզիկական գործոնների ազդեցության ներքո մինչև 18 տարեկան անձանց, հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց համար վնասակար աշխատանքները

**Ֆիզիկական գործոնները**

**Աշխատանքի անվանումը**

Իոնացնող ճառագայթում, ռադիոակտիվ նյութեր և իոնացնող ճառագայթման աղբյուրներ

բոլոր տեսակի աշխատանքներ՝ կապված ռադիոակտիվ նյութերի և իոնացնող ճառագայթման աղբյուրների հետ:

Ոչ իոնացնող լազերային ճառագայթներ

լազերների հետ բոլոր տեսակի աշխատանքներ

Էլեկտրամագնիսական(ռադիո հաճախականություն  
Էլեկտրական մագնիսական դաշտեր)

բոլոր տեսակի աշխատանքներ` նշված դիապազոնի Էլեկտրամագնիսական էներգիայի աղբյուրների հետ

30 մեգաՀերց-300 հեգաՀերց հաճախականությունների տիրույթի(ծայրահեղ բարձր հաճախականություն),  
30 մեգաՀերցից ցածր հաճախականությունների տիրույթի(բարձր հաճախականություն, միջին հաճախականություն, ցածր հաճախականություն, շատ ցածր հաճախականություն, ծայրահեղ ցածր հաճախականություն), մշտական Էլեկտրական և մշտական մագնիսական դաշտեր

ամեն տեսակի աշխատանքներ Էլեկտրական և մագնիսական դաշտերի աղբյուրների հետ

Արտադրական թրթռում

բոլոր տեսակի աշխատանքներ` կապված տեղային և ընդհանուր թրթռման ազդեցության հետ

Արտադրական աղմուկ

բոլոր տեսակի աշխատանքներ` կապված ինտենսիվ արտադրական աղմուկի ազդեցության, ինչպես նաև լսողական անալիզատորի նշանակալի լարվածության հետ.81 դեցի Բելլ



Ուղտրաձայն(հպումային)	աշխատանքներ ուղտրա- ձայնային դեֆեկտոսկոպների և բժշկական ապարատների հետ
Բարձր մթնոլորտային ճնշում	աշխատանքների կետներում, բարոլիցիկներում, ջրասուզա- կան աշխատանքներ
Ցածր ջերմություն	աշխատանքներ արտադրա- կան շենքերի և աշխատանքա- յին գոտու(զոնայի) օդի մշտա- կան ցածր ջերմաստիճանի պայմաններում
Բարձր ջերմություն և ինտենսիվ ջերմային ճառագայթում	ամեն տեսակի աշխատանքնե- րի մշտական բարձր ջերմու- թյան պայմաններում, ճառագայթումների աշխատանքային գոտում (թույլատրելի նշանակություն- ների վերին սահմանները գերազանցող)
Տեսողության բարձր լարվածություն	ամեն տեսակի աշխատանք- ներ` կապված տեսողության լարվածության բարձրացման հետ` ա) բարձր ճշգրտության աշխատանքների մինչև 0,15 մմ օբյեկտիվ և 0,15 մինչև 0,3 մմ օբյեկտիվ բ) լարված տեսողությամբ

աշխատանքներ 3-րդ և 4-րդ  
աստիճանի ճշտության ( 0,5-1  
մմ ) և տեսակրանին  
հետևելու և տեղեկատվության  
արտացոլման ուրիշ  
միջոցների հետ կապված  
աշխատանքներ

4. Սույն ցանկի 3-րդ կետից բացառություն են կազմում՝
- ա) առողջապահական և այլ կազմակերպություններում ախտորոշման նպատակով օգտագործվող հպումային ուլտրաձայնի սարքավորման հետ աշխատանքները.
  - բ) միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում և կազմակերպություններում 16-18 տարեկան անձանց ուսումնառության (ռենտգեն տեխնիկ,ռենտգեն լաբորանտ ) ընթացքում իոնացնող ճառագայթման աղբյուրների հետ աշխատանքները.
  - գ) արտադրական աղմուկի՝ միջին երկրաչափական հաճախականությունների օկտավային գոտիներում ձայնային ճնշման մակարդակները (դԲ), ձայնի համարժեքային մակարդակի (դԲԱ) հիգիենիզ նորմերի սահմաններում կատարվող աշխատանքները:  
Արտադրական աղմուկի՝ մինչև 80 դեցի Բելլ պայմաններում անհատականպաշտպանիչ միջոցների պարտադիր կիրառմամբ կատարվող աշխատանքները՝ բացառելով ուղեկցող այլ գործոններ.
  - դ) ոչ արտադրական (գրասենյակային) և (կամ) օժանդակ աշխատանքները՝ արտադրական շենքերից դուրս՝ օպտիմալ աշխատանքային պայմաններում.

- ե) 1-ին և 2-րդ աստիճանի ճշտության լարված տեսողությամբ աշխատանքները:
5. Կենսաբանական գործոնների ազդեցության նորքո մինչև 18 տարեկան անձանց, հղի և միջև մեկ տարեկան երեկա ինամոդ կանանց համար վնասակար աշխատանքները:

**Կենսաբանական գործոնները**

**Աշատանքի անվանումը**

Հակաբիոտիկներ

Արտադրություն

Արդյունաբերական սնկեր, սպիտակուցավիտամինային խտանյութեր, (ՄՎԽ) կերային խմորասնկեր, համակցված անասնակերեր

Արտադրություն և մանրէային սինթեզի արգասիքների կիրառություն

Ֆերմենտային պատրաստուքներ, կենսախթանիչներ

Արտադրությունը և կիրառությունը դեղատնային կազմակերպություններում, գյուղատնտեսության մեջ և այլ բնագավառներում

Ախտորոշման և բուժման ալերգեններ, արյան պատրաստուկներ, իմունոկենսաբանական պատրաստուկներ

Արտադրություն

Ախտածին և պայմանական ախտածին մանրէներով և հելվիթներով վարակված նյութ

Աշխատանք՝ մանրէներով վարաքված նյութի հետ շփմամբ, աշխատանք՝ հերմիթներով վարակված նյութի և վարակիչ հիվանդությունների հետ շփմամբ

- |                         |  |
|-------------------------|--|
| Բրուցելիոզի հարուցիչներ | Կենդանական ծագման հումքի և մթերքների վերամշակման կազմակերպություններ՝ անկախ բրուցելիոզի նկատմամբ էպիզոտիկ վիճակից                  |
| Քյու տենդի հարուցիչներ  | Քյու տենդով անապահով տարածքների, քյու տենդով հիվանդ գյուղատնտեսական կենդանիների հումքի և մթերքների վերամշակման կազմակերպություններ |
6. Սույն ցանկի 5-րդ կետից բացառություն են կազմում՝
- ա) փաթեթավորված կենսաբանական պատրաստույթների վաճառքը առաքումը.
  - բ) վարակիչ հիվանդություններով հիվանդ կենդանիների հետ շփումը բացառող անասնաբուժության, անասնաբուժության ոլորտների, կենդանաբանական այգում, կրկեսի, վակարիումի հետ կապված աշխատանքները.
  - գ) գրասենյակային և կամ օժանդակ աշխատանքները՝ արտադրական շենքերից դուրս՝ օպտիմալ աշխատանքային պայմաններում.
  - դ) կենդանիների, կենդանիների և մարդկանց համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների նկատմամբ ապահով տնտեսություններում սանիտարահիգիենիկ անասնաբուժասանիտարական տեսակետից անվտանգ կենդանական ծագման մթերք և հումք վերամշակող կազմակերպություններում կատարվող աշխատանքները՝ պահպանելով անհրաժեշտ սանիտարահամաճարակային ռեժիմը.

- ե) բրուցելիոզի հարուցիչի՝ անկախ բրուցելիոզի նկատմամբ էպիզոդիկ վիճակից, կենդանական ծագման հումքի և մթերքների վերամշակման կազմակերպություններում կատարվող աշխատանքները՝ պահպանելով անհրաժեշտ սանիտարահամաճարակային ռեժիմը.
- զ) քյու տենդով անապահով տարածքների, գյուղատատեսական կենդանիների հումքի և մթերքների վերամշակման կազմակերպություններում կատարվող աշխատանքները՝ պահպանելով անհրաժեշտ սանիտարահամաճարակային ռեժիմը:
7. Արդյունաբերական աերոզոլների ազդեցության ներքո մինչև 18 տարեկան անձանց, հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց համար վնասակար աշխատանքները :

**Արդյունաբերական  
աերոզոլները**

**Աշխատանքի անվանումը**

Հղկանյութեր (աբրագիլներ) և հղկանյութեր պարունակողներ

Հղկանյութերի, կարբիդի, բորի, էլբերի արտադրություն, վերամշակում, սիլիցիում կարբիդի և այլնի վերամշակում և կիրառություն

Սիլիցիում պարունակող (ազատ և ամորֆ սիլիցիումի երկօքսիդ)

Լեռնահորատանցքային աշխատանքներ, հանքային, ոչ հանքային հանածոների, ածխի բաց և ստորգետնյա արտահանում, հորատանցում և դրանց վերամշակում: Սիլիցիումի, ապակու, դինասի, աերոսիլի,

սիլիցիումի կարբիդի, պղինձսիլիցումային համաձուլվացքի, սիլումինի և այլն, ձուլման արտադրություն (հողի նախապատրաստում, կաղապարում, ձուլվացքի շրջահատում, հղկում, մաքրում): Շենքերի մաքրման ավագաշիթային աշխատանքներ:

Մետաղներ և դրանց համաձուլվացքները

Մետաղների և համաձուլվացքների չոր հղկում, մետաղների փոշու ատացման գործընթացներ, մետաղական փոշիների և դրանցից պատրաստվող իրերի ստացում

Միլիկատներ և սիլիկատ պարունակողներ.

Ասբեստային հանքում ասբեստի հետազոտություն, արդյունահանում և վերամշակում:

ա) ասբեստ պարունակողներ (ասբետը 10% և ավել )

Արհեստական ասբեստի ստացում և վերամշակում: Ասբեստացեմենտի, ասբեստաբակելիտի, ասբեստառեզինի և թույլատրված ասբեստ պարունակող այլ արտադրատեսակների արտադրություն, վերամշակում:

բ) ասբեստ պարունակողներ  
(ասբեստը ոչ ավել 10% )

Ապակեթելքերի և հանքային  
թելերի, ցեմենտի, կավերի,  
շամոտի, բոքսիտի,  
մեֆելինային ապատիտների,  
քրոմագնեզիտի, կրաքարերի,  
բարիտի, ինֆուզորային հողի,  
տուֆալների, պոմզայի,  
պերլիտի, երկաթահանքային  
խտանյութերի, ազլումերատի  
(մետալուրգիայում) և այլնի  
արտադրություն և վերամշա-  
կում:

գ) այլ սիլիկատ պարունա-  
կողներ

Ածխածնայիններ

ա) Ածխի արդյունահանում,  
վերամշակում և կիրառու-  
թյուն:  
բ) Սև մրի, արհեստական  
գրաֆիտի, կոքսի ( նավթային,  
կուպրային թերթաքարային )  
արտադրություն:  
Արհեստական ալմաստների  
արտադրություն և  
կիրառություն:

Բուսական և կենդանական  
ծագման փոշի

Բամբակի, վուշի, կանեփի,  
բրդի, կենսաֆի, ջուտի,  
հացահատիկի, ծխախոտի,  
փայտանյութի, տորֆի,  
գայլուկի վերամշակում: Թղթի,  
բնական մետաքսի և այլնի  
արտադրություն:

Եռակցման ակտոզով

ա) մանգան (20%-ից ավելի) նիկել, քրոմ, ֆտորի միացություններ, բերիլիում պարունակող

բ) մանգան (մինչև 20%), երկաթի օքսիդներ, ալյումին, մոլիբդեն, վանադիում, մագնեզիում, տիտան, վոլֆրամ պարունակող

Էլեկտրաաղեղային, բոցային, գազաբոցային եռակցում, կոնտակտային, ծայրակցային եռակցում (հալեցմամբ), մետաղների էլեկտրախարամային եռակցում, պողպատների եռակցում, ձուլակցում և կտրում, չուգունի եռակցում և ձուլակցում նիկելային և նիկելապղնձային էլեկտրոդներով և մետաղալարերով, բերիլիումի և նրա համաձուլվացքների եռակցում ու կտրում ածխածնային, այդ թվում՝ ցինկապատված պողպատների, ալյումին, պղնձի, տիտանի և դրանց հիմքով համաձուլվածքների եռակցում, ձուլակցում և կտրում, չուգունի եռակցում, ձուլակցում և կտրում երկաթային և երկաթավանդիումային էլեկտրոդներով և մետաղալարերով

8. Սույն ցանկի 7-րդ կետից բացառություն են կազմում գրասենյակային և (կամ) օժանդակ աշխատանքները՝ արտադրական շենքերից դուրս՝ օպտիմալ աշխատանքների պայմաններում:
9. Մինչև 18 տարեկան անձանց, հղի և մինչև մեկ տարեկան երեխա ինամող կանանց համար ծանր աշխատանքները:



8. Սույն ցանկի 7-րդ կետից բացառություն են կազմում գրասենյակային և (կամ) օժանդակ աշխատանքները՝ արտադրական շենքերից դուրս՝ օպտիմալ աշխատանքների պայմաններում:
9. Մինչև 18 տարեկան անձանց, հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց համար ծանր աշխատանքները:

**Ֆիզիկական  
ծանրաբեռնվածությունը**

**Աշխատանքի անվանումը**

Մինչև 18 տարեկան անձանց համար 15կգ-ից ավելի, Հղի և մինչև մեկ տարեկան երեխա կերակրող կանանց համար 5 կգ և ավելի

Տեղային ֆիզիկական ծանրաբեռնվածության դեպքում (առավելապես ձեռքերի և ուսահողի մկանների մասնակցությամբ ) բեռի տեղափոխում մինչև 1 մ հեռավորության վրա

Մինչև 18տարեկան անձանց համար 15կգ-ից ավելի

Ընդհանուր ծանրաբեռնվածության դեպքում (ձեռքերի, մարմնի, ոտքերի, մկանների մասնակցությամբ ) 1-5մ հեռավորությամբ բեռի տեղափոխում

Մինչև 18 տարեկան անձանց 10-ից ավելի, Հղի և մինչև մեկ տարեկան երեխա կերակրող կանանց համար 3-ից ավելի

Ընդհանուր ծանրաբեռնվածության դեպքում (ձեռքերի, մարմնի, ոտքերի, մկանների մասնակցությամբ ) 1-5մ-ից ավել հեռավորությամբ բեռի տեղափոխման դեպքում

Մինչև 18 տարեկան անձանց 10կգ-ից ավել, Հղի և մինչև մեկ տարեկան երեխա կերակրող կանանց համար 5կգ-ից ավել

Ձեռքով բարձացվող և տեղափոխվող բեռի զանգվածը(կգ)ծանրության բարձրացում և տեղափոխում (միանվագ)՝ մշտական աշխատանքային հերթափոխի ընթացքում

Մինչև 18 տարեկան անձնց 30կգ-ից ավելի, Հղի և մինչև մեկ տարեկան երեխա

Հերթափոխի յուրաքանչյուր ժամվա ընթացքում տեղափոխվող բեռների գումարային զանգվածը աշխատամակերեսից

Կերակրող կանանց համար 15կգ-ից ավելի

Մինչև 18 տարեկան 50 կգ-ից ավելի, Հղի և մինչև մեկ տարեկան երեխա կերակրող կանանց համար 10 կգ –ից ավելի

Հերթափոխի յուրաքանչյուր ժամվա ընթացքում տեղափոխվող բեռների գումարային զանգվածը հատակից

Մինչև 18 տարեկան անձանց, Հղի և մինչև մեկ տարեկան երեխա կերակրող կանանց համար

Հերթափոխի ժամանակի 50% և ավելի դեպքերում կանգնած դիրքում գտնվելը հերթափոխի ժամանակի 10% և ավելի դեպքերում կանգնած դիրքում գտնվելը

Մինչև 18 տարեկան անձանց 3կմ-ից ավելի, Հղի և մինչև մեկ տարեկան երեխա կերակրող

Տեխնոլոգիական գործընթացներով պայմանավորված աշխատողի շարժը

կանանց համար 0,5կմ-ից  
ավելի

տարածության մեջ ըստ  
հորիզոնականի հերթափոխի  
ընթացքում

Մինչև 18 տարեկան անձանց  
մեկ կմ-ից ավելի, Հղի և մինչև  
մեկ տարեկան երեխա  
կերակրող կանանց համար 0,1  
կմ-ից ավելի

Տեխնոլոգիական գործընթաց-  
ներով պայմանավորված  
աշխատողի շարժը տարածու-  
թյան մեջ՝ ըստ ուղղահայացի,  
հերթափոխի ընթացքում

10. Սույն ցանկի 9-րդ կետից բացառություն է կազմում մինչև 18 տարեկան երեխաների ընդգրկվածությունը պրոֆեսիոնալ սպորտում, բեմական պարարվեստում և կրկեսում:
11. Զգայական, հուզական, լարվածության և ռիսկի գործոնների հետ կապված աշխատանքներ
  - 11.1. Բարձրության վրա, վերամբարձ, վերև բարձրացնելու, ինչպես նաև վերամբարձ կառույցների սպասարկման հետ կապված աշխատանքներ.
  - 11.2. 127 վ և բարձր լարվածությամբ գործող էլեկտրասարքաորումների սպասարկման, մոնտաժման, կարգավորման, շահագործման, փորձարկման, վերանորոգման հետ կապված աշխատանքներ.
  - 11.3. Անտառապահպանության, ծառահատման, անտառ փայտի առաքման, տեղփոխման և առաջնային մշակման հետ կապված աշխատանքներ.
  - 11.4. Նավթի և գազի արտադրության վերամշակման, նավթամթերքի (վառելիքի) վառելիքաքսուկային նյութերի իրացման և վաճառքի հետ կապված աշխատանքներ.
  - 11.5. Բոլոր տեսակի ստորգետնյա աշխատանքների հետ կապված աշխատանքներ.

- 11.6. Ճնշման տակ գտնվող անոթների և սարքերի սպասարկման, մոնիտաժման, կարգավորման, շահագործման, փորձարկման, վերանորոգման հետ կապված աշխատանքներ.
  - 11.7. Կաթսայատների շահագործման, փորձարկման, վերանորոգման և գազի վերահսկման ծառայության հետ կապված աշխատանքներ.
  - 11.8. Պայթուցիկ նյութերի և պայթեցման միջոցների օգտագործման, շահագործման, փորձարկման, վերանորոգման հետ կապված աշխատանքներ.
  - 11.9. Պայթունահրդեհավտանգ նյութերի արտադրության, օգտագործման, իրացման հետ կապված աշխատանքներ.
  - 11.10. Ռազմականացված պահպանության, հատուկ կապի ծառայության, գանձող ապարատի աշխատողներ, Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի և այլ պետական կառավարման մարմինների ու ծառայությունների հետ կապված աշխատանքներ.
  - 11.11. Վթարային-փրկարարական երկրաբանական-հետախուզական գործողությունների հետ կապված աշխատանքներ.
12. Սույն ցանկի 11-րդ կետից բացառություն են կազմում անտառային տնտեսություններում սեզոնային սանիտարական մաքրման և վայրի հատապտուղների հավաքման հետ կապված պլանային աշխատանքները:

## ԻՆՉՊԵՆՍ ԳՈՒՅՔԸ ՃԱՆԱՉԵԼ ՏԻՐԱԶՈՒՐԿ

Ցանկացած գույք տիրագուրկ կարող է ճանաչվել միայն դատարանի կողմից: Տիրագուրկ է համարվում այն գույքը, որը չունի սեփականատեր, կամ որի սեփականատերն անհայտ է կամ հրաժարվում է իրի նկատմամբ սեփականության իրավունքից: Շարժական գույքը տիրագուրկ ճանաչելու վերաբերյալ դիմում, շահագրգիռ անձի կողմից տրվում է իր բնակության վայրի (իրավաբանական անձին՝ իր գտնվելու վայրի), իսկ անշարժ գույքի վերաբերյալ՝ անշարժ գույքի գտնվելու վայրի քաղաքացիական գործեր քննող դատարան:

Տիրագուրկ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է ճանաչվել նաև, եթե գույքի սեփականատեր չհանդիսացող անձը տասը տարի բարեխիղճ ձևով, բացահայտ և անընդմեջ տիրապետել է այդ գույքը, ընդ որում այս անձը կարող է տիրապետման ժամկետի մեջ մտցնել նաև (այն անձի) տիրապետման ժամկետը, որի իրավահաջորդն է ինքը:

### Ի՞նչ պետք է նշվի դիմումի մեջ

Գույքը տիրագուրկ ճանաչելու վերաբերյալ դիմումում պետք է նշվեն՝

1. տիրագուրկ ճանաչվող գույքի անունը, նրա հիմնական և տարբերիչ հատկանիշները
2. ապացույցներ սեփականատիրոջ կողմից՝ առանց սեփականության իրավունքը պահանջելու մտադրման գույքը խլելու վերաբերյալ
3. ապացույցներ գույքը դիմողի տիրապետմանն հանձնելու մասին

Դատարանը վճիռ է կայացնում գույքը տիրագուրկ ճանաչելու և տիրապետող անձի սեփականությունն հանձնելու մասին.

Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է ծագել միայն կայացված վճռի հիման վրա, այդ գույքի գտնվելու վայրի ԱԳԿ-ի տարածքային ստորաբաժանումում (կադաստրի) այն գրանցելուց հետո:

## ԱՆՁՆԱԳՐԱՅԻՆ ՍԵՂԱՆ

Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիների անձնագրերը տրվում կամ փոխանակվում են Ն. Գ. մարմինների, իսկ օտարյրկրյա պետություններում՝ դիվանագիտական ներկայացուցչությունների կամ հյուպատոսական հիմնարկների կողմից: Մինչև 16 տարեկան ՀՀ քաղաքացիների անձնագրերը ստանում են նրանց ծնողները կամ օրինական ներկայացուցիչները: Մինչև 1; 3; 7; և 17 տարին լրանալը ՀՀ քաղաքացիների տրված անձնագրերի վավերականության ժամկետը 6 ամսվանից պակաս լինելու դեպքում՝ դրանք տրվում են մեկ տարով, իսկ մինչև 16 տարին լրանալը՝ 6 ամիս ժամկետով:

### **Ինչպիսի՞ փաստաթղթեր են ներկայացվում անձնագիր ստանալու համար**

ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն՝

1. սահմնված ձևի դիմում
2. ծննդյան վկայական կամ մինչև 16 տարին լրանալն ստացած ՀՀ քաղաքացու անձնագիրը
3. 35 X 45 չափի երկու գունավոր լուսանկար
4. ծնողների կամ օրինական ներկայացուցիչների նոտարական կարգով հաստատված համաձայնությունը (մինչև 16 տարին լրանալն անձնագիր ստացողները):
5. անձը հաստատող այլ փաստաթղթեր, եթե ՀՀ քաղաքացին չի կարող ներկայացնել 2-րդ կետում նշված փաստաթղթերը
6. կցագրման վկայական կամ զինվորական գրքույկ (զինապարտները)

ՀՀ քաղաքացու անձնագիրը տրվում է տասը տարի ժամկետով, ժամկետանց անձնագրերն անվավեր են և ենթակա են փոխանակման: Անձնագիրը կարող է փոխանակվել դրանում պարունակող տեղեկությունները փոխելու, գրառումներում անճշտություններ հայտնաբերելու, անձնագիրն օգտագործման համար ոչ պիտանի լինելու դեպքում: Անձնագրի փոխանակման

համար անհրաժեշտ է ներկայացնել սահմանված ձևի դիմում, 2 լուսանկար և փոխանակման ենթակա անձնագիրը:

Անձնագրի կորստյան դեպքում քաղաքացին պարտավոր է այդ մասին 10-օրյա ժամկետում տեղեկացնել ՀՀ ՆԳ. մարմիններին: Կորած անձնագրի փոխարեն մեկամայա ժամկետում տրվում է նորը, իսկ լրացուցիչ ուսումնասիրության կամ ստուգման անհրաժեշտության բացակայության դեպքերում՝ 15-օրյա ժամկետում:

### **Ի՞նչ է անհրաժեշտ քաղաքացիներին հաշվառելու և հաշվառումից հանելու համար**

ՀՀ քաղաքացիների հաշվառումը կատարվում է, ներքին գործերի մարմինների կողմից, ըստ ժամանակավոր բնակության վայրի՝ մշտական և ժամանակավոր հաշվառման համար անհրաժեշտ են՝

1. ՀՀ քաղաքացու անձնագիրը  
16 տարին չլրացածների համար ծննդյան վկայականը
2. կամ ՀՀ քաղաքացու անձնագիրը
3. ազատազրկման վայրից ազատվելու մասին տեղեկանքը (ազատազրկման վայրից ազատված անձանց համար)
4. ՆԳ. մարմինների կողմից տրված քաղաքացու անձը հաստատող այլ փաստաթղթեր (բացառությամբ 16 տարին չլրացած անձանց տրված ՀՀ քաղաքացու անձնագիրը)

Հաշվառում կատարող մարմինները փաստաթղթերի մուտքագրումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում մշտական բնակության վայր չունեցող ՀՀ քաղաքացուն հաշվառում են՝ ըստ ժամանակավոր բնակության վայրի, այն կարող է մերժվել եթե չկա գրավոր համաձայնությունը՝

- ա) բնակելի տարածության սեփականատիրոջ
- բ) պետական և ՏԻՄ-ի բնակելի ֆոնդի տներում

բնակեցնելիս՝ վարձակալների և նրա համատեղ բնակելի մակերեսի իրավունք ունեցող չափահաս անձանց.

- զ) մեկուսացված բնակելի տարածություն զբաղեցնող վարձակալի կողմից այլ քաղաքացիների բնակեցնելիս՝ բնակելի տարածության՝ սեփականատիրոջ: (բացառությամբ՝ անչափահաս երեխաներին ծնողների մոտ, ամուսիններին, անաշխատունակ ծնողներին՝ երեխաների մոտ).
- դ) խնամակալի զբաղեցրած բնակելի տարածությունում այլ քաղաքացիներ բնակեցնելիս՝ խնամակալի կամ հոգաբարձուի անչափահաս երեխաների հաշվառումը կատարվում է անկախ գրավոր համաձայնությունից ծնողներից որևէ մեկի կամ օրինական ներկայացուցիչի հաշվառման վայրում: Ըստ ժամանակավոր կամ մշտապես բնակության վայրի հաշվառման՝ վերացվելու մասին դիմումը մերժելու դեպքում հաշվառում կատարող մարմինները պետք է 3 օրվա ընթացքում գրավոր հայտնել մերժման պատճառների մասին:

ՀՀ քաղաքացիները հաշվառումից հանվում են՝

- ա) բնակության վայրը փոխելու  
 բ) զինծառայության գորակոչվելու  
 գ) ազատագրկման դատապարտվելու  
 դ) մահվան կամ դատարանի որոշմամբ մահացած ճանաչվելու  
 ե) զբաղեցրած բնակելի տարածությունն օգտագործելու իրավունքը կորցնելու կամ վտարվելու  
 զ) հաշվառման հիմք հանդիսացող փաստաթղթերն կամ տեղեկություններն իրականությանը չհամապատասխանելիս, ինչպես նաև հաշվառման հարցը լուծելիս պաշտոնատար անձանց թույլտրված անօրինականություն հայտնաբերելու .



- է) ՀՀ քաղաքացու կողմից՝ հաշվառումից հանվելու մասին դիմում ներկայացվելու մասին դիմում ներկայացվելու.
- ը) բնակելի տարածությունն օտարելիս նախկին սեփականատիրոջը և նրա ընտանիքի անդամներին հաշվառումներից հանելու մասին նոր սեփականատիրոջ կողմից դիմում ներկայացվելու դեպքերում:

## **ՏԻՄ-ԵՐԻ և ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

### **Ուլքե՞ր ունեն ընտրելու և ընտրվելու իրավունք**

ՀՀ- ում ընտրելու իրավունք ունեն 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիները, իսկ Տմբ-ի ընտրությունների ժամանակ նաև համապատասխան համայնքում առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող և փաստացի բնակվող յուրաքանչյուր ոք: ՏԻՄ-երի ընտրությունների ժամանակ ՀՀ քաղաքացիների համար նախատեսված իրավունքներն ու պարտականությունները տարածվում են նաև ՀՀ քաղաքացիություն չունեցող, բայց ընտրական իրավունքով օժտված անձանց վրա.

ՀՀ –ում ընտրությունները լինում են՝ Համապետական և տեղական ընտրություններ.

Համապետական են Հանրապետության նախագահի և համամասնական ընտրակարգով ԱԺ-ի պատգամավորների ընտրությունները, տեղական են ԱԺ-ի պատգամավորների մեծամասնական և համայնքային նշանակության (ղեկավար ու ավգանի) ընտրությունները:

ՀՀ-ում ընտրելու և ընտրվելու իրավունք չունեն

1. դատարանի վճռով անգործունակ ճանաչվածները.
2. դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկված և պատիժը կրող քաղաքացիները.

### **Ի՞նչ է ընտրացուցակը**

Ընտրացուցակը դա լիզոր մարմնի (ոստիկանության տարածքային ստորաբաժանումների անձնագրային և հրավերների բաժնի) կողմից, ըստ ընտրողների հաշվառման վայրի և հասցեների, ընտրություններին նախորդող ժամանակահատվածում, տվյալ տարածքում ընտրելու իրավունք ունեցող անձանց ցուցակն է, որն հնարավորություն է ընձեռում իրականացնելու ընտրողին իրավունք: Ընտրացուցակների ճիշտն և լիրվ լինելը ընտրելու իրավունք չունեցող անձանց

ընտրելու գործընթացից զերծ պահելու երաշխիք է: Ցանկացած քաղաքացի իավունք ունի ստորաբաժանման լիազոր մարմնից կամ ցուցակը կազմող մարմնից, դիմում տալուց հետո երեք օրվա ընթացքում, համապատասխան վճարով ստանալ ընտրողների ցուցակը: (բացառությամբ զինվ. մասերում և կալանքի տակ պահելու հիմնարկներում կազմված )

### **Ի՞նչ անել եթե ձեր անունը բացակայում է ընտրացուցակից**

Յուրաքանչյուր ոք ընտրական ցուցակում անճշտություններ հայտնաբերելու կամ ցուցակում ընդգրկված չլինելու դեպքում՝ այդ մասին ընտրություններից 7 օր առաջ դիմում պետք է ներկայացնի տվյալ Համայնքի ղեկավարին, իսկ ոչ ուշ 5 օր առաջ լիազորող մարմնին: Դիմումներն ստանալուց հետո՝ մեկ օրվա ընթացքում բավարար հիմքերի առկայության դեպքում լիազորող մարմինը ուղղում է անճշտությունները, փոփոխում կատարում ընտրացուցակում և այդ մասին գրավոր տեղյակ պահում դիմումատուին: Քվեարկությունը նախորդող 5 օրվա և քվեարկության օրն անճշտությունների վերաբերյալ վեճերը կարող են բողոքարկվել առաջին աստիճանի դատարան, որը պարտավոր է վճիռ կայացնել 3 օրվա ընթացքում, իսկ քվեարկության օրը ընտրողների ցուցակներում ընդգրկվելու մասին դիմումների վերաբերյալ՝ վճիռը կայացվում է այնպիսի ժամկետներում, որ ընտրողը հնարավորություն ունենա մասնակցելու քվեարկությանը:

Ընտրողը դատարանին դիմումի հետ պետք է ներկայացնի նաև ՏԸՀ-ի կողմից տրված տեղեկանքը՝ տվյալ տեղամասի ընտրական ցուցակում ընդգրկված չլինելու մասին և իր անձնագրի այն էջի լուսպատճենը, որտեղ առկա է հաշվառման հասցեն.

Կայացված վճիռները վերջնական և բողոքարկման ենթակա չեն:

## **ՏԻՄ- երում ընտրելու և ընտրվելու իրավունք**

Տեղական ինքնակառավարման մարմիններն են՝ համայնքի ղեկավարը և ավագանին:

Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածությունները՝ առաջադրվում են միայն ինքնաառաջադրման կարգով:

Համայնքի ավագանին բաղկացած է՝

1. 5-ը անդամից՝ մինչև 1000 բնակչություն ուեցող համայնքում
2. 7-ը անդամից 1001-ից -3000
3. 11-ը անդամից՝ 3001-ից -20000
4. 15 անդամից՝ 20001-ից ավելի

Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածության գրանցման համար անհրաժեշտ են՝

1. ինքնաառաջադրման դիմում.
2. ընտրական գումարի վճարի անդորրագիրը
3. տեղեկանք վերջին երկու տարում ՀՀ քաղաքացի հանդիսանալու մասին
4. տեղեկանք վերջին երկու տարում տվյալ համայնքում հաշվառված լինելու մասին, իսկ Երևան քաղաքի թաղային համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածության հավակնող քաղաքացին՝ տեղեկանք վերջին երկու տարում Երևան քաղաքում հաշվառված լինելու մասին: Հաշվառման և քաղաքացիության մասին տեղեկանքները հատկացնում է ՀՀ ոստիկանության տարածքային բաժինը՝ դիմելուց հետո՝ երեք օրվա ընթացքում
5. Թեկնածու առաջադրված քաղաքացու գույքի և եկամուտների հայտարարագիր:

ՏԻՄ-երի ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն նաև համապատասխան համայնքում առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող և փաստացի բնակվող անձիք:

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

### Ի՞նչ է տեղեկատվությունը

Տեղեկատվությունը դա անձի, առարկայի փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երևույթի վերաբերյալ օրինական ճանապարհով ստացված և ձևավորված տվյալներ են՝ անկախ դրանց տնօրինման պահպանման ձևից (տեքստային, էլեկտրոնային, երիզային): Տեղեկատվության ազատությանը ենթադրում է յուրաքանչյուր շահագրգիռ անձի կողմից իրեն հետաքրքրող տեղեկություն, օրենքով սահմանված կարգով փնտրելու և այն տեղեկատվության տնօրինողից ստանալու նպատակով հարցմամբ տեղեկատվություն տնօրինողին դիմելու իրավունք: Տեղեկատվության մատչելիության ապահովումը տնօրինողի պարտականությունն է :

### Տեղեկատվության տրամադրման մերժումը

Տեղեկատվություն տնօրինողը մերժում է դրա տրամադրումը եթե՝

1. պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք.
2. խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը.
3. պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները.
4. բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք).
5. խախտում է հեղինակային իրավունքը և (կամ) հարակից իրավունքները.
6. տեղեկության տրամադրման համար սահմանված գումարը չի վճարվել

## **Ի՞նչ կարգով է ներկայացվում և քննարկվում հարցումը**

Տեղեկություն փնտրելու և (կամ) դա ստանալու նպատակով անձը կարող է դիմել գրավոր և բանավոր.

Գրավոր հարցման մեջ նշվում է դիմողի անունը, ազգանունը, քաղաքացիությունը, բնակության, աշխատանքի կամ ուսումնական հաստատության գտնվելու վայրը: Գրավոր հարցումը պետք է ստորագրված լինի: Գրավոր հարցմանը չի պատասխանվում եթե՝

1. դա չի պարունակում հիշյալ տվյալները
2. պարզվում է, որ հարցման հեղինակի ինքնությանը վերաբերվող տվյալները կեղծ են.
3. դա նույն անձի կողմից նույն տեղեկություն ստանալու պահանջով վերջին 6 ամսվա ընթացքում ներկայացրած երկրորդ դիմումն է (բացառությամբ, երբ ոչ հավաստի կամ ոչ լրիվ տվյալներ են տրամադրվել տեղեկություն տրամադրած մարմնի կամ կազմակերպության կողմից):

## **Ի՞նչ ժամկետում պետք է տրվի հարցումի պատասխանը**

Բանավոր հարցման պատասխանը տրվում է անմիջապես՝ հարցումից հետո կամ հնարվորինս սեղմ ժամկետում: Գրավոր հարցման պատասխանը տրվում է հարցումը ստանալուց հետո՝ 5- օրյա ժամկետում, իսկ եթե պատասխանելու համար անհրաժեշտ է լրացուցիչ աշխատանք՝ 30-օրյա ժամկետում, որի մասին 5-օրյա ժամկետում գրավոր տեղեկացվում է դիմողին.

## Ո՞ր դեպքերում տեղեկատվության տրամադրման համար գանձում չի արվում

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման դեպքում գանձում չի կատարվում՝

1. բանավոր հարցումներին պատասխանելիս
2. մինչև 10 էջ տպագրված կամ պատճենահանված տեղեկատվություն տրամադրելիս
3. պետական և հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության, առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին ու ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանը սպառնացող տեղեկատվությունների մասին գրավոր հարցումին պատասխանելիս.
4. տեղեկությունն էլեկտրոնային փոստով (ինտերնետային ցանցերով) տրամադրելիս
5. տեղեկության տրամադրումը մերժելիս

Հանրային նշանակության կազմակերպությունների կողմից տրամադրվող տեղեկությունների համար գանձվող գումարի չափը չի կարող գերազանցել այդ տեղեկությունների տրամադրման ծախսերը.

## **ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄԸ և ԴՐԱՆԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼԸ ԿԱՍ ԶՐԿՎԵԼԸ**

ՀՀ քաղաքացիության ձեռք բերման փոփոխման և դադարեցման հարցերը կարգավորվում են ՀՀ Քաղաքացիության մասին՝ ՀՀ օրենքով: Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը ձեռք է բերվում՝

1. քաղաքացիության ճանաչմամբ.
2. ծննդով.
3. քաղաքացիություն ստանալու փիջոցով
4. քաղաքացիությունը վերականգնելու փիջոցով
5. քաղաքացիության խմբային ձեռք բերման փիջոցով
6. ՀՀ. փիջազգային պայմանագրերով նախատեսված հիմքերով
7. օրենքով նախատեսված այլ հիմքերով: Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը հաստատող փաստաթղթերն են՝ ՀՀ քաղաքացու անձնագիրը, իսկ փինչև 16 տարին լրանալը՝ ծննդյան վկայականը.

### **Ովքե՞ր իրավունք ունեն դիմելու ՀՀ քաղաքացիություն ստանալու համար**

Կարող են դիմել՝

ՀՀ քաղաքացիություն չունեցող 18 տարին լրացած և գործունակ բոլոր անձիք ինչպես նաև եթե՝

- ա) օրենքով սահմանված կարգով վերջին երեք տարին մշտապես բնակվել են Հայաստանի Հանրապետությունում
- բ) կարող է բացատրվել հայերեն լեզվով
- գ) ծանոթ է Հայաստանի սահմանադրությանը

Առանց հիշյալ պահանջների պահպանման՝ ՀՀ քաղաքացիություն կարող է ստանալ այն անձը՝

1. որն ամուսնացել է ՀՀ քաղաքացու հետ կամ ունի ՀՀ քաղաքացի երեխա
2. որի ծնողները կամ նրանցից մեկը նախկինում ունեցել



է ՀՀ քաղաքացիություն կամ ծնվել է Հայաստանի Հանրապետությունում, և որը 18 տարին լրանալուց հետո՝ 3 տարվա ընթացքում, դիմել է ՀՀ քաղաքացիություն ստանալու համար

3. որը ծագումով հայ է, այսինքն՝ ունի հայ նախնիներ

4. որը 1995 թվականի հունվարի 1-ից հետո, իր դիմումի համաձայն դուրս է եկել ՀՀ քաղաքացիությունից

ՀՀ քաղաքացիություն ստանում են ՀՀ նախագահի հրամանագրով:

### **Որոնք են քաղաքացիությունից զրկվելու հիմքերը**

Անձը ՀՀ քաղաքացիությունից կարող է զրկվել, եթե ՀՀ քաղաքացիություն է ձեռք բերել նախորդ վերնագրում նշված հիմքերով և, մշտապես բնակվելով արտասահմանում, յոթը տարվա ընթացքում առանց հարգելի պատճառների հյուպատոսական հաշվառման չի կանգնել, ՀՀ քաղաքացիություն ձեռք է բերել կեղծ տվյալների կամ կեղծ փաստերի հիման վրա.

ՀՀ քաղաքացիության մասին օրենսդրությունը խախտելով՝ ձեռք է բերել այլ պետության քաղաքացիություն.

### **Երկքաղաքացիություն**

Երկքաղաքացի է համարվում այն անձը, որն ունի մեկից ավելի պետությունների քաղաքացիություն:

Հայաստանի Հանրապետության երկքաղաքացի է համարվում այն անձը, ով Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից բացի, ունի նաև այլ պետության (երկրների) քաղաքացիություն:

Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին Հայաստանի Հանրապետության համար ճանաչվում է միայն

որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացի: Մույն նորմը տարածվում է նաև 1995 թվականի հունվարի մեկից հետո, առանց սահմանված կարգի Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս գալու, այլ պետության քաղաքացիություն ընդունած կամ ստացած, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից միակողմանի հրաժարված Հայաստանի Հանրապետության քաղաքացիների վրա:

Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացու համար նախատեսված բոլոր իրավունքները և կրում է Հայաստանի Հանրապետության քաղաքացու համար նախատեսված բոլոր պարտականություններն ու պատասխանատվությունը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով կամ օրենքով նախատեսված դեպքերի:

Հայաստանի Հանրապետության քաղաքացին այլ պետության քաղաքացիություն ընդունելու կամ ստանալու դեպքում պարտավոր է այդ մասին Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով մեկամսյա ժամկետում հայտնել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնին:

ՀՀ քաղաքացիություն ստանալու, վերականգնելու, իմբային ձեռ բերման, դադարեցման հարցերը քաղաքացիության վերաբերյալ դիմումների քննարկման հարցերը լուծում է ՀՀ նախագահը իր հրամանագրով.

# ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽԱՐՏԻԱՆ

## Նախաբան

Եվրոպայի խորհրդի անդամ երկրները՝ ստորագրելով սույն խարտիան՝

Համարելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն է հասնել առավել կուռ միասնության նրա անդամների միջև հանուն ընդհանուրի սեփականությանը կազմող նպատակների ու սկզբունքների հաղթանակի ու պաշտպանության,

Համարելով, որ կառավարության ոլորտում համաձայնությունների կնքումն այդ նպատակին հասնելուն ծառայող միջոցներից մեկն է,

Համարելով, որ տեղական ինքնակառավարման մարմինները ցանկացած ժողովրդավարական կառույցի հիմքերից մեկն են,

Համարելով, որ պետական գործերի կառավարմանը մասնակցելու քաղաքացիների իրավունքը առնչվում է Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունների ընդհանուր սկզբունքներին,

Ելնելով այն համոզմունքից, որ իրական իշխանությամբ օժտված տեղական ինքնակառավարման մարմինների գոյությունն ապահովում է արդյունավետ և միաժամանակ քաղաքացու մերձեցմամբ կառավարումը,

Գիտակցելով, որ եվրոպական տարբեր երկրներում տեղական ինքնակառավարման պաշտպանությունն ու ամրապնդումն նշանակալից ներդրում է ժողովրդավարական սկզբունքների և ապակենտրոնացված իշխանության վրա հիմնված Եվրոպայի կառուցման գործում,

Հաստատելով, որ դա ենթադրում է տեղական ինքնակառավարման մարմինների առկայությունը, որոնք օժտված են ժողովրդավարական ճանապարհով ստեղծված որոշումներ կայացնելու լիազորություններ ունեցող մարմիններով և լայն ինքնավարություն ունեն իրենց իրավասությունների,

դրանց իրականացման կարգի և անհրաժեշտ միջոցների առումով, համաձայնության եկան հետևյալի մասին.

### **ՀՈՂՎԱԾ 1.**

Կոմիտեի պարտավորվում են պահպանել հետևյալ հոդվածներն այն հոջորդականությամբ և ծավալով, ինչպես որ նախատեսված է սույն Խարտիայի 12 հոդվածում:

#### **ՄԱՍ 1.**

### **ՀՈՂՎԱԾ 2. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԱՀՄԱՆԱ- ԴՐԱԿԱՆ ԵՎ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ**

Տեղական ինքնակառավարման սկզբունքը պետք է ընդունված լինի երկրի օրենսդրությունում և հնարավորինս՝ երկրի Սահմանադրություն:

### **ՀՈՂՎԱԾ 3. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՍԿԱՑՈՒ- ԹՅՈՒՆԸ**

1. Տեղական ինքնակառավարում ասելով՝ հասկանում ենք տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքը և իրական կարողությունը՝ կանոնակարգելու պետական գործերի զգալի մասը և կառուցելու այն՝ գործելով օրենքի շրջանակներում, սեփական պատասխանատվությամբ և տեղի բնակչության շահերից ելնելով:
2. Այդ իրավունքն իրականացվում է խորհուրդների կամ ժողովների կողմից՝ ընտրված ազատ, փակ, գաղտնի, հավասար, ուղղակի և համընդհանուր քվեարկության ճանապարհով: Խորհուրդները կամ ժողովները իրենց սնօրինության տակ կարող են ունենալ իրենց հաշվետու գործադիր մարմիններին: Այս դրույթը չի

բացառում քաղաքացիների ժողովների, հանրաքվեի կամ ցանկացած այլ ձևերի դիմելը, եթե դա թույլատրվում է օրենքով:

#### **ՀՈՂՎԱԾ 4. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏԸ**

1. Տեղական ինքնակառավարման մարմինների հիմնական լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ կամ օրենքով: Սակայն այդ դրույթը չի բացառում օրենքին համապատասխան տեղական ինքնակառավարման մարմիններին առանձին որոշակի լիազորություններ տալը:
2. Տեղական ինքնակառավարման մարմինները, օրենքով սահմանված շրջանակներում, գործողությունների լիակատար ազատություն ունեն իրականացնելու իրենց նախաձեռնությունները՝ ցանկացած հարցի հետ կապված, որը դուրս չէ իրենց իրավասություններից և վերապահված չէ իշխանության այլ մարմնի իրավասությանը:
3. Պետական լիազորությունների իրականացումը, որպես կանոն, պետք է առավելապես դրվի իշխանության այն մարմինների վրա, որոնք ամենից մոտ են քաղաքացիներին: Այդ լիազորություններից որևէ մեկը իշխանության այլ մարմնին տալը պետք է արվի՝ հաշվի առնելով առաջադրված խնդրի ծավալի բնույթը, ինչպես նաև խնայողական ու արդյունավետության պահանջները:
4. Տեղական ինքնակառավարման մարմիններին տրվող լիազորությունները պետք է, որպես կանոն լիակատար և բացառիկ լինեն, դրանք կարող են վիճարկվել կամ սահմանափակվել իշխանության այլ՝ կենտրոնական կամ տարածաշրջանային մարմնի կողմից միայն օրենքով հաստատված սահմաններում:

5. Կենտրոնական կամ տարածաշրջանային մարմինների կողմից լիազորությունները պատվիրակվելու դեպքում կառավարման մարմինները պետք է, որքան հնարավոր է, ազատություն ունենան՝ դրանց իրականացումը հարմարեցնելու տեղական պայմաններին:
6. Ցանկացած որոշման պլանավորման և ընդունման գործընթացում, որն անմիջականորեն առնչվում է տեղական ինքնակառավարման մարմիններին, անհրաժեշտ է խորհրդակցել այդ մարմինների հետ, հնարավորության դեպքում է՝ անելով դա նախապես և համապատասխան ձևով:

#### **ՀՈՂՎԱԾ 5. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ**

Տեղական տարածքային սահմանազատումների ցանկացած փոփոխության դեպքում անհրաժեշտ է նախապես խորհրդակցել տեղական ինքնակառավարման համապատասխան մարմինների հետ, հավանաբար այնտեղ, որտեղ թույլ է տալիս օրենքը, հանրաքվե անկացնելու միջոցով:

#### **ՀՈՂՎԱԾ 6. ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ**

1. Իշխանության տեղական մարմինները պետք է հնարավորություն ունենան, չխախտելով առավել ընդհանուր օրենսդրական որոշումները, ինքնուրույն որոշելու իրենց ներքին վարչական կառուցվածքները այն նկատառումով, որպեսզի դրանք բավարարեն տեղական պահանջները և ապահովեն արդյունավետ կառավարումը:
2. Տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողների աշխատանքային պայմանները պետք է լինեն այնպիսի, որ հնարավոր լինի բարձր

որակավորում ունեցող կադրերի ընտրությունը՝ հիմնված փորձի և բանիմացության սկզբունքների վրա: Դրա համար անհրաժեշտ է ապահովել մասնագիտական որակավորման, վարձակալության և ծառայողական առաջխաղացման համապատասխան պայմաններ:

### **ՀՈՂՎԱԾ 7. ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ**

1. Ընտրվող անձանց կարգավիճակը պետք է ապահովի իրենց լիազորությունների ազատ իրականացումը:
2. Տեղական ընտրվող անձանց կարգավիճակը պետք է թույլ տա ստանալու իրենց լիազորությունների իրականացման համար տրվող ծախսերի համապատասխան դրամական փոխհատուցումը, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, փոխհատուցում չստացած եկամտի դիմաց կամ աշխատավարձ և համապատասխան սոցիալական ապահովագրություն:
3. Տեղական ընտրվող անձի մանդատին անհամատեղելի գործառնություններն ու գործունեությունը կարող են սահմանվել միայն օրենքով կամ հիմնարար իրավական սկզբունքներով:

### **ՀՈՂՎԱԾ 8. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ**

1. Տեղական ինքնակառավարման մարմինների ցանկացած վարչական հսկողություն կարող է իրականացվել միայն Սահմանադրությամբ կամ օրենքով նախատեսված ձևերով և դեպքերում:
2. Տեղական ինքնակառավարման մարմինների ցանկացած վարչական հսկողություն, որպես կանոն, պետք է ծառայի միայն օրինականությանը և

սահմանադրության սկզբունքներին հետևելու ապահովմանը: Այնուհանդերձ, վարչական հսկողությունը կարող է ներառել նաև վերադաս մարմինների՝ Տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների կատարման հսկողությունը:

3. Տեղական ինքնակառավարման մարմինների վարչական հսկողություն պետք է իրականացվի այնպես, որ վերահսկող մարմնի միջամտության աստիճանը համաչափ լինի այն շահերին, որոնք նպատակ ունեն պաշտպանել այդ միջամտությունը:

#### **ՀՈՂՎԱԾ 9. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ**

1. Տեղական ինքնակառավարման մարմինները իրավունք ունեն, ազգային տնտեսական քաղաքականության շրջանակներում, տնօրինելու բավական սեփական ֆինանսավորման միջոցներ, որոնք նրանք ազատորեն կարող են տրամադրել իրենց գործառույթունների իրականացմանը:
2. Տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական միջոցները պետք է համաչափ լինեն Սահմանադրությամբ կամ օրենքով տրված իրենց լիազորություններին:
3. Տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական միջոցների առնվազն մի մասը պետք է գոյանա տեղական հարկերի և հավաքագրման հաշվին, որոնց չափերը տեղական ինքնակառավարման մարմինները իրավունք ունեն սահմանել համապատասխան օրենքի շրջանակներում:
4. Այն ֆինանսական կարգերը, որոնց վրա հիմնվում են տեղական ինքնակառավարման մարմինների միջոցները, պետք է բավականին բազմազան և ճկուն



լինեն, որպիսզի, որքանով դա իրականում հնարավոր է, հետևեն ծախսերի փոփոխություններին, որոնք ծագում են տեղական ինքնակառավարման իրավասությունները իրականացնելիս:

5. Տինանսների առումով առավել թույլ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտպանությունը պահանջում է ֆինանսական համահարթեցման ընթացակարգերի կիրառում կամ հավասարազոր միջոցառումներ, որոնք ուղղված են տեղական մարմինների պոտենցիալ ֆինանսական աղբյուրների անհամաչափ բաշխման արդյունքների և նրանց ունեցած ծախսերի ճշգրտմանը: Այսպիսի ընթացակարգերը կամ միջոցառումները չպետք է սահմանափակեն տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների ազատությունը իերնց իրավասության սահմաններում:
6. Վերաբաշխվող միջոցները հատկացնելու կարգը անհրաժեշտ է պատշաճ կերպով համաձայնեցնել տեղական ինքնակառավարման մարմինների հետ:
7. Տեղական ինքնակառավարման մարմիններին տրվող սուբսիդիաները հնարավորինս չպետք է նախատեսվեն որոշակի ծրագրերի ֆինանսավորման համար: Սուբսիդիաների տրամադրումը չպետք է ի վնաս լինի տեղական ինքնակառավարման մարմինների քաղաքականությանը, չխոչընդոտի իրենց իրավասությունների ոլորտում քաղաքականության ազատ իրականացմանը:
8. Կապիտալ ներդրումների ծախսերը ֆինանսավորելու համար տեղական ինքնակառավարման մարմիններին պետք է, օրենսդրությունը պահպանելով, մատչելի լինի վարկային կապիտալի ազգային շուկան:

**ՀՈՒՎԱԾ 10. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ**

1. Տեղական ինքնակառավարման մարմինները իրավունք ունեն իրենց լիազորությունները իրականացնելիս և ընդունված օրենքի սահմաններում միավորվելու տեղական ինքնակառավարման, ինչպես նաև այլ մարմինների հետ այն խնդիրների կատարման համար, որոնց շուրջ ընդհանուր շահեր են հետապնդում:
2. Յուրաքանչյուր պետությունում պետք է ճանաչվեն տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքները՝ մտնելու միավորումների մեջ ընդհանուր շահերը պաշտպանելու տեղական ինքնակառավարման մարմինների միջազգային միավորման մեջ:
3. Տեղական ինքնակառավարման մարմիններին իրավունք է տրվում օրենքով սահմանված պայմաններում համագործակցել այլ պետությունների համանման մարմինների հետ:

**ՀՈՒՎԱԾ 11. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Տեղական ինքնակառավարման մարմիններին լիազորությունների ազատ իրականացման ապահովման և երկրի սահմանադրությամբ ու օրենսդրությամբ ամրագրված տեղական ինքնակառավարման սկզբունքների պահպանման համար պետք է ունենան դատարանով պաշտպանվելու իրավունք:

## ՄԱՍ 2. ՀԱՏՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### ՀՈԴՎԱԾ 12. ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Յուրաքանչյուր կողմը պարտավորվում է հետևյալ Խարտիայի առաջին մասի առնվազն 20 կետերի, որոնցում առնվազն 10 պետք է 333 լինեն հետևյալ կետերից.
  - հոդված 2
  - հոդված 3, 1 և 2 կետեր
  - հոդված 4, 1 և 4 կետեր
  - հոդված 5
  - հոդված 7, կետ 1
  - հոդված 8, կետ 2
  - հոդված 9, 1,2 և 3 կետեր
  - հոդված 10, կետ 1
  - հոդված 11:
2. Վավերագիրը կամ Խարտիան ընդունելու կամ հավանության մասին փաստաթուղթն ի պահ տրվելու պահին յուրաքանչյուր պայմանավորվող պետություն ծանուցում է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին սույն հոդվածի 1 կետի դրույթների համապատասխան ընտրված կետերի մասին:
3. Հետագայում ցանկացած կողմը կարող է ցանկացած ժամանակ հայտնել գլխավոր քարտուղարին այն մասին, որ պարտավորվում է հետևել սույն Խարտիայի ցանկացած այլ կետի, որը դեռ չի ընդունել սույն հոդվածի 1 կետի դրույթներին համապատասխան: Նման ավելի ուշ ընդունված պարտավորությունները, դիտվում են իբրև հայտնող կողմի վավերացման, ընդունման կամ հավանության բաղկացուցիչ մաս և ուժի մեջ են մտնում այն ամսվա առաջին օրվանից, որն հաջորդում է գլխավոր քարտուղարի կողմից ծանուցումը ստանալուց հետո եռամսյա ժամկետին:

**ՀՈՂՎԱԾ 13.** ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵ-  
ՐԸ, ՈՐՈՆՑ ՎՐԱ ՏԱՐԱԾՎՈՒՄ Է ԽԱՐՏԻԱՅԻ ԱԶԴԵՑՈՒ-  
ԹՅՈՒՆԸ

Սույն Խարտիայում բովանդակող տեղական ինքնակառավարման մարմինների սկզբունքները տարածվում են Կողմերի տարածքում գոյություն ունեցող բոլոր չափանիշների տեղական ինքնակառավարման մարմինների վրա: Մակայն վավերագիրը ընդունելու կամ հավանություն տալու մասին փաստաթուղթը ի պահ հանձնելու պահին յուրաքանչյուր կողմ կարող է նշել մարմինների այն չափանիշները, որոնք մտադիր են դուրս թողնել դրա կիրառման ոլորտից: Կողմը կարող է նաև Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի հետագայում տրվող ծանուցման միջոցով տարածել Խարտիայի ազդեցությունը իշխանության տեղական և տարածաշրջանային մարմինների այլ չափանիշների վրա:

**ՀՈՂՎԱԾ 14.** ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԶԵՌՈՒՄԸ

Յուրաքանչյուր կողմ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին հղում է ողջ անհրաժեշտ տեղեկատվությունը իր կողմից ձեռնարկված օրենսդրական որոշումների և այլ միջոցառումների մասին՝ որպեսզի համապատասխանություն լինի սույն Խարտիայի հետ:

**ՀՈՂՎԱԾ 15.** ՍՏՈՒԳՈՒՄԸ, ՎԱՎԵՐԱՑՈՒՄԸ, ՈՒԺԻ ՄԵԶ  
ՄՍՆԵԼԸ

1. Սույն Խարտիան բաց է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների կողմից ստորագրելու համար: Խարտիան ենթակա է վավերացման, ընդունման կամ հավանության: Վավերագիրը ընդունելու կամ հավանության մասին փաստաթղթերը տրվում են ի պահ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին:

2. Սույն Խարտիան ուժի մեջ է մտնում Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների կողմից, նախորդ կետին համաձայն, Խարտիային հետևելու մասին համաձայնություն տալու հայտարարությունից հետո եռամսյա ժամկետին հաջորդող առաջին օրվանից:
3. Եվրոպայի խորհրդի ցանկացած անդամ պետության համար, որն համաձայնություն է տվել միանալու Խարտիային հետագայում, Խարտիան ուժի մեջ է մտնում վավերագիրը ընդունելու կամ հավանության մասին փաստաթուղթը ի պահ հանձնելու ամսվանից հետո եռամսյա ժամկետին հաջորդ ամսվա առաջին օրվանից:

#### **ՀՈՂՎԱԾ 16. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՎԵՐԱՊԱՀՈՒՄ**

1. Խարտիան ստորագրելու կամ վավերագիրը ընդունելու, հավանության մասին փաստաթուղթը ի պահ հանձնելու պահին յուրաքանչյուր պետություն կարող է նշել տարածքը կամ տարածքները, որոնց նկատմամբ կիրառվելու է սույն Խարտիան:
2. Յուրաքանչյուր պետություն կարող է հետագայում, ցանկացած պահին Եվրոպայի գլխավոր քարտուղարին ուղղված հռչակագրով, տարածել սույն Խարտիայի կիրառումը ցանկացած այլ տարածքի վրա՝ նշելով հռչակագրում: Այդ տարածքի նկատմամբ Խարտիան ուժի մեջ է մտնում գլխավոր քարտուղարի կողմից ծանուցումը ստանալու եռամսյա ժամկետին հաջորդող ամսվա առաջին օրվանից:

#### **ՀՈՂՎԱԾ 17. ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ**

1. Կողմերից ոչ մեկը չի կարող չեղյալ հայտարարել սույն Խարտիան տվյալ կողմի համար ուժի մեջ մտնելու պահից հինգ ամսյա ժամկետում: 6 ամիս առաջ Եվրոպայի խորհրդին հղվում է նախնական

ընդ որում 2 տեքստերն էլ ունեն միևնույն ուժը, 1 օրինակով, որը ի պահ կտրվի Եվրոպայի խորհրդի արխիվում: Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը պատշաճ կերպով հաստատված պատճենն առաքում է Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետության: Ծանուցագիր. նման չեղյալ հայտարարումը չի ազդում Խարտիայի ազդեցության վրա այլ կողմերի համար՝ պայմանով, որ նրանց թիվը երբեք չպետք է 4 ամսից պակաս լինի:

2. Համաձայն նախորդ կետի դրույթներին՝ Կողմերից յուրաքանչյուրը կարող է չեղյալ հայտարարել Խարտիայի առաջի մասի նախկինում իր կողմից ընդունած ցանկացած կետ: Այդ դեպքում, երբ կետերի քանակը և չափանիշները, որոնց պետք է հետևի այդ կողմը, այլևս չի համապատասխանում 12 հոդվածի 1 կետի պահանջներին, պետք է իբրև չեղյալ հայտարարված դիտվի ամբողջ խարտիան:

## **ՀՈԴՎԱԾ 18. ԾԱՆՈՒՑԱԳՐԵՐԸ**

Եվրոպայի խորհրդի քարտուղարը ծանուցում է խորհրդի անդամ պետություններին՝

1. ցանկացած ստորագրության մասին,
2. ցանկացած վավերագիրը և կամ ընդունման և հավանության մասին փաստաթուղթը ի պահ հանձնելու մասին,
3. սույն Խարտիան ուժի մեջ է մտնելու տարեթվի մասին՝ 15 հոդվածին համապատասխան
4. ցանկացած ծանուցագրի մասին՝ ստացած 12 հոդվածի 2 և 3 կետերի դրույթներին համապատասխան
5. ցանկացած այլ ակտի, ծանուցագրի կամ հաղորդագրության մասին, որը առնչվում է սույն Խարտիային

6. Ի վավերացումն որի՝ ներքոստորոգյալներս, պատշաճ կերպով լիազորված լինելով դրա համար, ստորագրեցին սույն Խարտիան:
7. Կատարվել է 1985 թ. հոկտեմբերի 15-ին Ստրասբուրգում ֆրանսերեն և անգլերեն լեզուներով,

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ՆԱԽԱԲԱՆ</b>	<b>1</b>
<b>ԳՈՒՅՔԱՀԱՐԿ</b>	<b>2</b>
1. Ինչ է գույքահարկը	2
2. Ինչպես է որոշվում գույքահարկի չափը	2
3. Ինչպես և ում է վճարվում գույքահարկը	4
4. Ինչպե՞ս են սահմանվում գույքահարկի արտոնությունները	5
5. Ինչպե՞ս խոտանել փոխադրամիջոցը	
<b>ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ և ՎՃԱՐՆԵՐ</b>	<b>11</b>
1. Ինչ է տեղական տուրքը և ով է այն սահմանում	11
2. Ինչ է տեղական վճարը	11
<b>ԻՆՔՆԱԿԱՍ ԿԱՌՈՒՅՑ</b>	<b>19</b>
1. Ինչ է ինքնակամ կառույցը	19
2. Ինչպես օրինականացնել ինքնակամ կառույցը	19
3. Տարածագնահատման գոտիականության	20
4. Ինչպես են օրինականացվում քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերում առկա ինքնակամ կառույցները	54
<b>ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</b>	<b>58</b>
1. Ինչպես կատարել օրինական շինարարություն	58
2. Ինչ է իրենից ներկայացնում համայնքի ղեկավարի (մարզպետի) կողմից տրված առաջադրանքը	59
3. Ինչ անել առաջադրանքը ստանալուց հետո	60
4. Ավարտված շինարարական օբյեկտի նկատմամբ ծագած իրավունքը և այն գրանցելը	62
5. Ցանկ. Պետական գրանցման և տեղեկատվության տրամադրման վճարներ	64
6. Անշարժ գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղակատվության տրամադրում	72
7. Անշարժ գույքի վերաբերյալ մասնագիտական եզրակացություն և հատակագծի տրամադրում: Իրավունքների ծագման փոփոխման փոխանցման և դադարման, պետական գրանցման համար գանձվող վճարներ	77
8. Ինչպես քանդել	82



**ՀՈՂԱՄԱՍ 97**

- 1. Ինչ է վարձակալությունը 97
- 2. Հողի վարձակալություն 97
- 3. Ինչպես են կազմակերպվում մրցույթները 98
- 4. Ինչ է արվում մրցույթից հետո 100
- 5. Որ հողերը չեն կարող վարձակալության տրամադրվել մրցույթով 101

**ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 120**

- 1. Ինչ է սեփականության իրավունքը 120
- 2. Ինչ է ռենտան. 121
- 3. Օտարում 121
- 4. Ում կարող են անհատույց փոխանցվել հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը 122
- 5. Հողամասերի անհատույց տրամադրման կարգը 123
- 6. Հողամասերի օտարումն ուղիղ վաճառքի ձևով 124
- 7. Ինչ է ուղղակի վաճառք 124
- 8. Աճուրդ 125
- 9. Ինչպես է կազմակերպվում աճուրդը 125
- 11. Երբ է աճուրդը համարվում չկայացած 126
- 12. Ինչ փաստաթղթեր են ներկայացնում աճուրդին մասնակցելու համար 127

**ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ 151**

- 1. Ի՞նչ է ժառանգությունը 151
- 2. Ովքե՞ր կարող են լինել ժառանգներ 151
- 3. Ի՞նչ իրավունք ունի ժառանգատուի ամուսինը 153
- 4. Ո՞վ է անարժան ժառանգ 153
- 5. Կտակ 153
- 6. Ինչպե՞ս կազմել կտակը 154
- 7. Ովքե՞ր չեն կարող վկաներ լինել 155
- 8. Ինչպե՞ս ընդունել ժառանգությունը 156

**ՈՐԴԵԳՐՈՒՄ 157**

- 1. Ի՞նչ է որդեգրումը 157
- 2. Ովքե՞ր կարող են որդեգրել 157
- 3. Ինչպե՞ս որդեգրել 158

**ԻՆՉՊԵՄ ՎԱՐՎԵԼ, ԵԹԵ... 162**

- 1. Արածավերումներով, հեղեղումներով կամ այլ ձևով Ձեզ պատճառովել է վնաս 162
- 2. Խախտվել է Ձեր հողամասի սահմանը 163

**ԴՍՏԱՐԱՆ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ 164**

**ՆՈՏԱՐ 173**

- 1. Ի՞նչ գործողություններ է իրականացնում նոտարը 173
- 2. Օրենքով սահմանված պետուրքի վճարումներ 174
- 3. Նոտարի կողմից մատուցվող վճարովի այլ ծառայություններ 179
- 4. Նոտարական գործողություններ իրականացնող մարմիններում պետական տուրքի գծով արտոնությունները 184

**ՔԿԱԳ 188**

- 1. Ի՞նչ է անհրաժեշտ ծննդի գրանցման համար 188
- 2. Ո՞րոնք են ծննդի պետական գրանցման հիմքերը 190
- 3. Ինչպե՞ս է գրանցվում ամուսնությունը 191
- 4. Ամուսնության դադարում 193
- 5. Ամուսնության դադարումը ամուսիններից մեկի դիմումի հիման վրա 194
- 6. Որդեգրման պետական գրանցում 195
- 7. Հայրության որոշումը 197
- 8. Անվան փոխում 198
- 9. Ինչպե՞ս ՔԿԱԳ – ի գրառումներում կատարել ուղղումներ, լրացումներ, փոփոխություններ 201
- 10. Ո՞րոնք են ՔԿԱԳ գրառումներում ուղղումներ, լրացումներ կամ փոփոխություններ կատարելու հիմքերը 202
- 11. Քաղաքացիական կացության ակտերի գրանցում իրականացնող մարմիններում պետական տուրքի գծով արտոնությունները 204

**ԸՆՏԱՆԻՔ, ԱՄՈՒՄՆՈՒԹՅՈՒՆ 207**

- 1. Ովքե՞ր չեն կարող ամուսնանալ փոխյանց հետ 207
- 2. Ալիմենտ (Ապրուստի միջոց) 208
- 3. Որքա՞ն կարող է լինել ալիմենտի չափը 208
- 4. Ծնողներ --- Ձավակներ 209
- 5. Ամուսնալուծությունից հետո նախկին ամուսնուց ալիմենտ ստանալու իրավունք ունի՞ 210

6. Ամուսիններ և նախկին ամուսիններ	211
<b>ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ</b>	<b>212</b>
1. Աշխատանքային պայմանագրերի լուծումը	213
2. Գործատուն իրավունք ունի լուծել աշխատանքային պայմանագիրը՝	214
3. Կանայք	216
4. Ինչպիսի՞ աշխատանքային արտոնություններ ունեն կանայք	216
5. Ինչպիսի՞ հանգստի արտոնություններ ունեն կանայք	217
<b>ԻՆՉՊԵՊ ԳՈՒՅՔԸ ՃԱՆԱՉԵԼ ՏԻՐԱԶՈՒՐԿ</b>	<b>250</b>
1. Ի՞նչ պետք է նշվի դիմումի մեջ	250
<b>ԱՆՁՆԱԳՐԱՅԻՆ ՍԵՂԱՆ</b>	<b>251</b>
1. Ինչպիսի՞ փաստաթղթեր են ներկայացվում անձնագիր ստանալու համար	251
2. Ի՞նչ է անհրաժեշտ քաղաքացիներին հաշվառելու և հաշվառումից հանելու համար	252
<b>ՏԻՄ-ԵՐԻ և ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ</b>	<b>255</b>
1. Ովքե՞ր ունեն ընտրելու և ընտրվելու իրավունք	255
2. Ի՞նչ է ընտրացուցակը	255
3. Ի՞նչ անել էթե ձեր անունը բացակայում է ընտրացուցակից	256
4. ՏԻՄ- երում ընտրելու և ընտրվելու իրավունք	257
<b>ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ</b>	<b>258</b>
1. Ի՞նչ է տեղեկատվությունը	258
2. Տեղեկատվության տրամադրման մերժումը	258
3. Ի՞նչ կարգով է ներկայացվում և քննարկվում հարցումը	259
4. Ի՞նչ ժամկետում պետք է տրվի հարցումի պատասխանը	259
5. Ո՞ր դեպքերում տեղեկատվության տրամադրման համար զանձում չի արվում	260

**ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄԸ և ԴՐԱՆԻՑ  
ՀՐԱԺԱՐՎԵԼԸ ԿԱՄ ՋՐԿՎԵԼԸ** **261**

- 1. Ովքե՞ր իրավունք ունեն դիմելու ՀՀ քաղաքացիություն  
ստանալու համար 261
- 2. Որո՞նք են քաղաքացիությունից զրկվելու հիմքերը 262
- 3. Երկքաղաքացիություն 262

**ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ  
ԽԱՐՏԻԱՆ** **264**



ԱՍՈՂԻԿ

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:

Ֆորմատ 60x84 1/32, թուղթ՝ օֆսեթ, տպաքանակ՝ 2000

Ք. Երևան, Ղ. Փարպեցի 26/26 (գրասենյակ)

Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)

Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63

Էլ. փոստ՝ [info@asoghik.am](mailto:info@asoghik.am)

[www.asoghik.am](http://www.asoghik.am)